


771-2

L I . 5

272.4



4



15 Sept 1866  
Answered by Mr. George W. Smith  
of Boston - See



# ΣΥΖΩΣ ΣΕΣΤΡΟΣ

# ՀԱՅՆԻ ԱՐԱՐԵԱՆ

## ԱՀԳԱԾԻ ԵԿ ԲՎՐԺՈՅՆՔՆ

# Любимые птицы.

Դ. ՏԱՐՅ. 1863. Թ. Ի.

## САРЬЕРУР

— ପରିମାଣକ୍ଷେତ୍ରରେ ଯେତେବେଳେ ଏହାରେ ଆମେ ଆମର ଜୀବନକୁ ଆମର ଜୀବନକୁ

Ս Ա Ն Ք Հայքա , աշխարհիս երևանի վրայ եղաղ այն  
աղեկելին մինն ենք , որ առնելից աւելի նոր տաղիներ ենք  
թուել մեր պատմական կետնքնի մէջ , սկզբանէ անտի . բայց  
այն անհամար նոր տարիներու հետ միասնի , նոր կեանք , նոր  
վիճակ , նոր դար , նոր շրջան շատ ու շատ քիչ անդամնենք  
ունեցել մեր ազգայնութեան կենաց մէջ : Քանի քանի նոր  
տարիներ մեր զիւայ եկիլ անց են կացել և մենք միշտ հին  
ենք մատցել միշտ նշյն մաք եղին : Քբիսառնիութեան մէջ ,  
նոր տարւոյն նշանակութիւնն է , զնալ զէտի յառաջ քրի-  
տոնէկան ճշմարտութեան մէջ , զէտի հոգեկան կառավելու-  
թիւն , մի խօսքով զէտի ճշմարտութեան ճանապարհն ու  
կեանց յաւբանեական : Ազգային ընէիրուսկանութեան մէջ , նոր  
տարւոյն նշանակութիւնն է զէտի միշտ զէտի յառաջ , զէտի  
հետուն ազգային զարգացման մէջ ընկերացկան կատարելու-

թեան մէջ խելքով, մարզով, բարբով, վաղքով բանով և գործքով։ Այս երկու տեսակ նոր տարիներէն, քը իստոնէական նոր տարուց և ազգային նոր տարուց, ո՞րը մենք մեզ պիտի շընորհաւոր անհնդ այս տարի որո՞ւ համար պիտի ասենք մենք մեզ թէ արգիւնատու լինի մեզ համար, ո՞չ միոյն և ոչ միւսոյն. վասն զի այս քան ժամանակ է, որ նոր նոր տարիներ դալիս են, զնում են մեր վըայով և մենք միշտ նոյն ենք մնում, հինն ենք մնում և երբէք ոչ հոգեկանատպէս ենք նորոգու ում Քրիստոսի նոր տարւոյն հետ միասին և ոչ էլ ազգայնապէս ենք կենդանանում մեր ազգի պատմութեան մէջ դիզուած տարիներու հետ մէկ տեղ. ապրում ենք միայն իբրև մարմնաւոր մարդ և ոչ իբրև հոգեկան մարդ, իբրև ազգի անդամ. չենք զիտում մինչեւ այսօր թէ ի՞նչ է ապրիլն հոգւով սրտով, ի՞նչ է կեանք ունենալի ազգի հետ միասին։ Ապրիլ հոգեկան և մարմնաւոր զարգացողութեամբ, ապրիլ ազգային բարոյական կեանքով, ապրիլ լսատ Քրիստոնէութեան մարդկոյին ազգի հոգւոյն հետ միացած, ապրիլ բատ լուսաւորութեան ազգային կամ լնկերական հանճարով, մեզ համար շատունց է անխմանալիք բաներ են եղած. թաթխու ել ենք նիւթական միակերպութեան մէջ, թմրել է մեր հոգին անշարժունէութեան մէջ. թաղուել է մեր կեանքը անդործունէութեան մէջ, ուստի ճշմարտապէս մեզ համար նոր տարի և նոր կեանք չկայ։

**Աբդ՝** մեր ազգայնոց մասին այս խորհրդածութեան ստուզութիւնը հաստատելու համար «Հայոց Աշխարհին կոռունկը» իր անցկացած տարուայ շըջանից չու անելիս գէպի այս նոր տարուայ շըջանը, և տակաւին հանդէս զուրս չեկած իր աշխարհին ազգային, բարոյական և մատարական երկնքում, հրաւեր կիարգայ իր բոլոր լնիթերցող ազգայնոց, որ իբա հետ միասին, ուղեցոյց ունենալով իրանց՝ Հայաստանեայց հոգին, հայկական ազգայնութեան գաղափարը և ազգային ու բարոյական լուսաւորութեան սկզբունքը, վեր կենան մի անդամ և ման ածեն իրանց՝ նայուածքը անցկացած տարւոյն վրայ իմանալու համար թէ մեր ազգը ի՞նչ տարի է անցկացը ազգային և բարոյական լուսաւորութեան ձանազարհումը։

**Ինչպէս** որ ամէն մարդ, իբրև մարդ պարտական է ան-



տահարժաց յակչափակողաց չէմ իրանց արիւնը թափելով  
պաշտպանելին այս տնօքիցած տարին, այս բննետաններորդ  
զարումը ջարդ ու փշոր են ըլսում, կոտորւռմ ջարդւումներ  
այնպէս, որ իրանց ողբն ու կոծը ամրողջ եւրապիտում արշ  
ձագանք է հանում և մենք հազիւ հազենք լսում նրանց  
արդուորմ ձայնը . Ներսովիան գալիս մեր ականջեցինք փող  
է հնչում ու մենք տակաւին մեր այս կարիք ուրեցի իրօ-  
նակից և արենակից եղանակ նոր տարի և նոր կեանք մասա-  
կարարելու չենք շատում: Գէսը նշառանիք, (Քիւրտիսատա-  
նու Հայք), որոնք Քիւրտ Աւշար, Թուրքմէն և այլ թափա-  
ռական խուժաղուժ խումբերից նեղում: անջւումնեն, կո-  
ղուտուում ավանեւումն և մենք անդգայ և խուլ մեր աղ-  
դացին եղանակ ցաւալի լինակին և վշտալի կեանքին մի ճար-  
մի գարման անելու չենք փայլթ անում: Դէնը՝ Վանեցիք զորի-  
ւումն հոգեոր աղատութենից և մարմնաւոր հանդուսու-  
թենից, Մշեցիք ներքին և արտօքին զրկանքներով կոտորւռում  
թարմաւումնն, մերթ օտար թշնամիներէն մերթ եկեղեցւոյ  
աւագանիներէն և մենք մի ախտանից հասյնելու նրանց, մի տէ-  
րութիւն անելու նրանց և հոգ և բնամք չենք անում:   
որ տեղ զինանք որ տեղ նկատենք անդորրութիւն տեսնելու  
և նոր տարի և նոր կեանք վայելու համար պատրաստութիւն  
զանելու, ամէն անդ խնդութենին ամէն տեղ անտերութիւն:  
Գնուը գանք Հայուսուանեաց աշխարհէն և մանենք եկնացեա-  
ւոյն մէջ և տեմնենք, արդիօք նոր տաղի և նոր կեանք վա-  
յելու համար պատրաստութիւն կդանենք, բայց ի՞նչ միթէ  
արտօքինը ներքինին հոյելին չէ: Քիստոսի նկնդեցին չէ  
աէն մարդկային աղքի հօգւոյ յութիւննական նորոգութեան  
սրով մարդկային կեանքը ամէն օր ամէն տարի և կուգայ  
անմասհական կեանքանութեամի, արդ ինչու իր ժողովուրդն այս-  
պէս կոտայի հին տարիներում: կհայի ու կմաշի հին կեան-  
քումը, սիրտ չունի զգալու, խնլք չունի խօրհելու, ոյժ չունի  
դործելու, վասն զի լու զգալու համար իրան ոիրտ, հոգի  
շնչող չունի, լու խորհելու համար իրան խնլք ու միտք  
տուող չունի, լու գործելու համար քարողնոց սորվացնող չու-  
նի, միթէ կարելի է յուսալ որ այդ ժողովուրդը նոր տարի



տաղի ալեքն ու ը որ կամին, ան տեղ մզեն : Այս անպատճառ բանն նուն ինքն իրան թողած ամէն վայրկեան, ամէն օր և ամէն նոր տարի քարերու, խութերու և ապառաժներու խփուելով, խրուելով, խորաակուում ջարդու փշոր է լինում, իրա կաղմածն քակուում բաժանուում է, բանի պէտք չգալի, ճանապարհ չը կարողանուում անել այն տեղն է մնում, որ անդորիրուել է, փառում մաշուում է կրած հարուածներից, քիչ է մնում ծովու տակն աներեւոյթ խորասոյզ պիտի լինի և գեռ զեկոմարը կամնաւու զեղը չղարթնում, զէս ու զէն չի դիմում: Հոգս և խնամք շտանում, վաննդէն աղատելու համար պատրաստութիւն չի անում և նոր վաննդներու զէմ չի պատապարում ինքն իրան և իր նաւը, նաւաստիքը միաբանելով մի նոր զօրութեամբ շհողեսրուում չկենդանանում: Ժամանակը գալիս իրա հնար և միջոց սորվեցնուում եղանակ և կերպ է ցոյց տալիք պրծնելու այդ վասնդից, բայց նա անզդայ է ըլնում մի զերանի վրայ զրած իր յոյսը, իր զլուխն է մատածում, թողելով նաւն ու նաւաստիքը քամիներուն վշած և տարած կողմը զնան: Ու շիմ ընթերցնո՞ւ, այս վիճակումը թէ կարող ես, նոր տարւոյ հետ և նոր կեանք վայելիք, իսկ մենք մեր ընդհանուր աղշդայնոց հետ մէկուել չենք կարող: Մինչեւ որ մենք ժամանակը շնանաշենք, նրա բերած պարզեները չենք կարող վայելիք այս մի քանի ժամանակու այ շրջանումը ամէն նոր տարի մեր մէջ մի նոր բան ծնել պուաւ, աղղասիրութիւն, ուսումնասիրութիւն բառերը մեր երեակայութեան և մեր խօսակցութեան մէջ երկար ժամանակ առարկաներ եղան, ցածր ժողովրդեան մէջ զաղակար գառաւ և բարձր ժողովրդեան մէջ մի զործի անձնական օդտի և շահու համար, ցածր ժողովուրդն սկզբան այս բանս չնշմարեց, բայց յեանույեաը տեսաւ ու խմացաւ, որ այդ բարձր մարդկանց բերնումն ու զրչումը ման եկած աղգասիրութիւն և ուսումնասիրութիւն բառերը անձնական ճանապարհ բաց անելու զործի են եղել զդաց ու հասկացաւ այս և յուսահատեցաւ, և սկսաւ ծուռ խորհիլ աղղասիրութեան և ուսումնասիրութեան վրայ, ծուռ խորհելով յառաջադիմելու տեղ յետագիմեց և այս տարտամ զացողութեան մէջ մաս մինչեւ այսօր և տակուին մոռա-



է, մարդ չկայ երաշխաւորոց, և այլ հազար ու մեկ խեժութիւններ, որ մանը ամենքս էլ գիտենք, միթէ այս վիճակում նա նոր տարի և կապանդ կարող է կատարել, ուր մասց, որ նոր կեանք պիտի տեսնէ : Հայութ Երբ և Բնալիքն մեր Հայոց համար նոր տարի նոր կեանք պիտի լինի, այն ժամանակ ուշիմ ըսմբ երցնը, երբ Հայոստանեաց Ակեղեցին (եկեղեցին առաջնութաշխանեայք պէտք է իմանանք) իրա Աստուածանից յանձնուած ժողովրդեան վարելու կեանքը ինքն իր սուրբ ձեռքով կնշանակէ և կապարասատ, մնքը կդժադրէ մայր Հայրինեաց հողին վեց նոր տարի նոր կեանք վարելու յառաջադիմք, տեսանք այս բանիս նշանանքը մինչև այսօր, ընտանիններն ուրեմն ուր է մեղ համար նոր տարի նոր կեանք, Այն ժամանակ, երբ եկեղեցու բնեմիշից աղքային և բարոյական կեանքը, բայ կլինի մեր եկեղեցականաց բերնումը և Աստուած նրանց բնինով կիսուի իր ժողովրդեան սրաբն, մաքին և հոգւայն մէջ ներշնչելու, այն ժամանակ երբ աշխարհականք իրանց զրուածքներով և եկեղեցականք իրանց քարոզներով Հայկական ժողովրդեան ականջնց վեր նոր տարի նոր կեանք կաղապահեն համայստէ միաբանութեամբ, իրար զերազանցելու հոգւով, իրարժէ երեւելի գործ տեսնելու մերդով, այն ժամանակ մերին կանանքնը Հայոց աղքին նոր կեանքի և նոր տարուայ արեգական ծաղկելը, առանց սրանց, չկայ Հայոց համար աղքային և բարոյական կեանք, այլ խռովութիւն, անմիաբանութիւն, երկուականութիւն և իրքու հետեւանք խեղձութիւն, գերութիւն, տղիտութիւն, անապրբերութիւն, անզգայութիւն, անուառութիւն; Սինչե, որ բարոյական աղքայինութիւնը եկեղեցականացը չոնքմանուկ մեր մէջ, մինչև, որ Հայոստանեաց Ակեղեցին Աստուածային շնորհաց հետ միաբն ուսմունք և զիտութիւն չուր, երբէք մեր մէջ գործնական աղքայինութիւն իրքու հետեւանք յառաջ չկար, և մինչեւ, որ մեր նիւթական կեանք էլ բարսյականին և աղքայինին հետ չմիանայ, մենք նոր տարի նոր կեանք տեսնելիք չունիք և երբէք Սինիլ մեղ համար, զարդացում յառաջում, որ և է աղքային բանի մէջ և մեր մէջ; Առ զիտուականք ով աղքայինք, որ աղքային զարդացում առանց բարո-

յականի կենդանութիւն չեղունենալ ողգացին և բարոյական զարգացութել նիւթականին կարօտութիւն ունի և առանց նրա միութեանը զործ չկարող տենել։ Այս բանիս ստուգութեան համար շատ կենդանի և զգալի օրինակներ կարող ենք յառաջ բերել մեր ընթերցողներուն, օրինակի համար այս վերջին քսոն տարուայ միջոցաւմ, Հայոց ազգն երեք տեսակ եւրեկի մարդիկ ունեցաւ։ Խիստ շատ փողատէր մարդիկներ, առանց ազգային և բարոյական կեանքի և փառքի զգացողութեան։ Խիստ շատ հանճարեղ և կարովամիտ մարդիկներ, առանց նիւթական կարողութեան, ինչ օգուտ տեսաւ սրանցից Հայոց ազգն ու Հայոց Եկեղեցին, ոչինչ և ոչինչ, մանաւանդ կորուստ։ Ահա տես ինչ կեանք վարող մարդիկնեցով է կազմուած այսօր Հայոց ազգը։ Տեսնում ես այս մարդը, որ հեռուանց դալխո է փառաւորապէս, հիմնալի ձիեր լծուած հարուստ կառքում նստած, ընտիր ընտիր շոբերով հաղուած, կապուած, նա մեծ հարաստութիւն, մեծ ճոխութիւն, մեծ ժառանգութիւն վայելող մարդ է, անիին անորդի և առանց մեծ զերդատանի, և առոյդ հասակով, գործ տեսնող և բան իմացող մարդ էլ է, բայց նրա սրտում չկայ բարոյական կեանքի զգացողութիւն, նրա հոգին և միտքը ազգային վասաք, պատիւ և կեանք վայելելու համար չէ, այլ ճոխութիւն, ազգի համար նա անտարեր է, ուսումն և զիստութիւն նրա համար մուրացկանութեան միջոցներ են, ազգն իրանը չէ և ինքն էլ շատունց է զակարելազգին պատականելուց, Եկեղեցին կամ Եկեղեցականն իրան այն ժամանակ պէտք են, երբ աշխարհիս վառուոր թաղման հանդես լինի պէտք ցոյց տալ։ Իրեւ նւրու պականօրէն ապրիլը, փոքր ինչ Ֆրանսերէն խօսիլը, նոր ձեւը ըստ ու նոր կերպերով վարուիլն աշխարհիս հետ, իրան դըլ խառոր դաստիարակութիւնն է, խոկ իրա խելքի ու մոքի անպաղար զբաղմանկըն է իր ժառանգած և մի կերպով ձեռք բերած փողերուն մասին մտածել և այն։ Այս այն անձնն է, որու մօտ ոչ ազգայինը կայ և ոչ բարոյականը, հարկաւ այս պիսի անդամներով չէ, որ մեր ազգը նոր տարի և նոր կեանք պիտի վայելէ։ Տեսնու մես, այս կողմից էլ եկող այն պարզ հազուսավ մարդը, սա էլ մի ջերմ ազգասէր, բանիրուն և ի-

մասաւոն Հայք է, ամեն օր մի նոր հղանակ՝ կմասածէ ազդի զարդ գացման համար, ամեն օր մի նոր ձեռնարկութիւն կառաջ ջարկէ յօդուա և, ՚ի պայծառութիւն եկեղեցւոյ, միշտ իր ու շըն ու միաբը Հայոց նորահաս աղոց կրթութիւնն ու ուսմանքն է, ուր աեղ մի որբի կողասահի, ինքը կուզէ վեր տա և նել նրան ուսմունք և կրթութիւն տալու համար, ուր աեղ մի խեղճ Հայսատանցի կահսնէ, նրա կիամենայ իր քամիք տալ զրելէ ամեն աղջային ընկերութեանց անդամէ և ամեն օքրակրերու, և ամապիերու, և բաժանարդ, ամեն անդամ, որ աղջի օղափի համար մի ստորագրութիւն բաց կլինի, ինքն առաջինն է առատօրէն և սրանց իր բաժինը ստորագրովը, մի խօսքով ինքն իրան հոգւով, աղջին է տուել Հայու վարքովն ու բարքով աղջին իրան փառք ու պատիւ կհամարէ, միշտ ամեն Հայու հետ հոյերէն խօսելով, Հայօրէն վարուելով. Եկեղեցականք նրան մի ջերմեռանդ քրիստոնեայ ժողովութ կահսնեն, ուսումնականք նրա մի ջերմ պաշտպան ու սմանց և զպրութեանց ծաղկելուն Հայոց մէջ իր համեստ հարաւա թիւնն որ կասես, ոչ ժառանդականն է և ոչ ստացական, այլ իր մաքւը ճակարին քբանքովն է ձեռք բերած, արդար վաստակէ արել խղճմանքաւոր վաճառականութեամբ, բայց, վայ մեղ, ու շիմ ընթերցող այսպիսի անձ քանինը կարուլ ենք զանել մեր աղջին մէջ, Հայու մինը կամ երկուսը, ու ոնց պատիերն ահա քեզ նկարագրեցի, և երկուսով չէ, որ մեր ազդը կարող կլինի նոր տարի նոր կեանք աեսնել: Խոկ այն եկեղեցիից զուրա եկող խուռն բազմութիւնը ահսնեմ ես, Հայաստանաց եկեղեցւոյ ժողովուրդն է այն սոված, քաղցած է բարսիան զգացմանքներու համար, աղջային փառք պատիւ աեւնելու համար, իր յօյն իր աղուէնը միայն եկեղեցւոյն վայ է զրել այն աեղ կեթեայ որմնելու աղջային և բարյական փառաւորութիւն, այն աեղ կերթայ աեսնելու իր մէծամեծ մարդիկները, իր եղիսկասպաները, և իշխանները, այն աեղ կերթայ մի սրաւաշարժ քարող լսելու, այն աեղ կերթայ իր նախնեաց փառքերը, մոլիկ անելու, այն աեղ կերթայ վերջապէս առ բարձրեալն Անտուած ջերմեռանդ հոգւով աղջութեաւ, իր հոգւոյն և կեանքին համար նոր զօրութիւնն նոր կենա-

դանութիւն խնդրելու, այս առջ կթողաւ նաև իր չափածք  
վաստակին մի վայրիկ մասն էլ եկեղեցւոյ պայծառութեան  
համար : Ամէն առջ Հայք այսպէս ժօղովուրդ կկազմեն իրանց  
եկեղեցւոյն, բայց առաջ էլ առջ ային և բարյափառն եկանք  
չըւնին, էլ առջ ային ուսմաւնք և դպրութիւնք նրանց մէջ  
ապածուած չէ, էլ հայենասիրութեան և ուսումնանիրու-  
թեան եռանկն իրանց մէջ չի եռ զալի չի բորբոքւում,  
վասն զի նոր տարի նոր կեանք տեսած չըւնին, և նոր տարի  
նոր կեանքն էլ ուրիշ կերպով չեն կարող ընել աեսելու բայց  
միայն բարյափառն մնուղով, մտաւորական կերակրով և աղ-  
գային զարգացմամբ :

Ա) ՀԱՌ ԱՍԻԿ քեզ և մի ուրիշ Հայ մարդ էլ առ էլ իր  
ուսմամբն ու կրթութեամբը մարդկային վերջին կատարելու-  
թեան է հասցեկ ինքն իրան զրեթէ, ինչպէս որ պայծառ և  
կենդանի կերպարանք ունի, այնպէս էլ աղջու և ճարանը խօ-  
սել ունի, բարյափառն զիսութիւնը իրան կեանք են, աղջ ային  
զարութիւնք իր զիսութոր տարրական աղջն ու եկեղեցին է իր  
մտածմանց առնեաղիսաւոր նպատակը, ամէն աշխարհային և  
կրօնական զիսութիւն և ուսմաւնք ունի, կճանառչէ եւ բապիսան  
կճանառչէ և Հայաստան, տեղեակ է իր աղջի հին և նոր պատ-  
մութեանք, ամէն օր էլ ժամանակուոր անցքերն ու զեսքերն  
իմանուու եռելից է, բայց ուսումնականք, աղջառելք իրան  
կճանառչն, կյարդեն ու կպատուեն, ինչ որ կմտածէ, աղջի  
վրայ ուղիղն է, ինչ հայուածք կդարձնէ մի աղջային բանի  
վրայ ճիշդ է, իր ամէն նկատմանքերն ու դատողութիւնները  
աղջի յառաջացման համար, կարծես մի մի քարեր լինին,  
երայսուաջաղիմութեան հիմունք լինելու : Բայց առաջ, այս  
մարդն էլ կարույութիւնց զուրկ է, աղջ բառ է, վոր չըւնի, պաշ-  
տօն չըւնի, ժառանգութիւն չէ ունեցել, վաստակն հազեւ  
իրա օրական մնութին է բառում, չես ունենում ինչ համեստու-  
թեամբ է հաղուել ինչ տրտում և ախուր զեմք ունի, կարծես  
իր երեսնամեայ հասակումը վախտուն տարեկան ծերունի ըլիքի  
յուսահամութիւնը թէ և երան չէ սպանելի բայց անդորքու-  
թիւնն այսպիսի խելքով և այնպիսի հողւով մարդուն շառ  
երկար կեանք վարել չտար : Այսպիսի մարդիկներ էլ բաւա-

կանին կունենանք մեր ազգին մէջ ամէն տեղ որոնք նոր տարբ  
նոր կեանք տեսնելու հսկան և տեսնելիք չունին :

**Ա.** Համար ուշիմ ընթերցող այսօր մեր ազգն ի՞նչ ցաւալի  
հանդամանքներով է տաղակեռում տակաւին մեր մէջ նէմի վսիմ  
գաղափար, ուուրբ զդացմունք և բնական աղդեցութիւն, ինչ  
պէս սէր աղդայնութան, ջանք և եռանգ ուսմանց և գիտու-  
թեանց համար, աղդային եղբայրսիրութիւն, տղդային փառքն  
ու պատիւ սիրել քան ամէն ու բիշ վառքերն ու պատիւները  
զիւցաղնական դործքիր անել աղդաշնութեան համար, մի  
խօսքով ճշմարիտ և օրինաւոր աղդային և բարոյական գաս-  
տիարակութիւնն ու լրւաւորութիւնը տարածել հաստա-  
տել բնաւորել ընդհանուր Հայաստանին այց մէջ, այս վսիմ  
գաղափարներն ու առ բր զդացմունքներն ասում են մինչև այսօր  
մեր աղդայնոց մէջ ընդհանուր հաւասար և համաշափ տի-  
րապետութիւն չունին . իիստ տակաւը են հպատակող սրանց  
աղդեցութեանց, տակաւին աղդի մի մեծ մասը նրանց իշ-  
խանութեան ներքե չեն մտել և մեր զդալի կերպով բարս-  
յական և աղդային զարդացում չունենալու պատճառն էլ այն  
է, որ ինչպէս տեսանք, այս գաղափարներն ու զդացմունքներն  
ունեցող նիւթական կարտղութիւն չունի նրանք 'ի գործ դը-  
նելու, նիւթական կարողութեամբ զօրաւոր լինողն էլ զուրկ է  
աղդային և բարոյական զարդացման զդացողութէնից, իսկ զէնը  
մնացած ժողովրդեան մասին մէջ էլ տակաւին այն աղդ շի-  
նող և եկեղեցի պայծառացնող բարյական և աղդային տարեցն  
արմատ չեն բռնել, հիմունք չեն թողել, չեն մարմնաւորուել  
և բնաւորուել. ուրեմն կարելի՞ է պահանջնել մեզ նման մի ո-  
ղորմելի ժողովրդեան համար նոր տարի և նոր կեանք, ոչ ոչ  
մեզ համար չկայ նոր տարի և նոր կեանք, մինչև որ մեր մէջ  
ամեն տեսակ զարդացում ի մի նպատակ զիմելու ձգառում  
չունենայ, այսինքն, եպիփառուս, վարդապետ, քահանայ, պաշ-  
տօնական, վաճառական, կալուածաեր, արհեստաւոր, ուսում-  
նական, գաստիարակ, զրադէտ և այլ ամէն կարդի և պաշանի  
Հայ մարդիկ իրար չե գրկեն մի գաղափարով, իրարու ձեռք  
չտան, չըռնեն մի զդացմունքով, թէ աղդայնապէս և թէ  
բարոյական, չենք տեսնել նոր տարի նոր կեանք. այս բանս եւ,

միայն հայրենեաց մէջ և Հայոց մէջ կարիլի է։ Հայն Հայու մօտ կլինի Հայ, այն տեղ իր Հայութինը ովհաք է որ ցոյց տայ իր բարքովն ու վարքովը, իր բանովն ու զործքովը և եկեղեցւոյն կալատկանի այս կատը մեր մէջ հասաւատելու, երբ այս բաներս դլուխ կուգան, ահա և այն ժամանակ Հայոց աշխարհն իր որդիքներավնոր տարի և նոր կեանք կաւանէ։

**Սբդ՝** զիմենք, ներկայ նոր տարւոյ սպառաւով առ բարձրեալն Աստուած, խնդրենք ամենքս միասին, որ նոր տարւոյ հետ մրանել և մի այցելութիւն անի մեր մէջ մեր բարոյական կեանքն Աստուածոյնով նորոպելու, կենդանացնելու և ըստ իրա նախախնամութեան օրինացը տնօրինելու մեր եկեղեցին, մեր աղդային վիճակը և այլ մեր ամեն զրութիւնները։

**Վեծ է** յոյսը «Հայոց աշխարհի Կանկան», որ ներկայ 1863 թուականում չու անելիս իր հայրենեաց երկնքում։ իր աշխարհին համար աղդային և բարոյական կենաց ծաղման արշալոյսը նշմարէ հորիզոնին վըայ, և Հայկական նոր տարւոյն և նոր կենաց ծաղմումը մաղթէ աւետելով ամեն աղդայինց։

Մարկոս Աղաբէզեան։



## ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՄԵՐ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՆ

ՆԵՐԿԱՅ ՏԱՐԻՈՅ ԱՄՄԱԿՐՈՅ ՄԱՅԻՆ

Ներկայ 1863 թուականի ամսաղրոյս հրատարակութեան համար մեր բանելու ուղղութեան ընթացքին վրայ մի քանի բան խօսելու հարկաւոր ենք համարում հինգ այս առաջին անարակութը։ Սեբ յայտարարութեան մէջ արած խստամունքին համեմատ, մեր ամսաղրոյն առաջին և դլխաւոր նպասամիկը պիտի աղզիս մասւոր զարդացման համար նպաստաւոր յօդուածներ հրատարակել, ինչորես են պատմութիւն, պատմական տեսութիւններ, դաստիարակութիւն և այլ սպասուէտ զրուածքներ, թէ աղզային խնդիրներու մասին և թէ աղդային կեանքի համար, Բայց մեր ընթերցովներից ումանք մի թերութիւն են զանում առ հասարակ մեր ամսաղրոյն նվաթերու մասին, եթէ թերութիւնը կարելի է առել, այն է, մեր ընթերցովներուն ընդունակութեան նայելով մեր նիւթերուն բարձր վնասն և զրտածքներն ել խրթին, սահկացն մենք այդ նկատութիւնը, մեր աղդայինց խիստ մեծ մասին ըն։

զունակութեանը կամ հմտութեանը նոցելով ճշմարիս էլ համարենք, զենք կարող չխռապավանիլ, ինչպէս համկացող հմտաներն էլ կլլացեն, որ մեր ամսադրայն նիսթերը մեծ մասամբ հասարակ նիսթեր են և դրաւածքներու ոճն կերպն էլ թէպից անուա և սույստ ժողովրդեան Ծրգուից մի փոքր ապրեր, բայց ոչ արաւասական և ոչ էլ մասեանադրական, այլ այնշափ միայն ապրեր, սրչափ այնպիսի նիսթերու վրայ խօսիլը կապահանջի, սովորայն մեր բաժանորդներից շատերը մանաւանդ նրանք, որ սովորութիւն են արել իրանց՝ անընդհատ կարդալու մեր ամսադրից (և սրանք ըստ մեծի մասին Հայտասանցիք են կոմ օտար քաղաքներից) մալից շատ անուած խնդրել են, որ մեր նիսթերու և զրուածքներսն մէջ ամենեան վասփոխութիւն չանենք,

Ենց ձամբաց բանենք մի ացապիսի զրութեան մէջ, մեղ երեսումէ որ ճշմարիսն առելով այս տեղ, նրանք են զա մեր ամսադրայն նիսթերից և դրաւածքնեցից, որ կարդամ են և համկանում, և նրանք են թերութիւն զանուզ, որք կամ չեն կարդամ, կամ թէ ոչ, կարդալու սովորութիւն չոնին ամենեան մի աղդային օրոպիր, իրանց է, որ մեր աղդայնոց մէջ ընթերցողներուն ընդո նակութիւնը մի օրինակ չէ, ոսարի ամենան միաբն ու համկացողութիւնը մի և նոյն կերպով հաճուացնելն էլ մեղ համար խնան զժաւար բան է, բայց մենք պարագա պիտի զննիք մեր վրայ, եթէ կարելի է մեր ամսադրայն օգտակար անել, մեր այս ապրուայ բանելու լիթացին մէջ, աշխատ ելուի, որ նիսթերն ու դրաւածքները կարմէի եղածին չափ զիւրըմբանելի լինին շատերուն և մանաւանդ նրանց, որ մինչեւ այսօր մեր ամսադրայն մէջ մը ութիւն և բարձրութիւն են զանուում, Սակայն խնդրում ենք և մենք մոր կողմանէ, որ իրանք էլ իրանց կազմանէ սիրեն մի փոքր Հայոց օրոպիրներ կարդալը, սովորութիւն չինն իրանց իրանց աղդայնոց մէջ գոնուած մրտքերն ու զրինքը ճանաչելու և խմանալու, նրանց վրայ մի փոքր միաք անելու և այնովէսով էլ աղդային նոր լեզուի ոներու դարձուածներու համ էլ ընանշանալու, եթէ այնքան վախտադրք լինի պարագականաւութիւնը, չուսանք, որ երկու կողմանէ էլ մենք մեր նոպատական համարնը,

Աղջային պատմութիւնը, ովքափ լինի տառապինք, մեր ամսադրայն այս տարուած հրատարակուծ յօդուածները, և այս աեսակ զրուածքները խնատ օգտակար բանն են ամենան, մանաւանդ մեր աղդայնոց և մենք մասնաւրապէս չանք պիտի անենք, որ մեր ընթերցողներուն ուշադրութիւնը կարելի եղածին չափ այս հարկաւոր աստրեափին վրայ դարձնենք, կու զիսենանք, որ քանի որ մեր մասւոր մշտկութիւնը սուանաւուներ թեթև մ.թէ զրուածքներ յառաջ բերելու, վլլի վերոյ ճառեր, ներբառներ յօրինելու և այլ չեմ խմանում ինչ աեսակ քամաւ հման խօսքեր, իմաստներ չարազընելու վրայ կեայանաց, մեր տառմանկանու-

թիմը շնորի դարդու կնմանի, և հասաւառուն բան չլինի և կդառնայ այն զեղեցիկ կանանց նման, որոնց բոլոր սիրունութիւնը մի քանի փողի մոգուրովէ և այն երխաւասարդաց, որոնց բոլոր դասախարակութիւնը իրանց արտաքին չարերուն վայեջութեան և արժուութեան մէջն է։ Պատմութիւնը այն հարկաւոր ուստանեցն է, որ մարդուն անցկացած դեօլքերու և անցքերու վրայ անզեակ կանէ։ Խրու է անդադան ճանաչելը մեղ տառած չէ, բայց միթէ ուստան և պիտութեան ուժով չնեք կարող աղդացին իրերու վրայ քիչ չառ ճշմարիս կամ հաւանական անուաթիւն ունենալ, հարկաւ կարող կլինիք երբ անցելոցն եւ ներկացին վլա կատարեալ անզեակ թիւն ունենանք։ Արդեմն լաւ է որ մենք անդադար մեր հին և նոր աղդացին պատմութիւնը կարդանք, քննենք, զննենք, մնեննենք և ինչպէս մի լոյս, մի յայս կարգանանք մեր առաջը ո նենալ մեր որոնելու ճանապարհում աղդացին և բարոյական լուսաւորութեան մէջ։

Մեր աղդացին ուստանաւերներն ու ուսումնականները, ոյնք օրէ ցօր, նոր դաշտավարներ ունոր սկզբանքներու տեր լինելու հետամուռ ևն, եռանգուն հոգւով վասփաք ունին, որ մի օր յառաջ նոր նոր լուսաւոր սկզբանքներն ու դաշտավարները մեր մէջ մուռ և հասաւատթիւն գանձն, քաջ պատենան, որ մեր վասփաքն էլ մի և նոյնն է, նրա հառմար էլ մեր պարտաւորութիւնն է, լուսաւոր սկզբանքներու և աղդադաշտավարներու պաշտպան կենալը, բայց սակայն անշնից յառաջ մեր աչքին առջև էլ մեր աղդին ու եկեղեցւոյն օգուան էլ մասածնելու ամենին չնեք գարգարիլ և ամենենին էլ չնեք համարձակիլ յանկարծ մեր մէջ եղած վլաճելու վրայ եղող սակարութիւնները, վասթարացած բարքերն ու վարքերը և ացլմեր չառ հալած, մաշստ և վասծ բաները յայտ յանդիման խորտակել և կրծանել, տանց նրանց անզը օրինասովը աղդացինը, բնականը և հարկաւորը դնելու և հասաւամելու։

Մեր համազմն այն է, որ պարաւական ենք մեր այժմին. վիճակին նոյնելով, ճշմարին ու ուստին, բարեցն և չարին, օգոստակարին և վլաստակարին մէջ անդուն եղած ասրբերութիւնները խմանանք և նոր դաշտավարներու ու նոր սկզբանքներու մեր մէջ լուգաներանալուն և հասունանալուն հետ յառաջ պիմինք. Յառաջելով դործ անսելն անհնելի դործ չափնելու չափ մլուսակար է, դործ անսենք, տանց ձայն ձան համելու, և հաստատամիտ լինինք առանց վախուկ համարձակ լինելու, մեր ձեռին եղած միջոցները մաման ալին հետ յարմարեցնենք, սուանց մեր ճշմարիս նորատակից զուրս դալու, որտնք են, տառմէ, մի բանաւեր չայ, աղդն յառաջ ամսնելու համար խոնեմ կանոնները։

ԼՈՅ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ԽՈՐՀԻԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

## ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ\*

### Բ Ա Զ

32—ԱԿՆ յայտնի երևումէ ինձ, որ ամէն առաքինութեան և մեծութեան արմատ կայանումէ այն իշխանութեան մէջ, որով մարդու իր ըղձին կարգանումէ սանձ զնել երբ բանականութիւնը նրա հակառակէ դալիք։ Այս իշխանութիւնը սովորութեամբ ստանումէ մարդու և դործածութեամբ ընդաբոյս է դառնում և զարդանում։ Ուստի եթէ խորհրդիս ականջ զնող կայ, պիտի խրանիմ նրան, որ օրորոցէն ելած չելած երեխայքը հրահանգել պէտք է, որ իրանց իդը զսպեն։ Նախ պէտք է, որ լաւ դիտենան, թէ ինչ բան որ վայելումէն նրանք, չէ թէ իրանց հաճելի լինելուցն է, այլ խնամականերուն այնպէս պատշաճ գտառելուցը։ Եթէ սկզբիցը նրանց պիտոցքն յարմար բաներ մատակարարեն, առանց նրանց լսոց լինելուն իրանց խնդրածները տալու, այն ժամանակ վարժումէն ոչ գոռալու, ոչ կանչելու և ոչ էլ հրամաններ տալու և որով ոչ իրանց և ոչ այլոց գլխին ցաւեն լինում։ Եթէ նրանց վայնասունին և կամակարութեանը միտչինելով նրանց խնդիրը չկատարեա, հաւասարի եղիք, որ ուրիշ անդամ որշափ լուսնին այսպէս ուրիշ բան չեն խորիել։

33—Միտքս ասել չէ, որ երեխանց վափաքին լիովին խուլ կենալ հարկ է և կամ երբ տակաւին մանը և նորահաս են, ամէն մէկ քայլափոխ խորհրդատուներուն անօրէնութեան համեմատ անել պէտք է։ ոչ ընդհակառակին նկատելով նրանց իր-

\* Տես Ա. տարի թիւ ե Զ ը.

քեւ մանր երեխաներ, ժամանակին հարկաւոր է որ խաղան, իլըն-  
դան, խաղալիք ունենան և անուշութեամբ կառավարուին։  
Այլ իմ տուածն այն է, որ երբ երեխայք իրանց անվայել ու  
անյարմար բան խնդրում լինին, բոլորովին պէտք է զանալ  
և մերժել այն պատճառով, որ փոքր են և չունին իրաւունք  
բռնաբար իրանց հրամանը կատարել տալու։ Մանաւանդ  
պէտք է նրանց լաւ զգացնել որ երբ մի բանի համար գոռան և  
նեղանան քեզ վրայ, բնաւ նոյն բանը չեն կարող ձեռք բերել։  
Տեսելեմ երեխայք, որ սեղանի վրայ մի բան չեն խնդրել մին-  
չեւ որ իրանց չուուին, նաև տեսելեմ տղայք, որ քանի նոր  
հերակուր բերուի սեղանին վրայ կախեին մամուալ, որ նախ  
իրանք մեծարուին։ Այս երկու աեսակ բնութեանց տարբե-  
րոթիւնը ուրիշ բանից չեր ծագում, այլ միայն, նրանց յաց  
լինելով իրանց խնդրածները ձեռք բերելու վարժուած լի-  
նելուն համար, խոկ միւսներն առանց ձայն հանելու։ Գանի  
փոքր են տղայքը այնքան հեշտ է նրանց անկանոն ախորժաւ-  
հին միտ չընել, և քանի որ կարող չեն հակառակութիւն  
անել այնքան խնամակալներու լիակատար իշխանութեանն ու  
հրամանին հնաղանդ կննան։ Աւստի հետեւումէ, որ միշտ  
նրանց մօտ անպատճառ խոչեմ մարդիկ պէտք է գանուին։ Աթէ  
աշխարհս առ հասարակ մի հակագարձ շաւիլէ բռնումայս  
մասին, որու է յանցանքը։ Աս այս աեղ միայն պատուիրում  
եմ թէ որպիսի եղանակով պէտք է երեխայքը կառավարել և  
եթէ այս եղանակը մի սովորական և ընտանի բան լինէր, այս  
նխաթիս վրայ ծառելով, ընթերցովներուն ձանձրոյթ տալը  
աւելորդ կհամարէի։ Սակայն ապահով եմ, որ եթէ միան-  
դամ լաւ մատծուի, խկոյն ամէն մարդ կհասկանայ, թէ որ-  
չափ շուտով այս ուղղութիւնո բռնուի տղաց հետ, այնքան  
ախորժելի և դիւրին կուգայ թէ իրանց և թէ գաստիարակնե-  
րուն համար։ Աւ այս մի անհակառակելի սկզբունք է, որ երբ  
միանդամ երեխաներուն կամքը չես կատարում, այն ժամա-  
նակը ոչ պղաւում են և ոչ լալիս իրանց խնդրածը ձեռք բե-  
րելու դիտմամբ։ Խոկ եթէ դիտաւորութիւն ունի նրանց  
անհամբերութիւն և ստահակութիւն սորմեցնել և այն բա-  
ներու համար վարձք տալ այց ու բիշ խնդիր ։

**34-** Ուրեմն նրանք, որ վիսկաքում են իրանց զաւակները դաստիարակել, պարտական են յառաջուց նրանց՝ իրանց կամքին հնագանդ անելու ջանալ : Ուուզում ես, որ զաւակդ հենց մանկութենից հնագանդի քեզ նրան, իր մատաղ հասակին մէջ վարժեցրու հայրական իշխանութեանդ : Եթէ վատիաքելի է քեզ, որ նա վախենայ և յարդի քեզ մանկութենիցը, նոյն բանը տպաւորէ նորա մտքի մէջ և քանի նա իր տարիքն առնէ, կամաց կամաց նրան, ընտանեցրու քեզ հետ, այնապէս, որ երբ երիխայէ, քո հլու հպատակը զառնայ, իսկ երբ մարդ՝ քո սիրեկան բարեկամը, վասն զի ես կարծեմ թէ ծնողք հարկաւոր եղածին ներհակն են, գործում երբոր ներողամտութեամբ և ընտանութեամբ վարւում են իրանց զաւակաց հետ, քանի որ վորքը են, իսկ խստաղէմ գաժան ու ժանու և օտարականի կերպարանք են ստանում նրանց առջև, երբոր նրանք մեծանում են : Ազատութիւն և ներողութիւն շնորհել երեսայներուն միշտ օգտակար չէ, քանի որ նրանց դատողութիւնը անհասուն լինելով՝ հարկաւ կանոնի և կառդի կարօտ են և ընդհակառակն հասածների հետ մի դործածիր բռնութիւն և խստութիւն, որ մի թիւր ճամբայ է, վասն զի նրանց բանականութիւնն է իրանց առաջնորդ և եթէ չես ուզում ձանձարալի և ասելի զառնուլ նրանց աչքին, մի՛ ստիպել որ ասեն իրանց մէջ թէ «Արդեօք, Ե՞րբ պիտի մեռնիս դուն, հայր» :

**35-** Անոտարակայս ամէն մարդ բանականապէս գատում է թէ մանր երեխայքը իրանց ծնողացը իրեն իրանց տէրը և լիազօր իշխանը պէտք է ճանաչեն և նրանցից վախենան : Իսկ երբոր խելահաս լինին, իրեն ճշմարիտ և միտի բարեկամներ նկատեն և նրանց սիրեն ու պատուեն : Այս նողատակին համեմու համար իմ վերելը նկարագրած շաւիզս մէկ հատիկ է և ուղիղ : Պէտք է միտ զնենք, որ երբ մեր որդիկը մեծացնել են, նրանք էլ մեզ նման կիրք և իղձ ունին : Մենք բանական էտիներ ենք, ուստի և հարկէ, որ մեր աշտառութիւնը վայելինք : Անդադար ոչ յանդիմանութիւն և ոչ քամահրանք կարող ենք տանել և ոչ էլ բանակալ կամքի դիմանալ և մեր ընտանի բարեկամաց պաշտութեանը զլուխ խոնարհել : Ա՞վ որ տպաց չէ ուրիշն վրայ այսպիսի մի վարմոնք տեսնեաւ :

լով թարբեր ընկերակից և ուրիշ խօսակից բարեկամունքը պատահէ, որպէս զի իր հանդսուութիւնը վայելէ : Աւստի եթէ նախ երեխայոցը անաշխատ հսկողութեամբ բռնես, հեշտութեամբ կարող ես նրանց զսպել և հնագանդեցնել քահանութեամբ տակ, քանի որ մի ուրիշի չեն ծանաշում։ Խակ եթէ քանի նրանց իմացականութիւնը բացուի և զու փոքր առ փոքր կառավարութեանդ խստութիւնը թուլոցնես, հայրական խիստ ծակառդ մեղմես և աստիճանաւ որդիքդ քեզ մօտեցնես, նրանց սիրուն ևս առաւել կրաւես, վասն զի խակոյն նրանք կզգան, որ առաջին անաշխատութիւնը զօրծէիր ածում նրանց օգտին, վատահութեանդ արժանի և օտար բաց յարդելի լինելու համար :

**36-Այս** ընդհանուր տեսութիւնս ծնողաց իշխանութեան մասին իրանց որդւոց մքայ բանեցնելու բաւական է : Նախ պէտք է միջոցներ որնրանց մտքին վրայ երկիւղ և պատշառութ տիրեն։ Խոկ սէր և բարեկամութիւն պէտք են երբ հառւն հասակի կհաննին, վասն զի մի օր պիտի գայ, որ նրանց ոչ գաւաղան և ոչ պատիժ պիտի զօրեն և այն ժամանակ եթէ հայրական և առաքինութեան սէրը համբաւը նրանց չեն դրդել հնագանդութեան պարագանիրութեան և զովելի բարքի և վարքի, հարցնում եմ արդ, ի՞նչ կապովէ կարող ես կառավարել նրանց։ Այս զիտեմ որ քո ստացուածքին զերի պիտի լինին, վախենալով որ եթէ քեզ բարկացնեն թերեւս նրանց համար փոքր ինչ ժամանդութիւն կթու ուսւ, սակայն նրանք առանձին միշտ չար և վաստ պիտի մնան և այն վախին էլ միշտ չտեսել մի օր պիտի գայ, որ ամեն մարդ իր անձիցն ու իր ընթացքիցը պիտի կախուի, ուստի երբ բարի առաքինի և յաջողակ մարդ ասեմ պիտի իմանամայն մարդը՝ որ իրօք սոյն այս բարեմանութիւնները իր սրտին մէջ ունի ամէն ժամանակ։ Աւստի յարմար ժամանակին պէտք է երեխային ըռու մաքումը տպաւորել թէ դաստիարակութեամբ ինչ պիտի սորվին և թէ մարդուա կեանքին վրայ ազդող բաներն որո՞նք են։ Այսինքն է, այնպիսի սովորութիւն և բարք որ նրանց ընտառութեամն հետ իրը և անխախտ սկզբունք շաղուին և չէ թէ վախից շնուռած բնութիւն կամ մի ծպտեալ երեսյթ

հագնին միմիայն մի հօր բարկութիւնը չգրգռելու և հետեւաբար ժառանդութենից զուրկ չմնալու դիմամիք :

### ՊԱՏԻԺ :

37 - Այս ընդհանուր կանոնս մանկածութեան վրայ դըս նելուց յետոյ, հարկ եմ համարում մասնաւորապէս խօսիլ սրան գործածելի միջոցներու մասին, որովհեան պատուիրեցի որ խստօրէն զնալու է երեխայներու հետ, թերեւս ոմանք կասկած տանին, որ նրանց փափուք հասակին և կաղմաւածքին չեմ խնայում, սակայն այս կասկածը խկոյն պիտի փարասուի եթէ յետագայ խօսքիս ականջ զրուի, վասն զի ես ինքնին համոզուած եմ, որ երեխայները չորաշար պատժելը ոչ միայն անարդիւն բան է, այլ նաև տեղիք կտայ բաղմատեսակ չարիքներու : Խոկ ընդհանրապէս գիտողի աչքին երեսումէ ակներեւ, որ շատ պատիժ կրող պատահիներ հազիւ հազ վերջը բարի մարդիկ են դառել: Մինչև հիմայ իմ պնդածն այն է միայն, որ եթէ խստութիւն պէտք է, այն ժամանակ գործածուի երբոր երեխայն դեռ մատղաշ է, ուստի հարկ եղածին չափ նրա գործածութենից օգուտ քաղելուց յետոյ պարտ և պատշաճ է, որ մեղմես ընթացքդ և աւելի մի անուշ զրութիւն ձեռք առնես :

38 - Եթէ ծնողք անձանձիր հոգածութեամբ տղայոց յիշ շողութիւնը տակտուին չարթնյած նրանց կամքն առնեն և հլութեան փարժեցնեն մի ընտանի սովորութիւն կդառնայ այս, և կամաց կամաց արմատ դնելով նրանց մոքին մէջ յետոյ վէճ և զղջում կվերանան: զլիստոր բանն է յառաջուց պինդ սրտով այս միջօցս գործածել գիտենովը մինչև որ նըրանց սրտի մէջ մի ակնածութեան և յարդանաց զգացում ծագի, և անտարակուսելի է, որ նրանց միտքն էլ անդիմադիր հնաղանդութեան և հլութեան կղիջանի : Միանդամ, որ այս ակնածական զգացումը ձեռք բերիր (որնոր անհրած եշտ պէտք է ձեռք բերել յառաջուց) ահա նրանով պէտք է, որ կառաւ վարուին նրանք, առանց ծիծի, յանդիմանութեան կամ ուրիշ անարդական պատիժների, քանի որ խելքով յառաջանան :

39 - Այս խօսքիս ծշմարտութեանը ամէն մարդ վկայու-

թիւն կտայ, թէ որ միանդամ գիտէ, թէ մի խոհական գասա-  
տիարակութեան նպաստին բնչէ և բնչ բանի վրայ կդառ-  
նայ, նախ նա՞ որ իր ցանկութիւնները չէ կարող զայել իր  
առջեն եղած զռւարձութեանց խայթին կամ թշուառու-  
թեանց մաւրճին չկարող դիմանալ և իր բանականութեան  
խորհրդներուն անմտագիր է, այնպիսին առաջինութեան և  
ճարտարութեան սկզբունքներուն անդգայ է և աշխարհիս մէջ  
անկարող մի բանի յարմար գալու, ուստի այն բնաւորութիւնն  
որ առանց սկզբունք և առանց կանոնի բնաւորութեան ներ-  
հանի է, ժամանակին ստացեռում է և ապագայ ճարտարութեան  
և երջանկութեան հիմն է լինում. եթէ գաստիարակները ամէն  
երեակայելի հնարք և հոգս՝ ի զորք զնելով պատանիներուն  
ընդունակութեան առաջին նշայինները ծագելուն՝ խիշյն նրանց  
մաքին մէջ հէնց կանուխիեկ ապաւորելու լինին :

40—Երկրորդ միւս կողմանէ եթէ աղայոց միաքը չափիցն  
աւելի սեղմես ու ճնշես և նրանց հոգին բռնահարես ու  
խորտակես, նոյն ժամանն նրանց կորովն ու ճարտարութեան  
հոդին կիրարատես և քան զառաջին վատթար վիճակի մէջ  
կմխեսնրանց, վասն զի թէեւ գեռահասակ և այլանդակ, բայց  
առողջ և եռանդուն աղայք կարդի կանոնի կարող են մանել ու  
ճարպիկ և մէծ մարդիկ դառնալ խկ ցած, փուճ, երկչու,  
թոյլ և չնչին հոգիներն հազեւ հազ կրտճրանան և մի բան  
կդառնան : Այս երկու ծայր վասնդից խոյս տալն է մէծ  
արհեստը և մի տղու միաքը հանգիստ, գործունեայ ու ա-  
զատ պահելու և միանցամայն նրա վաստ միաւունները զայե-  
լու և իրա չսիրած բաներու նրան յօրդորելու արհեստը դի-  
տացող և այս երեսութական հակասութիւնները միաբանել  
կարողացող մարդն է ահա ըստ ինձ, գաստիարակութեան  
զաղանիքը ճանաչողը :

41—Ընդհանրագէս գաստիարակներու կառավարութեան  
կարծ և սովորական գործին, որ է գաւաղանը, մի ամենա-  
վատթար, միջոց է գաստիարակութեան, Ակիլլս և Գարիպախին  
վասնդաւոր ճանապարհին կնմանի, ուր տեղաց անց կենալիս  
երկու կողմից են կիսորտակուին մոլորեալները :

42—Այս օրինակ պատիմները փոխանակ երկիւդ, ազգե-

լու տղուն, նրա բնական ըզմերը զաղելու և նիւթական դրասարձութենից հեռացնելու, աւելի ևս կդրդուն և կոգրացնեն նրա միջում ամէն մոլի գործքերու աղբիւրը և կեանքի անկարգութիւնները, մի պատճենոյ վարքի և բարքի շարժառիթը ի՞նչ կարողէ լինել ուրիշ ոչ ինչ բայց միայն մարմարական հեշտութիւն և ցաւ, զաւաղանից վախենալու իր յաժարութեանը դէմ դաս կարգի և իր սիրած մրգերից չուահէր : Աւսաի կիշուէ նաև մարմարական հեշտութիւն վայելելու և մարմարական պատիժը կրելու յարմար ժամանակն և ըստ այնմ կվարուի : Արդ՝ ի՞նչ բանի կուզան այսպիսի գրդիւններով մի տղայ կառավարելը : Կրկնն հարցնու մեմ: ի՞նչ բանի կօդնեն ոչ մի բանի այլ միայն գրդուելու այն վաստ սկզբունքը որնոր արմատիցը խլելու համար բոլոր մեր ճիգը պէտք էր, որ թափեինք : Աւսաի ևս մի տղու համար օգտակար չէմ . համարում այդ պատիժը: որու ցաւն աւելի աղքեցութիւն ունի նրա վրայ քան թէ յանցանք գործելուն համար իր զգացած ամօթը :

**43-Այս** տեսակ պատիժը բնականապէս մի տղու ատելութիւն զգալ կուտայ, նոյն իսկ խնամակալին սիրած նոգաւտակին վրայ : Ամէնօրեայ փորձով տեղեակ ենք, որ տղայք կամաց կամաց սկսում են ատել իրանց հածելի եղած բաներն անդամ: Երբ նոյն բաներուն համար ծեծ են ուտառում, ուստ և յանդիմանութիւն են լսում: Իսկ մենք բնաւ չզարմանանք, թէ մեծանալուց և մարդ լինելուց յետոյ երեխայք, չեն կամենում նոյն սաստիկ միջոցներով զգասառութեան գաւառալ: Մի անձ կայ, որ ամենպանմեղ զբօսանքից զվաւի: որ երբոր անտարբեր է զրահ համար, եթէ ծեծով և յիշոյով ակամայ կամքով նոյն զբօսանքին վարելու համար բռնադառուի և կամթէ նոյն զբօսանքին ամենափոքր պարագաներուն համար առանուի : Այս ատելութիւնը շատ բնական է, նաև բնական վարքն ու լեզուն առ հասարակ ամէն անմեղ բաները կթիւ նաւորեն: Մի անտախորժ զեղի համար յատկացած բաժակին աեսքը անդամ մարդուն սիրու կաղղորեն և նրանով համով հոսով մի բան խմելն անհնար է նրանց, թէ և այն բաժակը մաքուր ձեւաւոր և ուկի հուռ լինի:

**44-** Այսպիսի գռեհիկ կրթութեան եղանակը մի ստրուկ գուրս կհանէ, տղան առ ժամանակ, գլուխ կծռէ և հնազանդիլ կձևացնէ քանի որ գաւազանը գլխին վրայ կախուած կտեսնէ, սակայն երբ գաւազանը կվերանայ և պատիժ կրելու երկիւղեց կազմատի, այն ժամանակ իր բնական յօժարութիւններն, որնոք ամեննեին փոխուած չհանարենք, խստութենից զօրացած և զբգուուած մոլեգնաբար դուրս կուտայ :

**45-** Եթէ քո խստութիւնը յետին տսոիճան հասցնելով տղան անզուսպ և առանց բնաւորութիւնը նուաճելու յաջողի, շատ անգամ նրա տեղ վատթարագոյն և աւելի վը նասակար մի ախտ յառաջ կը երէ նրա իմացականութիւնը փշացնելով : Եւ թէ այն ժամանակ կտրիճ և կայտառ պատաննեկի փոխանակ, ձեռքիդ տակ կունենաս մի յագուշ և տըլսմար արարած, որ իր անբնական թմբրութեամբը կարելի է դատարկ և անճարտոկ մարդկանց աւելի հաճելի երեխ, սակայն տարիքն առնելով հաւանական է, որ իր բարեկամներուն անտանելի մի անձ դառնայ, վասն զի թէ իր անձին և թէ ուրիշներուն բոլոր իր կենացը մէջ մի անպիտան բան լինելուն տարակոյս չկայ :

### ՊԱՐՁՔ.

**46-** Այսի կողմանէ ծհծ և որիշ ցած մարմնաւոր պատիժներ ամեննեին չեն վայելել դաստիարակութեան, թէ որ փափաքելի է մեղ, որ մեր երեխայք խոհեմ, բարի և ուշիմ մարդիկ լինին : Այսպիսի պատիժներ շատ և շատ քիչ անգամ հարկից սախլուած միայն պէտք է գործածել : Միւս կողմանէ էլ երեխայքը այլեւայլ հաճոյական վարձքերով շրջբորթել և դդռւել խիստ վնասաբեր, հետեանք ունի : Իր որդւոյն տանձ, ինձոր և ուրիշ ախտրժելի երեցած բաներ ընծայող մի հայր որպէս զի նա իր դասը սովորի, իրա նպատակին ներհակ կը զործէ, վասն զի նրանով երեխային զուարձութեանց համար ունեցած հակումն ու յօժարութիւնը կզրդու և նրա վը տազաւոր միտումը կարծարծէ անդ խութեամբ, որնոր ամէն ջանքով զսպելու և փարատելու պարտական է : Ուստի մի՛ կարծէր երբէք, որ երեխայն այս թերութեան վրայ իշխել կտ-

բաղանայ իր արբօւն հասակումը, երբ մին կողմանէ նրան ռասառում ես նոյն պակասութեան համար և միւս կողմանէ ել փոխարէն նրա յօժաբութիւնն ես մեծացնում: Եթէ սրաով ուղօւմ ես մի խոհական բարեսիրա և առաքինի զաւակ ու նենալ, առովնեցրա նրա զավելիր հարստութեանց, ճոխութեանց և որկրամալութեան ցանկութիւնը ամէն անդամ, որ բանականութիւնն ու պարտականութիւնը նոյն բաներու հակառական կրաքանչ քեղ: Սակայն երբ փողով կհրառւ իրեւ նրան որ և է բան կատարել առաջ, կամ կվարձատըն նրան մի քաղցր պատառով, որպես զի իր գտաց լու ռւսանի, երբոր կիսոստանաս նրան մի զեղեցիկ պարզաւատ, մի նոր զգեստ, գիտես արդեօք ինչպէս է քո նրան սորվեցրածը, բացարձակ խրատ ես տալի նրան որ նոյն վարձքը իրեւ իրա միակ նպատակը նկատէ, նըշ բանց համար իր հողին տոյ և բոլոր իր երջանկութիւնը նրանց վրայ զնէ: Ահա այսպէս մարդիկ իրանց որդւոցը քերականութիւն, պարել և ուրիշաւարկաննր, որոնք նրանց կեանք երջանկութեան համար խիստ կարեսր բաներ չեն, սորվել յորդորելու նպաստակով, անվայել սպատիժներ կամ պարդ և վարձք են խոստանում: Նրանց առաքինութիւնը վիշացնում: Գասաթիաբակութեան կարդը խանդարում և այս ընթացքով փառամուլութիւն, գոռողութիւն, արծաթսիրութիւն են սորվացնում նրանց: Վասն զի նրանց անկանոն ցանկութիւնները և ըզձերը փայփայուելով հետզեան առնածածներ մարութեանց արմատներ են անկում նրանց սրտում: Օրոնք բնաշինչ անելու միմիայն հնարը մեր ցանկութիւնները նուածել և բանականութեան հետաղանդեցնելն է:

47—Արանից կարծիք չանես թէ զբկել պէտք է երեխոյքը իրանց առողջութեան և առաջինութեան անմիտա եղած զուարծութենից և հեշտութենից, ընդ հակառակի, կուզեմ որ նրանք մի քաղցր և զուարծ կեանք վարեն, զբօսաաի և անմեղ խաղերով, այն պայմանով որ իրանք իրանցից զդան որ այն զուարծութեանց վայելումը միմիայն իրանց ծընզաց և զասախարակաց համարմանքին և յարդանքին ողբառուղն է: Սակայն երբէք իրեւ վարձատրութիւն պէտք չէ, որ համարեն այս և այն զօրծքի համար, որուն զէմ կամ

ասելութիւն ունին կամ մրցանակ ստանալու վափաքով կատարեն :

**48—Սակայն կասես դու թերես հիմայ, թէ մի կողմանէ գաւազանը և միւս կողմանէ այս փոքրի քաջալերութիւնս ները, որոնք հածելի են երեխայներուն թէ որ վերջացնենք, այն ժամանակ ի՞նչպէս կարելի է կառավարել նրանց : Եթէ յոյս և ահ վերանան, ի՞նչ բան կմնայ դէնը նրանց սանձ լինելու... չաւան եմ ես ըստ մասին, որ բարիք և չարիք, վարձ և պատիժ մի բանաւոր էակի դլիսաւոր դրդիչներն են, սրանք են յիրաւի մի մտրակ, որով մարդկային ազգը աշխատում և յառաջանումէ, ուստի և պատճեկանց համար էլգործածել պէտք է, բայց ծնողք և դաստիարակք էլ մաքից պէտք չէ հանեն բնաւ, որ պատճենիք էլ իրբեւ բանաւոր էակներ պէտք է նկատուին և ըստ այսմ վարուին նրանց հետ :**

**49—Զեմ ուրանալ՝ որ վարձը ու պատիժ պատճեակներուն առաջը դնել հարկ է, եթէ նրանց մաքին վրայ ազգեցութիւն անելու դիտաւորութիւն ունինք : Սակայն այս մասսին սխալումն շատերը երբ նոյն դրդիչներն առանց ընտրողութեան գործ են ածում : Ես կարծեմ, որ մարմնական նեղութիւններն ու հեշտութիւնները վատ հետեւանք յաւած կրերեն, երբ տղայոց վրայ իշխելու համար իրբեւ պատուհաս և վարձատրութիւն գործ կածուին. վասն զի ինչպէս, որ յառաջագոյն յիշեցի, նոյն միջացներն աւելի զօրացնելու և սաստիացնելու գործի կլինին այն յօժարութիւններն, որոնք ջնջելը մեր անհրաժեշտ պարտքն է : Մի տղու մաքին մէջ ի՞նչպէս առաքինութեան սերմ կսերմանես, երբ նոյն զուարձութենից հեռացնելու համար վատթարագոյնն ես առաջարկումնրան : Այս կերպով նրա ճաշակն աւելի կրորբոքես և նրա չղիտեցած բաներու համը աւելի կտաս : Երբոր մի տղայ մնասակար մրդի համար լաց կլինի, նրա լացը դադարեցնելու գիտմամբ, այն մրդից քիչ վեասակար մի ուրիշ միրգ ես տալի, նրանով թէեւ նրա առողջութիւնը սլահումես, սակայն պըզատորում և խանգարումես, վասն զի այն գործողութեամբ միայն առարկան փոխեցիր, նրա քմքին և կամքին հետևեցար**

նրա վասիաքը զոհացրիր և այնպէս բիւր և բիւր անկարգութեանց արմատը տնկեցիր նրա մաքին մէջ; Խոկ եթէ երբէք նրա համբերութեան վարժեցնեօ, զիտացիր, որ նոյն միջոցին հանդարտումէ նա թէե կամակօրութեան ախտը անբուժելի կեցած է նրա սրտին մէջ ու միայն յարմար առիթ է նայում որ գուրս թափէ առաջնից աւելի ուժգին կերպով, քան զի նրա ըղձերը ողահուած մնալով, զօրանումեն և քեզ մեծամեծաղնապներ են պատրաստում:

**50-** Ուրեմն տղայքը կարգի և կանոնի տակ պահելու համար, հարկ եղած վարձքն ու պատիմքը բոլորովին տարբեր տեսակ է և այնպէս աղջու են, որ եթէ միանդամ նրանցմով գնանք ու գործենք, խոյնի մեր նպատակին կհանինք և դըժուարութիւնները կվերանան, յարդ և պարսաւ քան ամէն բան զօրաւոր դղջիւներ են մաքի և վարքի համար, երբ նրանց արաժողութիւնը լաւ ճանաչուի: Եթէ միանդամ տղուն սրտին մէջ յարգանքի սէրը և պարսաւանքի երկիւղը տպաւորեա, Ճշմարիս սկզբունքներու հիմն ու արմատը զրած կլինիս, որոնք նրա վրայ ներգործելով միշտ նրան անմոլար և ուղիղ ճանապարհով կառաջնորդեն: Սակայն ահա հարցնումեն ու մանք, թէ ի՞նչպէս պէտք է կատարել այդ բանը... Ստոյդ է, որ առաջին անդամ մի հեշտ դործ կերեայ և ես կարծում եմ թէ նրա եղանակը մի լաւ վիճուակը և քննելով պէտք է բանեցնել, որպէս զի մեր նպատակին համինք և հէնց այս եղանակումն է կայանում և դասախարակութեան գաղտնիքը:\*

\*) Հեղինակին յետազայ դիտազութեանց վրայ մեր ազգանոց ուշազրութիւնը կհասուիրեմ: Մինչեւ այսօր զրոթէ մեր բոլոր վարժապետներու եւ դաստիարակներու գործին, տղայքը զդաստութեան բերելու համար, եղել է փայտը կամ վախրը Տակաւին այս ոսուկալի դրութիւնը ընդհանուր է մեր մէջ մի քանի զովելի բացառութեամբ: Դեռ մեր մէջ չեն զիտում այլեւայլ ընտիր զգացմոնքներու շարժառիթով եւ հապուրով տղայց թիւր եւ մոլի ցանկաթեանց վրայ իշխել, ուսափ եւ նենդամիտ, վատահողի, վեհերու եւ յանախ անպիտան աշակերտներ, առանց հայրենասպիրութեան, պատուասպիրութեան եւ մեծանձնութեան գեղեցիկ հանգամանքներով զարդարուած գուրս են զալի, որոնք վարժապետին գոււազանին առջեւ իբր զաւնուկներ են երեւում... սակայն

**51—Եւալս փոքր երեխայք անդամ գովասանքներ և յարդանք ունենալ կոիրեն մանաւանդ իրանց ծնողքից յարդ և մեծարանք տեսնելը : Ուստի երբ մի հայր իր զաւակը գովաւմէ կամ պաղ և մի անտարբեր կերպարանք է ցոյց տալի . երրոր նա չար է գործում և երբ նոյնն է անտում թէ մայրը և թէ նրա չորս կողմը եղողները, հաւասարի եղիք, որ իսկոյն այդ անտարբերութիւնն ու պաղութիւնը տղան կզգայ : Իսկ եթէ այս վարմանքը աղուն ընթացքին համեմատ միշտ բռնըուի, ապահովեմ որ աւելի ազդեցութիւն կունենայ նրանց վրայ քան թէ սպառնալիքն ու ծեծը, որոնք իրանց զօրութիւնը կորցնումէն քանի որ հասարակ և սովորական կը զառնան : Իսկ բնաւ ոգուտ չունին երբ մաջնաւանդ ամօթն էլ վերանումէ . ուստի որչափ կարելի է ծեծ գործածել պէտք չէ բացի այն յետին պարագայում, որնոր մի փոքր յետոյ պիտի յիշեմ :**

**52—Երկրորդ՝** յարգանքի և պարսաւանքի զգացմունքը տղոյ որտին խորը տնկելու և նրա աւելի կարևորութիւն տաւալու համար ուրիշ զուարձալի կամ անախորժ բաներ էլ զոր ծդնել պէտք է, չէ թէ իբրև վարձք կամ պատիժ համարելով այս ինչ կամ այն ինչ գործին նկատմամբ, այլ իբրև բնական հետեանք ցոյց տալով դովելի կամ պարսաւելի վարմունքի տէր եղողներին : Այս կերպով վարուելով, պատանիք կսկսին մտածել որ լաւ վարքի պատճառով յարդ և գովեստ ընդուանդները, ի հարկէ և բնականասկէս ամէն մարդիկների սիրելի

---

իրանց մաքումը այլեւայլ հնարքներ կմտածեն, որ իրանց ներքին չարտութիւններն ի գործ զնեն, երբ զաւազանը մի պահ հնուանայ, թնդայն զավանութիւնը, որուն ժամանակ ժամանակ աշակերաններն զոս կը լինին, երբ մի վարժապետ բան յանցաւորը զանելու համար իր անկարողութենից, ամէն աշկերտներն էլ ծեծով կթռչէ իր ոխը առնելու համար : Թէ աղոց եւ թէ պատանեկոց որտումը անիրաւութեան դէմ մի ընդարույն զգացում կայ, որ եթէ մի անդամ այս կեզզով վերանորոգի ամենասովորալի հետեւանքներ յաւաշ կուզան եւ ոչ միայն իրանց ընտանիքին եւ իրանց յատուկ աղղին, այլ բոլոր մարդկացին աղղին դէմ ատելութեամբ եւ քենով նրանց կզինեն և կպատրաստեն ,

Նկատ. Թարգ.

յարգելի կլինին և հետեւապէս միշտ բարիք կվայելն։ Իսկ միւս կողմից եթէ մի վատ և անկարգ պատանի իր յարդը կարցնումէ և անհօգ է սլահպանելու, հարկաւ վատ անուն ժառանգելով և երեսից ընկած մնալով՝ պիտի խելաքերի և աշխատի կրկին, որ իր ծնողքին փափաքին հետեւի և միանա դամայն ինքն իրանից, նրան դոհ անէ։ Ահա այս միջու տղոց ցանկութեանց առարկան անգամ նրանք առաքիւ նութեան կդրդէ, եթէ սկզբից, կանոնաւոր փորձառութեամբ տղայք սովորին տեսնել որ իրանց սիրած բաների համար պէտք է յարգ և բարի անուն ստանան։ Եթէ այսպիսի հնարքով և ամաչեցնելով, նրանց թերութիւններն ուղղես (վասն զի սրանցից ուրիշ պատիժ չէ կարելի դորձածել) և կարողանաս բարի անուն ստանալու սէրը նրանց սրտումը ներշնչել այն ժամանակ քո ուզածին պէս կարող կլինիս կառավարել նրանք և ամէն առաքինի զործքերու համար հետամուտ անել։

**53-Այս կանոնաւոր ընթացքին դէմ եղած ամենամեծ արդելքը կարծում եմ, որ տան մէջ եղած ծառայներու յիշ մարութիւնն ու չարամտութիւնն են, որ միշտ պատրաստեն երեխանց հօր և մօր ուղեղ դիտաւորութեան ներհակ վարուել տղոց հետ։ Երբ տղայք յանցանք դորձելով՝ իրանց հօրն ու մօրը աչքից կընկնին, սովորաբար այն անմիտ շողոքորթներու մօտ են զիմում զգուանք և միսիթ արանք դանելու և այնպէս ծնողք որչափ, որ ջանք կանեն լսու դորձելու, այնչափ ծառայք կիսանդարեն։ Երբ մի հայր կամ մի մայր իր երեխին վրայ պաղ աչքով նայում էնի, պէտք է որ ամէն անեցիք նոյն պաղութեամբ վարուին նրա հետ, նրա ներելով երես չտան մինչեւ նա կարդի չմանէ։ Իր յանցանքը չխոստովանի և չճանաչէ, ու թողութիւն խնդրելով առաջին ունեցած յարգը նորունց ձեռք չքիրէ։ Եթէ այս կանոնս ու շաղրութեամբ բռնուի, հաւասարի եմ, որ այնու հետեւ ոչ ծեծի և ոչ յանդիմանութեան կարեսրութիւնը կերևայ, վասն զի տղայք իրանց հանգստութեան և գոհութեան համար խսկոյն ամէնուն աչքը մանելու կաշխատին և դատապարանելի բանեւրից խորշելով կնային, որ նեղութիւն զքկանք չքաշեն, թէ**

և ոչ ծեծ լինի և ոչ յանդիմանութիւն : Այս կերպով համեստութիւնն ու ամօթը կսովորին և կամաց կամաց մի բըռնական ատելութիւն կսկսին զգալ այն բաներու դէմ որոց պատճառով ամէնից պարսաւ և ատելութիւն էին կրում : Սակայն ծառայներու վատ օրինակի ազդեցութիւնը ինչպէս վերայնելը՝ ծնողաց ու շագրութեան և ջանքին կիթողում : Այն միայն կլրկնեմ որ այս կէտս կարի կարեօր մի բան է և բարերազդ եմ համարում այն ծնողըները՝ որոնք իրանց զաւակներու մօտ զգաստ և խոչեմ մարդիկ ունին :

**54 - Ուշեմ տղայքը յաճախ ծեծելուց և յանդիմանելուց կարելի եղածին չափ զգուշանալ պէտք է, վասն զի այնպիսի մի պատիժ երբէք շահեկան հետեանք չեղանք ունենալ այլ միշտ ծեծի արժանի սեպուած յանցանքի դէմ վայրի ենական ամօթ և զգուանք կրրգաէ աղօց սրտին մէջ բայդ եթե բուն իսկ իրանց չորագործութեամբ իրանց սիրողներուն իրաւացի տհաճութիւնը և սրտմառութիւնը գրգռելու համար ամօթի զգայողութեամբ չեն զգալ և չեն ապաշտել ասելէ թէ ծեծ ուտելու ցաւը նրանց համար, մի կարի անկատար գարման է իրանց անկարգութեան դէմ : Միայն մի տեսակ վերի վերոյ դեղէ, որ մորթին երեսը մի ժամանակ գարմանումէ, իսկ բնաւ վերըն խորնկին չհանում : Ուստի զդալի ամօթ խածութիւն և զժոհոչութիւն պատճառելու համար երկիւզն է միայն բաւական տղայքը սանձելու և կանոնի բերելու : Եւ այնպէս մարմնական պատիժները ապաւորութիւն չանելուց զատ, նըրանց միջում ամօթի զգացումն էլ փոքր առ փոքր կփարատեն և տղայքն աներես ու լիբր կանեն : Ինչ որ է համեստութիւնը աղջիկներու համար, նոյն է ամօթը աղօց համար, որնոր չէ կարելի միշտ պահպանել եթէ անդադար նրա դէմ գործիս : Խակ տհաճութիւն տալու վախը մի աննշան բան է լինու մաղոց համար թէ որ ծնողը իրանց գգոհութեան նշանաները բարոյապէս ցոյց տալու աեղ, մի յանցանք, մի քանի ապակով և մշտով քաւել տան նրանց : Ծնողըն պարաքն է, նախ մի լաւ քննել թէ յանցանքներից ո՞ն է իրանց բարեութիւնը շարժողը : Խակ երբոր մի կերպով իրանց տհաճու-**

թեան նշանները կյայանեն, պէտք չէ, որ խօփյն անոյշ եւ բես ցոյց տան տղոց, այլ փոքր ինչ դժուարութեամբ նրանց յանցանքը ներեն և նրանց հետ բոլորովին հաշուածելու հաւամար նրանցից՝ սովորականից աւելի մի բարեկարգ վարմանք և մի զգասառութիւն պէտք է պահանջին, և այնպէս ներեն նըւրանց : Եթէ այս խորհուրդս բանի տեղ չըրուի, քո պատիժ տուած բանդ, ամէնօրեայ սովորական մի դործողութիւն դառնալով՝ անպատճառ մի ոչինչ բան կսկսի երեալ աղոց և բուլը իր աղդեցութիւնը կփորյնէ : Այն ժամանակ և պատուածառ կը են ու ներողութիւն առնեն այնպիսի բնական և հարեկուոր մի ընթացք կհամարուի իրանց որչափ որ, կէսօր, իւրիկուն և առաւաօտ պատիժներն ու նեղութիւններն իրարուեանից կյաջօրդեն :

55 - Ասկ բարի համբաւի մասին այս տեղ այնքան միայն կասեմ: որ այս զգացողութիւնը թէև առաքինութեան ճըշմարիս սկզբունքներու պայմանը չէ, վասն զի առաքինութիւնն է մարդկային պարտքերու ճանաչումը, հեաեւելով Աստուծոյ նրա տուած լուսոյն, խորհրդին և յուսալով նրա հաւանելուն և վարձատրելու վրայ, սակայն, գարձեալ սրա խիստ մի ճառ բան է, վասն զի բարի համբաւը, այլոց բանագատութեան իրարեւ միահաւան վկայութիւնը և գովիսառը լինելով՝ առաքինի և ուղիղ գործքերու, պատասնեկաց համար էլ ընտիր առւածնորդ և յորդոր կարող է լինել մինչեւ որ չափահաս դառնալով կարողանան իրանց յատուկ դասողութեամբ ճշխարիան ու թիւրն միմեանցից զանազանել:

56 - Այս նկատմանքս և գիտողութիւնս բաւական են պատիժ և գովիստ տալու մասին ծնողաց վարմունքն ուղղվելու : Երբեմն յանդիմաննեն ու սաստեն անհրաժեշտ հարկ լինելուն, երեխանց արած սխալմունքին և յանցանքին դէմ, ծնողք այն յանդիմաննական և սաստական խօսքերն, ոչ միայն ծանր և հանդարա կերպարանքով և անաչառութեամբ պէտք է, որ յայտ առնեն, այլ նաև առանձին մի տեղ և ծածուկ: Խոկ եթէ գովիստի արժանի են, նոյն գովիստը այլոց առջեւ պէտք է առւլ տղոց, որով կը ինակի վարձատրած կհամարեն իւ-

բանք իրանց : Վասն զի ծնողը իրանց զաւակներուն թերութիւնները չըրատարակելով նրանց ուրիշներուն համարումն աւելի յարդելու կյորդորեն, և նրանց զաս կլինի նսե զգոյշ լինել միշտ անդադար պահելու իրանց բարի անունը քանի, որ դեռ այն կվայելին : Սակայն երբոր մի անդամ իրանց անհատրութիւնները հռչակուելով, իրանցից ամօթ և երեսի ջուրը կվերնայ, այն ժամանակ բոլորավին կյուսահատուին և այն բարդական սանձը բրթելով զինովին անփոյթ կըլինին ու բիշներուն լաւ կարծիքը և յարդանքը շահելու, քանի մօտածեն թէ իրանց անունը արդէն արատուել, կեղտոտուել և մրտուելէ :

**57—Պարձեալ թէ որ սկզբից մի ուղիղ ճանապարհով զնաս երեխանց հետ, ոչ վարձատրութեան և ոչ պատժի հարկաւորութիւն կմնայ, թէև հիմայ անհրաժեշտ մի գործիք ես համարում, քանի որ նրանց գործադրութիւնը ընդհանուր և հասաւատուն է եղած. վասն զի պէաք է թողուլ տղայքը, որ իրանց անմեղ գիտութիւնները, մանկական խաղն ու իննդումը ազատորէն կատարեն, որչափ որներկայ եղողներուն վայել եղած ակնածութիւնը կարելի է տանել : Թէ որ մանկութեան և ոչ թէ բուն իսկ մանկանց աննշան յանցանքներու կամ սխալունքներու վրայ աչք խիելու լինիս, մինչեւ որ ժամանակը բարի օրինակներ, և խոհուն հասակը դան դարմանեն և ուղեն, անտարակից տղայք մի շատ անտեղի պատիմներից կաղատին, որոնք կամ երեխանց բնական յօժարութեանց յազթել չկարենալով սովորական, անդօր և հարկաւոր եղած ժամանակն էլ ասկարդիւն կդառնան, կամ թէ մատաղ հասակի ընդաւրոյս զուարթութիւնը փարատելով նրանց բնաւորութեան, մաքին և մարմնոյն մեծամեծ մնաներ կպատճառեն. իսկ եթէ նրանց խաղերու աղմուկն ու շշլկոցը անտանելի, կամ իրանց դանուած ընկերութեան մէջ անվայիլուչ թուին (և անշուշտ ծնողը էլ այն տեղ կդառնուին) իսկոյն նրանց հայրը կամ մայրը եթէ արդէն իշխողութիւն ունին իրանց երեխանց վրայ, մի աչք ցոյց տալով. կամ մի խօսք տաելով նրանց կհեռացնեն խաղեց և կհանդարտասանեն, սակայն երեխանց նոյն խաղատեր զը-**

ուարթութիւնն է, որ բնութիւնը կմաստութեամբ առէլ է նրանց հասակին և բնաւորութեան համեմատ, չէ թէ կոտրել և Ճնշել այլ մանաւանդ խրախուսել պէտք է, որպէս զե նրանց ուժը և առողջութիւնը կազդուրէ, զբաղմունքը նրանց խաղ և զուարծութիւն անելով, որնոր գասախարակութեան մի զլսաւոր արհեստն է :

Թարգմանութիւն  
Մատթեասի Մամորիան,



# ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՌՀԻ

ԵՒ

## ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՀԱՅԱՍՏԱՆՈՒ ԵԿ ՆՐԱ ԱՅԺՄԵԱՆ

ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՅ

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՇԱՀԾ Ա.Զ.Ա.ՐԵԱՆՑ

~~~~~ԹԱՅՈՒԹԻՒՆ~~~~~

ՆԵՐԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՅ աղջի գոյութիւնն յիրաւի պատմութեան մի սքանչելեք է, որ շատ կողմանէ արժանի է Եւրոպացի զիտնականնեռուն ուշադրութեան և խորին քննողութեան :

Հայոց աղջն ամենեւին մի օրուայ համար չերևեցաւ աշխարհիս երեսին վըայ, որ մի անցաւոր պաշտօն կառարելոց յետոյ, շուտով էլ կրկին ոչնչութեան մէջ մննի :

Եղիսաբետիք, Ասորեստանցիք, Քաղղէայիք, Բաբելոնցիք, Փղղոտացիք, Մովաբացիք, Փրիւգացիք, Փիւնիկեցիք, Թրակիացիք, Կողմիսացիք, Լիւդացիք, Մեղացիք, Կապադովկիացիք, Ակիւթացիք, և ուրիշ շատ աղջեր, այլևայլ ժամանակ Հայոց ժամանակակից են եղել այս աղջերու մեծ մասն էլ նրանց հարեւան էին և շատերն էլ բազմութեամբ քաղաքակրթութեամբ, յաջոզակութեամբ, առեւտրական գործունէութեամբ և զինուորական զօրութեամբ նրանցից գերազանց :

Սակայն, միանգամ որ իրանց պաշտնը կատարուեցաւ, միանդամ որ իրանց վախճանին ժամը հնչեց, երկրիս երեսէն դուրս գնացին և աներեւոյթ եղան թողելով իրանց երկիրը աղջայնութիւնը կրօնը ուրիշներուն : Իրանց միջեց շատերուն ցեղն անգամ դադարեցաւ, ոմանք էլ գրեթէ և նշմարանք անգամ չժամունացին միշատակարաներու և պատմութեանց մէջ : Ո՞վ կարող է այսօր մի ֆիւնիկեցի, մի Ասւգացի, մի Կողմիսացի, մի Կապատովկացի կամ Փիւնիկեցի գտնել : Յաւիտեանս աներեւոյթ

եղան և նոր սերունդներու մէջ կորան, գնացին : Ընդհակառակն  
Հայք նրանց չափ հին լինելով և նրանց պէս Ճղակտոր և ջարդ  
ու փշոր լինելով էլի կան տակաւին աշխարհիս երեսին վրայ  
և պահած են իրանց լեզուն : Իրանց քրիստոնէական ապդային  
կրօնը իրանց հայրենի երկիրը, իրանց յիշատակարանները, սու-  
վորութիւնները և օրէնքները որոնք իրանց ազգայնութեան նման  
կինդանի են : Այս իրերուն նայելով կարելի է հասա ատել եւ  
պնդել որ այս ազգը տակաւին իր պաշտօնը չէ կատարել և դեռ  
ջնջուելու և կործանուելու վրայ չէ : Թէ որ Արևելքին առհմա-  
նուած է մի օր քրիստոնէաթիւնը ընդունելու, թէ որ քաղաքա-  
կըրթութիւնն այն աեղ պիտի մտնի, թէ որ այն աեղ բարք և  
վարք պիտի ամրանան՝ Հայք անշուշո մի մեծ պաշտօն ունին  
կատարելու այս վերապարզացման գործքին մէջ : Ասկոյ Թուրքաս-  
տանում, Եգիպտոսում և Պարսկաստանում բնակում են այլ-  
այլ ցեղերէ և ծեւերէ քրիստոնեայք : Հայեր, Յօյներ, Ասորիներ,  
Խալուքներ, Քոթովիքներ և Բրոթէւթանխներ, Բոլոր այս քրիս-  
տոնեաներու միջից Հայոց կրօնը դաւանողներն ամէնից բավա-  
թիւ են, իրանցից յեռոյ կուգան Յօյնք, Խալուք, Քաթովիք,  
Ասորիք, Բրոթէսթանէք, Այս քրիստոնեաներու Ճիշտ թիւն  
անցայտ պիտի մնայ, Քանի որ Թուրքաստանում քաղաքական վիճակ  
և կանոնաւոր աշխարհահամար չիլինիլ : Սակայն այս երկիրներում  
երկար Ճամբորութիւն անելով և կոստանդնուպոլսոյ պատրիար-  
քարանում եղած արձանագրերու մէջ արած հետազոտութեամբ,  
կարող եմ հաստատուն կերպով պնդել թէ Օսմաննեան կայսերու-  
թեան մէջ եղող Հայոց թիւը 3,000.000-ը կանց կենայ, Յունաց  
թիւն է ոչ աւելի քան 2,000,000-, Քաթովիքներունն է  
280,000, որոնցից 150 հազարը Ասորիք են, 40,000 կամ  
45 Հայք, իսկ մնացածներն են Յօյն և Խալուք, որ առ-  
հասարակ Եգիպտոսուառն են բնակում, Թուրով 150.000 կամ  
200,000 են, Ասորիք 150,000, Կեսարականք 100,000, Բը-  
րոթէսթանմթները որոնց մեծ մասը Հայք են 15 կամ 20,000-ի  
հազիւ կհաննին :

Յօյներն առհասարակ Անասովի ծովեղերոյ քաղաքներումն են  
բնակում, իսկ Հայք ամէն տեղ ցրուած են, ինչպէս ծովեղերեայ.  
Քաղաքներումն այնպէս էլ ցամաքայիններումը, ովանաւորապէս

մի միլիոնի կիսու չափ երախ, Տիգրիս և Եփրատ գետերու հովաներումն ու ափերումն են բնակում բուն Հայաստանու մէջ։ Մի միլիոնի չափ էլ փոքր Հայաստանու մէջ՝ 250,000 կոտանդնուպօլում, ուր տեղ աւելի բազմաթիւ են քան թէ Յոյները և մնացածներն էլ Փոքր Ասիում, Ասորիքում, Պաղեստինում և Եզիդաստում։ Ռուսաստանու Հայք 500,000—550000 են։ Պարսկաստանու Հայք 120,000-ից մինչև 150,000, Աւստրիայ Հայք 20,000-ից մինչև 25,000, Հնդկաստանու Հայք 12,00-ից մինչև 1,500։ Խոկ անկախ կովկասումն եղող Հայք են 15,000։ Բոլորը մէկանց մօտ չըրս միլիոն։

Այս ազգին սկիզբն ամենահին ժամանակներու կհասնի և ազգաբանութիւնը կարծես Ասուծոյ ժողովրդեան ազգաբանութիւնից աւելի հին լինի։ Հայաստան, հէնց առաջին անդամնումն Մովսիսի գրքերում կերևայ, ինչպէս Եղեմն, և որոյ մէջ առաջին մարդը բնակեցաւ։ Նոյն գրքին մէջ երկրորդ անդամը ևս երևան է գալի, երբ Աստւած Նոյին սպասակարուելու համար մի տեղ է ցոյց տալի Արարատ լերան գագաթին վրայ 2։ Այն Հայերն որոնք բնիկ են այս աշխարհիս մէջ և միշտ այս լերան չորս կողմերումն են մնացել խումբ, այնպէս են համրգուել թէ իրանք Նոյայ որդի Յարեթայ ցեղեցն են։ Բայց ըստ Մովսիսի Խորենացւոյն 3 որ մի զգուշաւոր և Ճշմարտախօս հեղինակ է, Հայերն Հայկից են յառաջ գալի, որ կը թոռն կամ թէ աւելի Ճիշդն ասելով թոռնորդի Յարեթայ 4։ Այս ազգը թէւ ծանօթ է հին և նոր ազգերուն, այլևայլ անուններով։ Արմէն 5, Արամեանն, Թոդ—Արման։

1 Գիրք Ծննդոց Բ. 8—14։

2 Նոյնը լ. 4։

3 Խորենացւոյն որամատթիւնը Աւրողիայ Պլիստոր ազգերուն ամի՞ն, չեղուութ թարգմ անուած է։

4 Մով. Խոր. Հայ պատ Գ. Ա. ԴԼ. Բ.

5 Կըսագուիներից։

6 Ասորիներից և Հրէաներից։

7 Հրէաներից։

Արմէնի 1, Սրման 2, Սոմէսի 3, աակայն Հայք, իրանք իրանց ուրիշ անուն չեն տալ բայց միայն հայ անունը, որոյ յոգնակին է Հայք և երբեմն Թողարկմայ և Թորդոմեան 4 բատ Հայոց ուղղ զագրութեան և երբեմն էլ Ասքանապեան 5 : Այն ժամանակին, որ կարծում է Հայք ապրում լինին, Բաբելոնեան աշխարհակաշնութեան ժամանակին կհանի. հետեւաբար Քրիստոսի թւականից 2,350 տարի յառաջ: Հայ պատմագրներու խօսքին նայելով այս ժամանակիներումն է, որ Հայկ Բաբելոնից չու անելով իր ընտանիքին և իր ուղեկիցներուն հետ միասին, որոնք թուով մինչև 300 են եղել 6 գալիս է Սրարատոյ հիւսիսային Արևմուտքն է հաստատում, ում Երասին և Եփրատ գետերու հովիներում Վանայ լճին մօտ և երկրին բուն բնակիչներն իրան հնագանդեցնելուց յետոյ, Հայ կամ Հայկական ազգայնութիւնն է հաստատում, որնոր պիտի պահպանուէր այնպէս սքանչելի կերպով, այնչափ բնական, լնկերական և քաղաքական կործանումներից, փառամոլ աշխարհականերու ջարդ և մահ սփոռող պատերազմներից և Սկիւթացի, Արաբացի և Սարմատացի քարբարուներու արշաւանքներից յետոյ: Միսոստրիմներու, Շամիրամներու, Կիւրուներու, Աղեքսանդրներու, Արշակներու, Սկիւթացւոյ, Հռոմացեցւոյ, Սասաններու, Թաթարաց և Թուրքաց աշխարհակալու թիւնները այս ազգն ուրիշ ազգերու նման բնաջինջ անելու տեղ ընդհակառակին նրան քաղաքակրթութեան նոր նոր տարեցքներ տուին, որոնք նպաստառոր եղան նրա գրականութեան, Ճարուարութեան և երկրագործութեան և նրա գեղեցիկ արուեստներու յառաջանալուն :

Եւրոպացի շատ գիտնականներ նորերումն այս երկրին և նրա պատմութեան ծագմանը վըսյ պարապեցան և հասորաւոր

1 Պարսիկներից :

2 Արաբացիներից :

3 Արացիներից : Սոմէսի Վրաց լեզուով նշանակում է հարաւային, հարաւու ժողովուրդ, վասն զի Հայք Արաստանում հարաւային կողմումն են. Սոմէսիթ, Հայաստան :

4 Հայ պատմագրիները :

5 Կորիւն, Վարք Արքայն Մեսրոպայ, Առվ, Խոր, Գ, Ա, Պ, Ի, Ֆ,

6 Նոյնը Գ, Ա, Պ, Փ :

գրքեր շինեցին, ամէն մինը նրա ծագութն իրարմէ լսու մեկնելու և պարզելու մնջով։ Բայց առ հասարակ սրանք առաջնորդ ունինալով իրանց՝ Հայաստանու համար օտարական բանագէտներ և շատ անգամ էլ տարակուսական հոգւով ուղղուելով, իրանց մէջ գտնաւեցան ոմանք, որ մինչեւ Հայկայ գոյութեան վրայ անգամ տարակյա ունեցան, իբրև թէ նա մի առասպելական անձն լինէր, ուրացան թէ աւանդական և թէ պատմական վզոյցներն ու կարծիքները որոնք այս ազգին հոգւոյն մէջ ընդհանրապէս այնչափ տարածւել բնաւորուել են։ Հեշտ բան է մի բան մերժելն ու ուրանալը բայց այն բանն որ կարող չեղան անել այս ազգին ծագումը մի ուրիշ կերպով ճշգրտելն ու մեկնելն է, վասն զի այս ազգը քրիստոսի ժամանակներում կար նոյնպէս հինգերորդ, եօթներորդ, տաներորդ, հինգեւտասաներորդ գարերութն էլ կար Քրիստոսից յառաջ, նոյն և մի երկրին մէջ, նոյն և մի անունը կրելով իր վրայ միշտ ամփոփուած Արարատ լեռան բոլորակիքը Եփրամ, Երամի և Տիգրիս գետերու անկունքներու մօտ։

Իմ գիտեցած օտարական մատենագրերու մէջ Աղէքսանդր Բագմավէպն առաջինն է Հայոց գոյութիւնը մինչեւ քսաներորդ դարն հասցնողը Քրիստոսից յառաջ։ ասումէ թէ «Հայք Փիւնիկեցւոց վրայ մի արշաւանք անելով և նրանց վրայ մի յաղթութիւն տալով Արքահամի քեռորդին գերի տարան 1»։ Լաւ գիտենք, որ Եբրայեցւոց նահապետը նոր թւականից 2000 տարի յառաջ էր ասպրում, և որպէսզի Հայք կարող լինէին Փիւնիկեցւոց դէմ այնպէս հեռաւոր տեղոյն պատերազմ բայց անելու որոնք ծովային զօրութիւն ունէին և զօրաւոր ու ծաղկեալ ալլ էին, գրեթէ քիչ որ տանք Հայոց, պէտք է որ գոնէ երկու գալու չափ գոյութիւն տանք Փիւնիկեցիներից յառաջ, այս կերպով կդանենք և Մովսէս Խորոնացւոցն Հայոց ազգին ծագման համար նշանակած թուականը։ Անտոստի վերին Ասիա արշաւելիո 1490-ին, Քրիստոսից յառաջ, Արգունաւորդներու դէպի կողմիս արշաւելիս 126 ին, որնոր սահմանական Պամիրու Պամիրու, պատրաստութիւն աւետարանական, Յօդ. Բ. Ե. 18. Սուրբ զրոց այս պատերազմի մասին պատմածը Կոտարերի Աւագիսի պատմածիոը, տես Մննդ. Ճ.Դ.

նակից է Հայուստանու, Շամիրամայ պատերազմին 1300-ին և Տրովադայու պատերազմում 1190-ին Հայուստանու և Հայուստանցւոց անունները կրկին կրկին անգամ յիշուած են 1. Տակիտոս 2 առամ է, որ Թէքէի հրապարակական շնութեանց վրա փոքրգուած արձանագրութեանց մին է եղել բամազէզթագաւորի կիւպիոյ Եթոալիոյ և հայոց ու Աստրւոց բնակած բոլոր երկիրներուն յաղթելը :

Այս տեղ առանց կամենալու Հայոց աշխարհին կամ թէ նրա երկրագրութեան ամբողջ պատմութիւն անելու, ջանք կամեմ միայն նրանց գլխաւոր իրեն յիշասակելու : Այս Ծրադիք Պատմութիւնը վեց այլեայլ շըջաններու է բաժանւում, որոնք իրարից որոշում են աւելի նշանաւոր դէպքերով : Առաջին շըջանումը հայկական ազգայնութիւնը պատմութեան մէջ երեւումէ և կազմէ ում : Երկրորդումը Հայուստան աշխարհը սինահանգ է լինում Սեւեկացւոց պէտութեան . Երրորդումը կրկին անգամ իրբեւ անկախ տէրութիւն է կանգնեւում Արշակունեան ձեռքով : Չորրորդումը նորունց Հայուստան աշխարհը ընկնում է հետպհետէ Յունաց, Պարսից և արաբացւոց տիրապետութեան տակ : Հինգրորդումը վերաբին վերահաստատում է այլևայլ անկախ տէրութիւններով և վեցերորդումը Ռուբինեանց թագաւորութիւնն է ձեւանում : Այս վեց բաժանումներու վրայ մի եօթներորդ էլեմ աւելացրել որոյ մէջ խօսում եմ Հայոց իրանց երկրից չուելը և օտար երկիրներումն գաղթելը և այն վերջին դէպքերու մասին, որոնք պատուհեցան վերջին դարումն իրանց երկրում և այս աղդին այժմեան վիճակին վրայ :

1 Աստրաբն և Յուստինոս, Պատ. Փիլիպոսի Գ. ԽԲ. զԼ. Բ. և Գ. Հայոց մի Եւրոպական ծագում են տալի, վլատութիւն բնրելով, թէ մի Սոմինոս անուն Թեսաղոնիկեցի Յասոնի դօրավարներից այս երկրը նուածեց ու նրան վրայ իր անունը դրաւ : Հերոզառոս Գ. Ե. զԼ. ՀԳ. Հայոց մի Փրիւզիական ոկիզը է տալի, որնոր նոյնական կըրոսական ծագում ունենալու կերթայ Որչափ որ քիչ հաւանական երեւայ առաջին անգամումն Հերողոսոսի կարծիքը, պատմաբանօրին ճշգրաւած է, որ Հայք իրանք իրանց Աստրանադեան են անուանում, որնոր ցոյց է տալի մի հաղորդակցութիւն ծագման կողմանէ Ասքանաղներու հետ որոնք Փրիւզիայի նախնի բնակիչներն են :

2 Դր. Բ. զԼ. Ճ :

# ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

(2350-ից մինչեւ 330 Յիսուս Քրիստոսից յառաջ)

ՀԱՅԿ դարձ է անում Բարիլոնից իր անողն ու անդամններից հարիւրի չափ մարդիկներով ու գալիս բնակում է Վանայ Ծի հիւսացին արևելեան կողմը Եփրատ ու Տիգրիս գետերու ակոնքներու մօտ։ Սի Ճակատամարտի մէջ սպանում է Բէլին կամ Բէլանին, Բարելնի թագաւորին, որ իրա վրայ էր յարձակել և այնպէս Հաստատում, հիմում է Հայ, կամ Հայկական ազգայնութիւնը։ Իր ցեղը, որ երբեմն անկախ և եղեւն հարկատու է լինում Բարելոց, Ասորեստանցոց, Մեղաց, և Պարսից, իր ազգը 2,000 տարւոյ չափ կառավարում է։

Հայք, թէև բնութեամբ խազաղասէր և երկրագործ ժողովուրդ են ընում, ասկայն Հայկայ սերնդոց մի քանիսը մին ժամանակ իրանց աշխարհից դուրս են գալի և գնում են աշխարհակալութիւն անելու, կամ բնակիչներուն աճելուն և բաղմանալուն համար, կամ աւար ու կողովուա անելու ցանկութեամբ կամ թէ իրանց հօտերաւն լաւ լաւ արօններ Ճարելու համար։ Հայք իրանց զլուխ ունենալով քաջ աշխարհակալն Արամ, դուրս են գալի բուն Հայաստանից և արեմանեան կողմում Եփրատ և Աղիւսի մէջ աեղ գտնուած երկիրը դրաւում և իրանց են իւրացնում, որնոր յետոյ կապադովիլիա կոչեցաւ։ Հարաւային կողմումն էլ Միջագետոց և Մէլիտինի մի մասն որնոր յետոյ Փոքր Հայք ասուեցաւ։ Հիւսիսացին կողմումն մինչեւ Կիւլոս (այս օրուայ կուր անուն գետը) տարածուած երկիրը։ Արևելեան կողմումը մինչեւ Կասպից ծով տարածուած աշխարհը։ Ատրագատականի մի մասն էլ միասին։ Այսպէս յառաջը բերում Մովսէս Խորենացին Հայաստանու աստիճան առաջանական ընդարձակութելը տասներեք դար Յիսուս Քրիստոս

սից յառաջ 1 : Դիոդորոս Սիկիլիացին 2 այս պատմութիւնը մի դար յետոյ կատարուած մեր յառաջն է բերում մի ուրիշ կերպով : Նա ասում է «Նինոս . . . իր զօքքերը Հայաստան մոցրուց և բնակիչները սարսափեցուց մի քանի քաղաք աւարի առնելով : Բարսանիս նրանց թագաւորը տեսնելով որ անկարող է դէմ դնել պարզեներով իր թշնամյն յառաջն է գալի և հպատակութիւն է ցոյց տալի նրան : Նինոս էլ մեծանձնութեամբ է վարում նրան հետ և նրան Հայաստանի թագաւորութիւնն է տալի նրանցից միմիայն օդնական զօքք պահանչելով :

Արմաւիր կամ Արամայ — իր, Կարնի, Տիկրանակերտ, Ցուլսկերտ, Շամիրամակերտ (կամ Շահ - Միհր-ա-կերտ,) որոնք քաղաքի անուններ են կրել իրանց վրայ, այն ժամանակն ուրիշ բան չէին բայց միայն մի քանի հարիւր հիւղերու խումբեր որոց մէջ ձմեռուան ժամանակն էին անցկացնում և ուր տեղ պատսպարում էին ցրտի դէմ կենդանիներու երամակները էլի նորունց գալնան դուրս թողելու համար : Հայկայ սերունդները երկար ժամանակ իրեւ երկրագործ կամ հովիւ թագաւոր կեանք վարեցին. միմիայն Շամիրամակերտ քաղաքը Հայաստանու շեղիողիսը. որնոր հաւանական է արեգական և ըստնին նուիրուած լինի, երեւում է, որ այն ժամանակ վարդարուած լինի խորհրդաւոր արձաւններով. որոնք փորձուած են սրածայր սարին մէջ, գերեզմանատեղ լինելու համար, ինչպէս Եգիպտոսի բուրգերը հովիւ թագաւորներու ժամանակ Հայք իրանց տիւրած երկրներում, մանաւանդ կապադովիլում և Պոնտոսում, կրակապաշտութիւնն ու Անայիտ շաստուածուհին մացրեցին :

Հայաստան աշխարհը թէև հայկազնոց ժամանակ Ասիա ամէնից զօրաւոր և ամէնից ծաղկեալ աշխարհը չէր, ինչպէս էին Ասորեստան և Պարսկաստան, սակայն միշտ իր կարեւորութիւնն ունէր, իրան դաշնակցութիւնն ու միջնորդու-

1 Պատմութիւն Հայոց Աշխարհին Գր Ա. զր. Ժզ. և ԺԴ.

2 Գր. Բ. զլ. Ա.

թիւնը միշտ ինդրեցին մեծամեծ աշխարհականերն ամեն անդամն որ խնդիր եղաւ այն ժամանակուայ աշխարհիս վեճակին վրայ : Ուստի տեսմում ենք , որ Զարմայր Հայաստանու թագաւորը , Պրիամու<sup>1</sup> օգնութեան է զնում Տրովադայու պաշարման ժամանակ 1190 թուին , Հայոց և Ասորեստանցւոց զօրքերով : Պարոյը , մի ուրիշ Թագաւոր Հայաստանու , գնում է 620 թուին Կիաքսար Մեղաց թագաւորին հետ Բարելու նեան<sup>2</sup> պետութիւնը կործանելու : Հբաշեայ 600 թուին տաւ լիս է Նաբուզորդոնոսորին մի զօրաւոր բանակ Երուսաղէմը<sup>3</sup> կործանելու համար : Տիգրան Ա. 535 թուին Կիւրոս Պարսից թագաւորին հետ զնում է Մարաստանը<sup>4</sup> և Ասորեստանը<sup>5</sup> նըւ ւաճելու : Հայկական բանակը միանում է Քսերքսէսին Ցունաստանը<sup>6</sup> զրաւելու : Վահէ վերջին թագաւորը Հայկայ<sup>7</sup> հարստութեան , 50,000 հետեակ և 7,000 ձիաւոր զօրքով պատերազմում է Աղէքսանդր Մակեդոնացւոյն դէմ , Դարեհին ու իր տէրութիւնը պաշտպանելու համար : Արակէլայի ճակատամարտումը սպանում է Վահէ 330 թուին և Հայաստանն էլ 2,020 տարուայ տեսականութենից յետոյ փափռխութիւն է կորում միանդամայն թէ իր սահմաններումը և թէ իր հարստութեամբը և իր կառավարութեան կերպին մէջ , երկումասն բաժանուելով Մելեկացւոց և Հիւրկանիոյ թագաւոր Գրաւամիեռների միջում :

**Վահայ<sup>8</sup>** քարաժայուհրու մէջ փորուած անձաւները , ան-

1 Մով. Խոր. Պատ. Հայ Գր. Ա. ՊԼ. ՃԲ.

2 Երեմիա Գր. Ա. 27 :

3 Մով. Խոր. Պատ. Հայ. Գր. Ա. ՊԼ. ԻԳ.

4 Նոյնը Գր. Ա. ՊԼ. ԻԶ.

5 Քաննավոր , Քիրսուէստա . Գր. Գ. ՊԼ. Ա. Գր. Ը. ՊԼ. Գ. Ի. Գ. Հայկական բանակին թիւը , որնոր Կիւրոսին օդնական եղաւ այս պատերազմում համում էր 4,000 հեծելազօր և 40,000 հետեւակ , նոյնչափ զօրք էլ Հայաստանումն էր մոտմ երեխրը պաշտպանելու համար :

6 Հերազդոտոս Գր. Է. ՊԼ.

7 Կաէսիաս Գր. Գ. ՊԼ. Գ. Օրմանէսի և Ամեթրոսդէսի վրայ խօսում է , որոնք ասում է , Արակէլայի ճակատամարտին մէջ Հայոց բանակին հրանանատարհելոն էին :

8 Հայք Համբրամակերտ են ասում այս քաղաքին , որ նշանակում է

համար արձանագրութիւները սեպանե տառերով, որոնք այլու ևայլ կողմերից այս ապառաժի վրայ ծածկուած են, ինչ պէս նաև Մանազկերտի և Արտիմէդի<sup>1</sup> ժայռերու վրայ, ուրոնք հին քաղաքներ են հարաւային Հայաստանում, Դարիոնասի (տաճկացմէ Պայտազիտ) և Պտէրիոյ<sup>2</sup> որոնք փոքր Հայաստանում քաղաքներ են Ալիւսի մօտ, և ոյս վերջերում Համբառն և Շարլը Տէքոիէր հնագէաներու գոտած, Եփրատի վրայ, Անւոյ և Տիգրանակերտի<sup>3</sup> յիշտակարանները ցոյց են տալիք, որ քաղաքակրթութիւնն ու արուեստադիտութիւնը, ինչպէս նաև ճարտարագետութիւնն ու քանդակակործութիւնը մի կարի նշանաւոր աստիճանի են հասել Հայաստանի մէջ այն հին ժամանակներում, երբ Հռովմհայելու դուրս

Շամբառից շինուած քաղաք, Աերտկամ կերպ բանը, Հայ և Զէնդ լեզուներում հասարակ է և պատասխանում է Սլավեան կրառ և Կորու բառին, որ կնշանակէ քաղաք: Շահ-Միհր Զէնդ լեզուով կնշանակէ թագաւոր կամ առուուած-արեգակն, Վան քաղաքը երեւում է, որ հնումը արեգական պաշտամնն նույիւուած լինի, լինչիքս Արդամշա, մի ուրիշ քաղաք նրա կշտին Անահայ էր նույիւած և Ռոտան նոյնպէս մի ուրիշ քաղաք նրա մերձաւոր, Աստղան էր նույիւած կամթէ Լուսուի. (Լուսունոյն) որուն Հայք պաշտում էին Մահիկ-անունով, կաղակովկիացիք. Մաա կամ Մէն անունով, որոնոր Հումբայեցիք Մանուխի Դաբճըմն, նըրա համար, որ Լուսինն էր ամիսներու քաժանաւումը որոշողը : Մովսէս Խորենացին իր Հայոց պատմութեան մէջ, Գր. Ա. Պ. Ֆ. այս քարայրներն իրանց սեպանե տառերու արձանադրութիւններովը Շամբիրամայ է տալի, Նա կարծում է, որ այս քարանձաւները թագուեւոյ գանձերը պահելու համար ըլնին, կամ թէ նրա անառանցը, սակայն այս միջոցին Պ. Շարլ Տէքմիէի քննութիւնները եւ ուրիշ ճանապահնորդներու խուզարկութիւնները, բաւականին նրանց ինչ բանի համար սահմանուած լինելը յայտնում են, որոնք զերևզմանատեղի լինելու համար են եղել թագաւորներուն և իշխանապետներուն, որոնց Շահ-Միհրհերտ բնակարանն էր, Խական մինչիւ այսօր չկարգացուած արձանագրութիւնները, լիշտակուել են արդէն տասնոււերիք դար յառաջ Մովսէս Խորենացիից Գր. Ա. Պ. Ֆ. եւ առաջին անդամ էլ օրինակուեցան դժբաղդ Շքուլցի ձևուքով որ սպանուեցաւ Քիւրդերից 1827 թուին :

1 Անահիտ չաստուածւոյն նույիւած քաղաք :

2 Այսօր Պողաս—քէօյ:

3 Դիմոր-բէքիր:

Էր գալիք իր հիւղերից : Հայաստանու բերրի դաշտերն այն ժամանակ առատութեամբ ցորեն գարի . բամբակ, բրինձ, զինի, որդանկարմիբ, տորոն էին յառաջ բերում և հովհաներն էլ որոնք լիքն էին երեւելի արօսներով: անհամար ձիաներ, գոմեշներ, ոչխարներ, այծեր, եղներ կովեր և ուրիշ ընտիր ընտանի կենդանիներ էին սնուցանում: Հայքո որ առ հասարակ խելք ժիր և զդաստ են, թէ ցամաքով և թէ ծովով վաճառականութիւն էին անբւամ, զբեթէ այն ժամանակուայ բոլոր ծանօթ ազդերու հետ : Արեւմտեան հարաւումը Տիւրոսի և Տարսոնի հրապարակներնում: Հայաստանու ձիաններովն ու ջուրիններովն էր առուտուր ըլնում, որնոր շոտ անդամ և սուրբ Գիրքն էլ կյիշատակէ<sup>1</sup> Արեւելեան հարաւումը Բաբելոն և Նինուէ, Եփրատ<sup>2</sup>, Տիդրիս գետերից Հայաստանու դիմին, միրգը, փայտը տախտակն ու ուրիշ վաճառաքներ էին առնում: Արեւելքում Հայ վաճառականները Երասխ և Կուր գետերից գնումէին Կասպից ծովը<sup>3</sup> և այն տեղից էլ Եաքսարդէս և Օքսուս գետերից Բագդրիացւոյ: Սոկորիանու, Պարթեաց և Հնդկաց աշխարհներուն էին գնումէւայս տեղերից ապրանքներ բերելով զբաւումէին յետոյ Սև ծովով վրայով Յունաստան և Իւալիս: Կովկասու Խորին հիւսիսուն եղած աշխարհներից, երեսումէ . որ Հայ վաճառականներն օգուտ քաղած լինեն, ուրոնք յետոյ Սովոհս Խորենացւոյն ոյնչափ մանրամասն տեղեւկութիւններ հաղորդեցին իր երկադքութիւնը շնորհու համար:

**Ա**րեւմտեան Հայաստանում, Գանենոփնն<sup>4</sup> ասումէ, թէ «Առմէն տեսակ լնտիր պարէն և պաշար դանուեցաւ, արջառ, ցորեն, պատուական հստով հին դիմի, չամիչ և ամէն տեսակ ընդեղէն . . . նոյնոպէս և ցորեն, գարի, բանջարեղէն և դաշտերովէլ լիքը գարեջուր» մի փոքր յետոյ էլ տւելացնումէ «որ այս երկիրս մէջ (Հայաստանու) ձիերը Պարսկաստանու «ձիերից մանր են, բայց աւելի կրակու են» : Հայաստանու միշտիայն այս մասը տարին 20,000 ձիու մի հարկ էր տալիք մեծ արքային :

1 Եղեկիէլ իէ. 14. լմ. 6.

2 Հերոդոտոս Գր. Ա. զւ. ՑՂԴ.

3 Ընդհանուր աշխարհազրութիւն, Մալղ-Բրէօնի. Յօդ. Ա. եր. 111.

4 Անաբազ Գր. Դ. զւ. Դ.

Հայկազանց ժամանակ Հայաստան եկող այլևայլ գաղթառ կանելը նրա բազմամարդ և զօրաւոր լինելուն մի նոր տարերք եղան : Ամէնից հին գաղթականներն երևում է, որ Եղիպտացիք ըլնին, որոնք, ըստ Հերոդոտոսի<sup>1</sup> Սեսոստրիսը պէտք է լինի բերած, որանք Փաղ գիտի ափանց վրայ հաստատուեցան. այս Փաղ գետը հիւսիսային Հայաստանից է դուրս գալի : Վովսէս Խորենացին<sup>2</sup> որ այս գաղթականներու վրայ խօսում է նրանց Գանանացի կոչելով, ուրիշ բաներու մասին տարբերում է նրանից : Յետոյ գալիս են Լեվկա—Ասորիքը կամ սոխտակ Ասորիքը<sup>3</sup>, որոնք նոյն աշխարհակալը կամ թէ Ասորեստանեայց մի ուրիշ բռնաւոր տարուծ է ի Փաքք Հայք : Թէկղաթ-փաղասար, Նինուէի թագաւորը, Գամասկոսն առնելուց և Յազինն նոյն երկրին թագաւորը սպանելուց յետոյ, նոյն երկրից դուրս բերաւ բնիկներու մի մասը և, տարաւ նրանց Կիւրոս կամ Կուր<sup>4</sup> գետին եզերներում բնակեցրուց : Լեվկա—Ասորիք նվարատ և Սլիւս գետերու մէջ տեղում դժնուած երկրում հաստատուեցան, որնոր հնումը Փոքք Հայք կամ Կապադովիկիա էր կոչւում և որուն գլխաւոր քաղաքն էր Պտէրիս : Այս գաղթականներն աձելով և բազմանալով կարի մեծ նշանակութիւն ունեցան : Վեցերորդ դարումը սրանց վրայ յարձակուելով Կըրքանու և նրանց հետ վատ վարուելով, մի մասամբ նրանցից գերի տարաւ, միւս մասն էլ վախաւ. գնաց մեծին Հայոց արեմը՝ տեան հարաւային նահանգներումը : Այն տեղ միանալով իւրանց աղգակից Ասորեստանցոց թագաւոր Սենեքերիմայ<sup>5</sup> Աղրամէլիք և Սանասար որդւոց հետ, սաստիկ բազմացան :

1 Գ. Բ. Պ. Պ. Ժ. Ժ. Դ. Դ.

2 Հայ. պատ. Գ. Ա. Պ. Պ. Ժ. Ժ. Դ. Ժ.

3 Հերոդոտոս Գ. Ա. Պ. Պ. Հ. Հ.

4 Ասորիք, Պաղեստին Ցուղայստան, գործ Լաորափ-Համիկ եթ 5.

5 Թագաւորք, Ժ. 37, Ետափ Ա. 38, Տօրիք Ա. 21.

նոյն ժամանակից Հայք գատաստանական գործքերումը դորածածեցին. նոյնպէս և քաղաքականութեան. կրօնին մէջ, մինչև Քրիստոսի թուականին հինգերորդ դարը<sup>1</sup>:

Ասորւոց գաղթականութեան նման երևելի մի գաղթականութիւն էլ Պաղեստինից եկաւ և հաստատուեցաւ Հայաստան: Մովսէս Խորենացին<sup>2</sup> յիշատակումէ այսառաջն անդամ Հրաշէի ժամանակ, որ իրա Նարուգործնոսորին արած օգնականութեան փոխարէն, նրա արշաւանքին ընդգէմ նզիստուի Նիքաֆովլ և Նրուսաղէմից Յովակիոմ թագաւորներուն վարձ էր արել բաղմաթիւ Եբրայեցի գերիներ և բերել իր աէրութեանց մէջն էր բաժանել: Սակայն մնաք ճիշշդ գիտենք որ Նարուգործնոսորից յառաջ Սաղմանասար, նրա նախորդ Ներից մինը, զարկելէր 750 թուին Խորայէլացւոց թագաւոր Ովստին, կործանելէր Սամարիան և տառը ցեղը Նիքատայ գէնն էր տարել, այսինքն Հայաստանու հարաւային նահանգներումը:

Մինչդեռ Նարուգործնոսոր Նրուսաղէմից միայն 100,000 գերի դուրս բերաւ: Այս գերիներու մէջն էր դժոնւում Սամբաս, կամ Շամբաս-Բաղրատ, որ նշանաւոր անձն էր և Բաղրատունեաց տան ցեղապետ, որ տամնութիւնդ դար յետոյ պէտք էր, որ փառաւոր էր Հայաստանու պատմութիւնը, նրան մի թագաւորական փառաւոր հարստութիւն տալովիր տանից: Եկրատոնու, Շօշու, Բաբելոնի, Գաէսիփոնի և Նինուէի Հրէայք, աեսնելով Հայաստանցւոց կրօնին մասին ունեցած թոյլորւութիւնները և առեւորական հաղորդութիւնները, եկան և նրանց հետ միանալով նրանց թիւը աւելացրին: Տիգրան Բ. Քրիստոսից 88 թուից մինչև 63 թիւ յառաջ Սելեկացւոց վրայ իշխան լինելով Պաղեստինից նորունց բազմաթիւ գաղթականութիւն դուրս հանեց և բերաւ Հայաստանում տեղաւորեց: Քրիստոսի թուականին երրորդ դարուն վերջերը Հայաստանում հաստատուած Խորայէլացւոց թիւը, որոնք մի մասամբ քրիստոնեայ էին դառել հանումէր լստ Փաւատոս Բուղանդացւոյն 70,000 անից աւելի և մինչև 400,000 անձն:

1 Մովլ. Խոր. Հայ. պատ. Գր. Ա. զլ. Բ. և թ. Գր. Բ. ղլ. Ժ. և Ա. թ. Գր. Գ. զլ. ԾԳ:

2 Հայ. Պատ. Գր. Ա. զլ. Իթ. Գր. Բ. ղլ. ԺԴ. Ժ. ղլ. ԺԴ. Կ. ԺԹ.

Հայաստանու բերրի արօաներն ու հարուստ քաղաքները  
Սկիւթացի վայրենի հէներն որոնք Ռւրալ գետի և կաս-  
պեանծովու եզերքներում չոք ու ցամաք երկիրներումը բնածինն  
են, իրանց վրայ քաշեցին՝ Տայք և Սադք կոչուած ժողովրդները  
որոնք Մկիւթացի ցեղեր են<sup>1</sup>, կամ իրանց առաջին չու անելու-  
ցը, կամ թէ ստիպուած Մասակեթներից, Քրիստոսի թուականից  
624 տարի յառաջ, Մոտիէս թագաւորն իրանց զլուխ ու-  
նենալով մի յարձակում արին Հայաստանու հիւսիսային ա-  
րեմանան կողմերում:<sup>2</sup> 23 տարի շարունակ ամեն տեսակ ա-  
ղէտք և չարիք գործելուց յետոյ, Տայք և Սադք բոլորովին Հա-  
յաստան բնակեցան, և իրանց անունները տուին, առաջինները  
Տայոց երկրին, Գուէնովոնի Տաօք ասսած մեծին Հայոց նահանգնե-  
րից մինը, որուն Թուխարք<sup>3</sup> զլիսաւոր տեղն եղաւ, երկրորդները  
Սադաստան գաւառին կամ Մակալէնի<sup>3</sup>, իրանց զլիսաւոր քա-  
զաքը, որուն այսօր Շաքի է առում, Նուխի Ռուսերից, Կուրից  
մի փոքր հեռու:

### ԵՐԿՐՈՐԴ ՇԲՁԱՆ

(330-ից մինչև 150 Յիսուս Քրիստոսից յառաջ)

ՎԱՀԵՒ մեռնելուց յետոյ, որ վերջին թագաւորն եղաւ  
Հայկաղանց ցեղին և որուն մահը 330-ին ողատահեցաւ, Հա-  
յաստան անտէրութեան մէջ ընկաւ. մի մասը կողովուտ եղաւ  
Մակեդոնական պետութեան, միւս մասն էլ չի գիտացուիլ  
թէ ի՞նչ տեսակ իշխանութիւն ունեցաւ: Մովսէս, Խորենա-  
ցին այս միջացուայ Հայրեննացը վիճակին վրայ մի խորին  
լութիւն է պահում, միւս ազգային պատմագիրներն էլ նոյն-

<sup>1</sup> Հերոդոտոս Գ. Ե. զ. 27.

<sup>2</sup> Թոկարի, Մկիւթացի ազգ, ըստ Ամիանոսի և Պտղոմէոսի, որոնք  
յառաջնումը Մէրիքայումն, հիւսիսային Հնդիկ բնակել:

<sup>3</sup> Սագաշէն նշանակում է Յոյն Սագաստացւոց աւան:

պէս լուռ են կենում այս մասին : Այս շրջանը մի աղօտ լուռ սով լուսաւորելու համար, ստիպուած ենք գնալ և ուրիշ օտարական աղբւարներից մի քանի իրեր քաղել որնոր շատ անդամ մալրական և առանց արժողութեան են : Սակայն մի կարեւոր խնդիր է մնում լուծելու, այն է, Հայաստանու ամբողջ կամ թէ ոչ մի մասամբ միայն նուաճուելը Մակեդոնացի դիւցազնից :

Աստ ինձ, Հայաստան միայն մի մասամբ նուաճուեցաւ : Խմկարծին այն է, որ Վահէի սերունդները, հարաւային արեւմտեան Հայաստանը Աղէքսանդրի ձեռին ընկնելուց յետոյ , Հիւսիսային արեւելեան Հայաստանու լեռնոտ մասերումն երկար ժամանակ իրանց անկախութիւնը պահպանեցին և թէ յետոյ օդնեցին քաջութեամբ Արշակունեաց ցեղին, երբ նրանք բոլորովին Սելեվկիաց իրեք Հայաստանից դուրս տրին; Նմանապէս կարծումեմ, որ Աղէքսանդր երբէք Հայաստան ոտք չդրեց և թէ որ Քունասոս Կուրախոս նրան Երասխի ափանց վըրայ է մեղցոյց տալիս այն Հայաստանու Երասխը չէ, այլ Պարսկաստանու, որնոր թափուումէ Պարսկական ծոցին մէջ կամ թէ Հիւրկանիոյ Երասխին ուր տեղ գնաց Փրատափերնիսի վրայ պատերազմելու : Կուրախոս իր պատմութեան Զգբըումը, Հայաստանը Աղէքսանդրի նուաճած երկիրներու թուումն է հաշւում: Յուստինոս ասումէ, որ Աղէքսանդրի մահուանից յետոյ նըրա պէտութիւնն իր բանակի զօրավարք իրանց մէջքաժանելու ժամանակ, Հայաստանը Փրատափերնիսի ընկաւ, որ էր ըստ Սարաբոնի Հիտարնեսից, որ էր մինը եօթը Պարսիկ իշխաններից, որոնք Սմերդիս մոգը ուղանել էր: Ուրեմն Փրատափերնիսի որդիք իշխեցին Հայաստանու մի մասին վրայ թափաւորական անունով մի գարուց աւելի, Օրոնտէս վերջին թագաւորն եղաւ այս ցեղին : Նրա մեռնելուց յետոյ Հայաստանը բաժանուեցաւ Արտաշեսի և Զատրիադի մէջ :

Հարաւային արեւմտեան Հայաստանը, Վահէի մահուց յետոյ, Փոխարքայի տեղ մի վերակացու ունեցաւ, Միհրան անուն, թնիկ երկրացի, որուն մի շար վերակացուներ յաջորդեցին Սելեկիոյ արքունեաց ձեռքով, երբեմն բուն խի Հոյերից ընտրուելով և երբեմն էլ Ասորոց թագաւորներու դրկած զօրավարներու

միջից։ Նէոպողոմէոսին մրբկալեց իշխանութենից և մեռնելուց  
յետոյ, Արդուարդ Հայկազն իշխանն իր հայրենեաց իշխանու-  
թիւնը ձեռք բերաւ և մեռնելիս Արտաւազդ իշխանին յանձնեց։  
յետոյ եկաւ Արտաշէս։ ամենից նշանաւոր անձն այս շրջա-  
նումը։ Վեհանձն քաջ և պաշտպան արհեստներու, երկրա-  
գործութեան և վաճառականութեան և հասարակաց բարե-  
կեցութիւն սիրող մարդ ըլնելով այս Արտաշէսը կամ Արտա-  
շասը ըստ Պաղիբոսի<sup>1</sup>, իրտ իմաստուն կառավարութեամբ իր  
ազգին սէրը իր վըայ զբաւեց և մեծին Անտիոքոսին Մաղնի-  
սիոյ մօա Հռոմայեցիներից յաղթուելուց շահուելով, որնոր  
Քրիստոսից 190 տարի յառաջ էր, մեծին Հայոց ինքնիշխան-  
տէր եղաւ։ Հրաւերելով իր հիւրընկալ աշխարհումն Ան-  
նիբազը Կարթադինեցի զօրավարը նրա խորհրդին համեմատ  
հիմնեց 189-ին Արտաշատ քաղաքը, Երասխայ ձախ եղերքին  
վրայ, Արարատ լեռան զիմացը։ Արտաշէս տեսնելով, որ Ա-  
սորւոց պետութիւնը Սելեկոս Դ. և Անտիոքոս Եպիփանու-  
ժամանակ կործանելու վրայ է, ինքն իրան նրանցից ազատ կա-  
ցուց և շատագեց մի դաշնակցութեամբ Հռոմայեցոց բարե-  
համութիւնը ձեռք բերելու։

**Միհրդատ** այն ժամանակ Փոքր Հայքն էր կառավարում։  
մի դաշնագրութիւն արաւ Եւմենեսի և Պրուսիասի հետ, որ  
էին Պէրկամի թագաւորը և պատերազմնեցաւ Կապագովիկիոյ Ա-  
րիարատ թագաւորին զէմ։ և Պէրկամի թագաւորին զօրք  
զեկեց օղնութիւն Ատարաղոսի գէմ<sup>2</sup> կռուելու։

**Արտաշէս** խաղաղութեամբ մեռաւ, երկար ժամանակ իշ-  
խանութիւն վարելուց յետոյ և իր նորածին տէրութիւնն իր  
անարժան Արտաւազդ որդւոյն թողուց, որ իր եղենսագործու-  
թեամբը շուտով իր հպատակները սառեցնելով իրանից, նրանց  
ստիպեցրուց մի աւելի լաւ կառավարութիւն որոնելու հետա-  
մուտ լինել Արշակունեաց ցեղին մէջ, որ Ասից ամենազօրաւոր  
ցեղերից մինն էր։ Հայաստանն էլ Վազարչակն իրա թաղաւոր  
ընտրելով, աթոռից վար ձգեց այս ասելի իշխանը։

1 Պողիպոս Գր. իթ. Քաղ. գ.

2 Նոյնը Գր. լի. Քաղ. գ.

## ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

(Ակսած Քրիստոսից 150 տարի յառաջ, մինչև

433 տարի Քրիստոսից յետոյ)



ԱՐԵԱԿՈՒՆԵԱՅ Հարատութիւնը, որուն աիրապետութիւնն երրորդ շրջանն է կազմում որնոր ամենափառաւորն է Հայաստանու համար, այս աշխարհին գահին վրայ Հաստատուեցաւ առանց մի քաղաքական վնաս տալու և արիւն թափելու :

Արշակ և իր եղբայրը Տրդատ<sup>1</sup>, ազգով Պարթևեք, Բակուտիացւոց երկրումը (Խորասանումը) իրանց ձեռին մի իշխանութիւն ունենալով, արդէն իրանց Հայրենիքն աղատելէին 256 թուին (Քրիստոսից յառաջ), Սելեկացի մարզանները գուրս հանելով : Սելեկոս Գալլինոս մի ճակատամարտի մէջ գերի լնինելով 233-ին Արշակ-Պի ձեռին (Արտաբան Ա.) Պարթեաց անկախութիւնն ընդունելէր վաւերական կերպով : Մեծն Անտիոքոս նրանց նիվակացութիւնն ընդունելով, խաղաղութիւն էր արել նրանց հետ : Միհրդատ<sup>2</sup> Ա. որուն Հըռումայեցիք և Ցոյնք թէսս կամ Աստուած էին անուանում և Հայք էլ Մեծն Արշակ, Պարթեաց զօրութիւնը վերջին աստիճանին բարձրացրուց, իր տէրութեան տակ նուածեց Մարաստանը, Հիւրկանիան, Եղիմախոսը, Ասորեստանը, Միջադեռքը, Ատրպատականը, մի խօսքով, Երասխ, Նիբատ, Ինդոս և Եաքսարդ գետերու մէջ աեղերումն եղած բոլոր երկիրներն իրաօրէնքներն ընդունեցին :

1 Տիրի-դատ ըստ Յունական ուղղագրութեան, Տրդատ, ըստ Հայոց (Տէր) իշխան, աստուած (դատ), տալ, ուստի Տրդատ նշանակում է Աստուածատուր : (դատէ) Զինդ լեզուով, (դատ). (դալատ) Սլաւերէն տալ. (տուր) Հայերէն (դօննէր), (դոն) Ֆրանսերէն նոյն և մի նշանակութիւնն ունին :

2 Ըստ Յունաց ուղղագրութեան Միթրի-դատ, Միհրդատ ըստ Հայոց (Միրէ) արեւ, (դատէ), տալ, Միհրդատ, արեղական պարզեւ:

Հայաստան, որ արդէն դարերից ՚ի վեր միացած էր Պարթեաց<sup>1</sup> հետ կրօնով, լեզուով և հաւանականաբար մի և նոյն ծագումնով, նոյն և մի քաղաքային և ընկերական կարգերու օրէնքներ, մի և նոյն շահ և վարք ունենալով. Միքհատ առաջնից (Արշակ Մեծից) իրանց թագաւոր խնդրեցին նրա եղաբայրը Արշակ շահը, ըստ Մովսիսի Խորենացւոյն<sup>2</sup>, նրա որդին ըստ օտար պատմագրներուն : Արշակունեաց հարստութիւնը Հայաստանի դահն ելաւ 150 տարի Քրիստոսից յառաջ՝ և Քրիստոսից 433 տարի յետոյ այս դահնիցն ընկաւ : Ուստի 583 տարի թագաւորութիւն վարեց :

Արշակունեաց ժամանակ, Հայաստանու Պարթեաց ազգից յետոյ հիւսիսային արեւմտեան Ասիոյ ամենից զօրաւոր և ամէնից ծաղկեալ պետութիւնն եղաւ, այս ցեղից շատ թաղաւորներ իրանց յաղթ անակներութիւն կարգադրութեամբ և իրանց երկրագործութեան, ճարտարութեան, վաճառականութեան արհեստներու և հասարակաց գարգացման վերաբերած ամէն բաներու համար արած պաշտպանութեամբն ու քաջալերութեամբն անմահացրին իրանց անունը : Վաղ-Արշակայ, Արտաշէս առաջնոյն, Տիգրան Երկրորդին, Արդարայ, Արտաշէս Երկրորդին, Մեծին Խոսրովու, Տրդատայ և Վոամ-Շապհոյ անունները յաւիսեան յիշատակելի պիտի մնան Հայաստան աշխարհի պատմութեանց մէջ :

Միհրգատ Ա. (Մեծն Արշակ) թագն իր եղբօր Վաղ-Արշակին տալովբացի Մեծ և Փոքր Հայքից, նրան յանձնեց նաև Ասորեստանու, Միջազգեաց, Օսրէոնի և Ատրպատականի մի մաս ու, նոյնպէս և Երկրորդ Կապագովկիան, Վրաստանը, Աղուանքը և Կասպիցը, կամենալով այս կերպով մի զօրաւոր և ամուր տէրութիւն կաղմել և իբրև մի Երկրորդ Պարթեական տէրութիւն կանգնել բուն Պարթեաց և Սելեկացւոց տէրութեան մէջաեղ, որնոր զեռ կենդանութեան նշաններ էր ցոյց տալ :

1 Այս Երկու ազգերու նոյն և մի ծագումն ունենալը անկասկածնելի կերպով հաստատուած չէ, սակայն անհամար բառեր են գտնուում հասարակ եղած, Հայոց, Պարթեաց, Պահլաւաց, Արեաց և Պարսկաց մէջ :

2 Հայ. պատմութիւն Գլ. Բ. 71. Գ.

Վաղ-Արշակ<sup>1</sup> իրաքնակութեան համար Մծրին<sup>2</sup> քաղաքն ընտրեց : Իր առաջին գործն եղաւ քաղաքային և զինւորական մի օրինադիրք շնել և իր տէրութեան մէջ կարգու կանոն դնել որնոր նահանդներու ու գաւառներու վրայ բաժանեց, նմանապէս գործակալաց համար մի գասակարդութեան կազմեց և իր թագավառորած երկրին մէջ էլ մի փառաւոր ազնուապետութեան քաստ հաստատեց . այս քաստն է նախարարական կարգը :

Այսպէս իր տէրութեան մէջ ընկերական կարգ հաստատելով, ձեռք զարկաւ մի արշաւանք անելու ընդդէմ և ազաց և Պոնտոսի, Փրիւգիոյ և Մաֆակայ բնակչաց, որոնք Սելևկացւոց նիզակակից էին և իրանց հրամանատար ունէին Մորփիւղեկէնն : Մի արիւնչեղ պատերազմի մէջ, որնոր աեղի ունեցաւ Վաղարշակայ և նրա նիզակակցաց մէջ-վերջնները ջարդ և բուրդ լինելով հնապանդեցան թագավառին : Այս յաղթութենից յետոյ Հայաստանու սահմանները տարածուեցան և իր ազդեցութիւնը իրա հարեւան ազլերու վրայ բանեցուց և մինչեւ այն ժամանակ անծանօթ եղած մի զարդացում ստացաւ : Վաղարշակն էլ իր թագավառութեան 22 տարին այս զարդացումն հաստատելու և ամրացնելու և իր աղդն երջանի անելու անցկացուց :

Արտաշէս Ա. (115-ից-90) որոյ թագավառութիւնը 25 տարի տևեց . իր պատ Վաղարշակայ ընթացքով վարուեցաւ, արևմտեան Ասիոյ մէջ շատ պատերազմներ արաւ և Սև ծովու եղերքներու վրայ հաստատուած յունական գաղթականներու երկիրները կործանեց . Արշակունեաց միջից առաջինն եղաւ . իր տէրութեան մէջ Յունաց աստուածները մտցնողը . Արտեմիդայ, Հերակլայ, Առողոնի, Արտմազդայ, Աթենասայ և

1 Վաղ, Վալ, պատասխանում է Քաղղէացւոց Բալ, Բէլ, Բեղոս բառերուն, Ալաւեանց Բող, Աստուած բառին, Թաթարաց Բողոս, Վեհափառ, Բարձր, Բառերուն, որոնք նշանակում են Մեծ կամ Աստուած, Վաղ-արշակ, Մեծն կամ Տէր, Աստուած-Արշակ .

2 Արա ուղղազրութիւնը փոփոխուում է Նիսիր, Նիսիր, Մծրին հայերէն :

3 Լազիստան Տրաբիրնի հարաւային կողմն է :

4 Կեսարիս, միծ կապաղովլիոյ ղլիսաւոր քաղաքը .

Եկեստեայ արձաններն, որոնք Սկիւ տիասայ և կրետացի Գիբեշնասայ դլիսաւոր գործքերն են։ Արտաշէս յափշտակելով Յոյներից բերաւ խառնեց ազգային աստուածներուն։ Արեւուն, Լուսնին, Որմղդայ հետ և մոգականութեան պարզութիւնն էլ ապականեց :

Հռովմ չկամենալով կամ թէ չհամարձակելով նրա դէմ պատերազմ բաց անել, բանսարկութեամբ նրան կործանելու միջոցը գտաւ : Հայկական բանակն Հռովմայեցւոց ոսկւով խարուելով և հրապու բուելով, փոքր Ասիում մի արշաւանք առնելու ժամանակ, ապստամբեցաւ և Արտաշէս սպանուեցաւ գաւակցութեամբ : Տիգրան Բ-ի նրա որդւոյն ժամանակ (90-ից -36) Հայաստան իր զօրութեան, մեծութեան յաջողութեան և փառացը վերջին ծագը հասաւ : Ասիոյ տիրապետութիւնը և թագաւորաց թագաւորի պատուանունն, որ յառաջ Պարսկաստանու Պարթևաց էր ընկնում։ 11 թուից Արտաշէսն նրանցից այդ պատուանունը յափշտակել էր : Տիգրան մինչեւ իր թագաւորութեան վերջին տարիներն, որ 54 տարի տեղեց, այս յառաջապատուութիւնն իր վրայ պահեց : Միհրդատ Բ. թագաւոր Պարսից, զէնքով պնդել կամենալով իր պահանջմունք ներու մասին, Տիգրանայ դէմ պատերազմելիս, Երասխ գետի ափանց վրայ սպանուեցաւ 88-ին : Ասորուոց տէրութիւնը տկարանալով Հռովմայ և իրա միջից ծագած խառնակութիւններից, պատառ պատառ լինելով իրա միջում եղած քաղաքական պատերազմներից և ընտանեկան կռիւներից, իր թագը Տիգրանին տուաւ, նրան Ասիոյ ամենամեծ վեհապետը համարելով : Տիգրան Ասորուոց և Փիւնիկեցւոց տէր և իշխան լինելով, իր յաղթանակները յառաջ քշեց և նուածեց իր ձեռուն տակ ամբողջ կապադովիխն, Կիլիկիան և Միջագետքը և այն տեղաց Պաղեստինու վրայ յարձակեցաւ, ուր տեղաց Հայաստան հազարաւոր Խորայէլսցիներ բերաւ, մի յարձակմամբ Պտողեմայիս քաղաքն առաւ և կղէոպատրային սպանել տուաւ։ Նոյնպէս մասնակից եղաւ այն պատերազմին, որ Հռովմ բաց էր արել իրա վեսայ և նիգակակից Պանտոսի թագաւոր Մեծին Միհրդատայ դէմ Հռովմ, որ յանկանումէր Ասորուոց երկ-

թին տիրել շատ անհանդիստ եղաւ, երբ լսեց, որ 88-ին (Քըւրիստոսից յառաջ), Տիգրան նրա վրայ տիրելէր :

Միհրդատ կամ Միթրդատ Հայոց բանակով պաշտպանուած, պատերազմի սկզբան Մանիսսին և Քոդդային յաղթեց, բայց Ղուկուղղսսից յաղթուելով Տիգրանի մօտ փախաւ : Երբ Տիգրան մերժեց Միհրդատն Ղուկուղղսսի ձեռին յանձնել Տիգրանակերտի պատերազմը բացուեցաւ Տիգրիս գետին առ փանց վրայ, Հայոց և Հռովմայեցւոց մէջ՝ Հայք յաղթուեցան, այն ժամանակ Ղուկուղղսս Հայաստան մտաւ, բայց Խաքն էլ Տիգրանից յաղթուելով Խփրատայ մօտերը ևտ քաշուեցաւ : Երբ Ղուկուղղսս օգնութիւն առնելով Մծբին պաշարումէր, Տիգրան և Միհրդատ Հռովմայ եցւոց Պանիսս և Ֆարիսս զօրաւ վորներուն յաղթեցին : Այս համբաւին վրայ, Ղուկուղղսս պատրաստուեցաւ նրանց դէմմի վճռողտկան պատերազմտալբայց իր բանակումը պատահած ապատամբութիւնն այս բանիս արգելք եղաւ: Պումպէսս, որ նրա տեղը բռնեց Միհրդատին հետ կուռելուց և նրան յաղթելուց յետոյ Հայաստան մտաւ, Տիգրանայ որդւոյն Տիգրան—Բի առաջնորդութեամբ, որ մատնեց իր հօրը ուրիշ ապատամբներու հետ : Տիգրան տեսնելով իրան պաշարուած Հռովմայեցւոց ոսկուով և քաղաքականութեամբ զլուխ վերուցած ապատամբներից, առանց կռուելու խաղաղութիւնն արաւ Հռովմայ հետ : Գաղատիոյ, Կիլեկիոյ, Կապակովկիոյ և Ասրւոց երկիրներում արած աշխարհակալութեանց մի մասից ձեռք վեր առաւ, որոնք Հռովմայեցւոց տէրութեան հետ միացան, Փոքր Հայոց մի քանի նահանգները իբրև տէրութիւն կանգնեցան, որոնք բնիկ թագաւորներ ունեցան Հռովմայ պաշտպանութեամբ : Այս խաղաղութենից մի քանի տարուց յետոյ, Կրասոս արեւելք եկաւ Պարթեաց գէմ կռուելու : Տիգրաննախ կամեցաւ զէնքը ձեռին չեղոքութիւն պահել, բայց տեսնելով Հռովմայեցի զօրավարի չարդիտաւորութիւններն իր մասին, Որոտէս-Գին<sup>1</sup> հետ նիզակակից եղաւ և Հայկա—Պարսիկ բանակը բոլորովին յաղթեց Հռովմայեցւոց բանակին : Այս գործքին մէջ (39) Կրասոս իր որդւոյն հետ սպանուեցաւ : Նրբոր Կրասոսի գլուխն ու ձեռքը Հայաստան բերուեցաւ, որ

1 Արշէս կամ Արտաշէս Հայ պատմագրներից :

տեղ և այն ժամանակ Արոտէսն էր դժուռում: վասն զի եկել էր իր բագոր որդւոյն Տիգրանայ աղջկան հետ ամուսնութիւնը կատարելու: Պլուտարքոս<sup>1</sup> ասումէ, որ Արտաւազդ Հայաստանու թագին ժամանգն այն ժամանակ մի ողբերգութիւն շնեց Յունաց լեզուով:

Այս մեծամեծ դէպքերից հետէ, որոնք Հայկական միաւպետութիւնը սաստիկ, սարսեցրին մինչեւ Աբգարայ թագաւորութեան ժամանակ, որ ժամանակից եղաւ Ցիառու Քրիստոսի և առաջին քրիստոնեայ թագաւորը, ոչինչ նշանաւոր բան չունինք այս տեղ յառաջ բերելու, այլ միայն այս տէրութեան կամաց կամաց տկարանալը: Զեմիսոսիլայս թագաւորին՝ Մարդ Աստուծոյն հետ ունեցած հաղորդակցութեան մասին և իրաքրիստոնէութիւնը ընդունելուն, որոնք ծանօթ են քրիստոնեայ աշխարհիս: Թագէս և Բարթողիմէս առաքեալք բերին Հայաստան Աւետարանի լոյսը և երկուսն էլ ուրիշ շատ մարտիրոսներու հետ միասին հաւատոյ Ճշմարտութիւնն իրանց արիւնով հնդեցին: Աբգարից յետոյ Արշակունիք Հայաստան 400 տարի թագաւորեցին, երբեմն իրեն դաշնակից և հարկածու Հռովմայեցւոց, երբեմն իրեն թշնամի պատերազմելով, բայց ոչ երբէք իրեւ հպատակ:

Պարսկաստանումը Արշակունեանց հարստութիւնը, 220 թուին մի սոսկալի հարուած կրեց, որնոր շուտով վախճան տուաւ այս իշխանութեան, որ արդէն տկարացել էր բարուց ասպականութեամբ և ներքին երկպատակութեամբ: Արտաքսերքսես (Արտաշնիր ըստ Հայոց) Սասանայ որդին, բուն Պարսկակ, Պարսկաստանը այս հարստութեան դէմ ապստամբեցուց: Վողսդէս Ե. 220 թուին Ցիրմանում մեռաւ և Արտաւան երեք Ճակատամարտումն էլ յաղթուելով բռնուեցաւ և սպանուեցաւ: Արտաշըի հետ Սասանեաց հարստութիւնը Պարսկաստանու գահն անցկացաւ, որ նորէն այս պետութիւնը մի նոր զօրութեան մէջ մղեց: Բայց այս նոր հարստութիւնը (թագաւորութիւնը) օտար երկիրներում թագաւորող Արշակունից եղերուն: Բնական թշնամի լինելով ուշ կամ վաղ արիւնաշեղ կուներ լինելու տեղի պիտի տար այս յեղին Հայաստանու մէջ մղեց:

1 Կրասոսի վարքումը:

տանում թագաւորող շառաւիդին հետ Հայաստանու թագաւոր Մեծն Խոսրովի իր ամէն ջանքն ՚ի գործ դրաւ Պարսկաստանու Արշակունիքն իրանց տեղը վերահաստատելու և Սասանեաց Պարսից գահն անցիենալն արգիլելու սակայն բոլոր իր ջանքն այն հետևանիքն ունեցաւ որ իրան էլ կորյուոց Արշակունի Անակը գաւաճան գտնուելով իր յեղին գէմ անձնատուր եղաւ Արտաշրին և եկաւ Խոսրովի մօտ իբրև փախըստական պատսպարտելու : Անակ Խոսրովի արքունեացը մէջ իբրև աղգական ընդունուելով վերջապէս 260 թուին որսի մէջ սպանեց նրան : Խոսրովայ մահը Հայաստանը անտէրութեան մէջ զցեց Արտաշրի էլ յարմար ժամանակ գտնելով Հայաստանի տէր եղաւ : Այսպէս Հայաստան ընկճուեցաւ 291 թուից մինչև 286 թիւը Սասանեաց տակ բայց մի քանի ամուր տեղուանիք մինչև Պարսից Հայաստանից գուրս քշուիլը դիմացան : Հայկական Արշակունեաց յեղը (ըստ գրոյ) բնաջինջ եղաւ : Տրդատ Խոսրովայ որդին զեռ մանուկ այս յեղին վերջին շառաւիող միայն կարող եղաւ խուսափել մահուանից իր գաստիարակին անձնանու իրութեամբը և հռովմէական կայսրութեան երկիրներում տարուելով այն աեղ մեծ խընամքով մեծացաւ յետոյ Հռովմէացւոց Երոպիում Գոթացւոց գէմ և Ասիայում Պարսից գէմ Եփրատայ վրայ տուած պատերազմներում մեծ անուն հանելով Լիկիանոսի կոստանդիանոսի և Գիոդղետիանոսի բարեկամութիւնը ձեռք բերած իր քաջութեամբն ու անձնանու իրու թեամբը :

Տրդատ Հռովմէական արծիւններուն հետ Հաւատարիմ մնացող Հայոց գնդերուն գլուխն անցկենալով 286 թուին իր երկիրները մտաւ վերստին յաղթեց Պարսից մի քանի պատերազմներում և վերջապէս բոլորովին զուրս քշեց նրանց և իր գահը վերականգնեց նմանապէս և թագաւորական (ասուած) Սկիւթացւոց<sup>1</sup> գէմ և հիւսիսային կովկասումն անշամար բարբարոսներու գէմկառուելով՝ յաղթեց և նուաճեց նըրանց որոնք Սաքորի (Շապհւոյ ըստ Հայոց) թելադրութեամբ Հայաստան աշխարհին վրայ մեծ յարձակումէին անում<sup>2</sup> :

1 Սիթի Բէճիփ. կտ.

2 Մոլ. Խոր. Հայ պատ. Գր. Բ. գլ. Ջէ.

Երբ որ գահը վերականգնեցաւ և խաղաղութիւնը հասաւառ-  
ուեցաւ, Տրդատ իր ամէն ուշադրութիւնը իր տէրութեան  
ներքին վեճակին վրայ դարձրուց և շատ բարեկարգեց : Քրիս-  
տոնէութիւնը, որ Թաղէոս և Բարթողիմէոս առաքեալները  
Հայաստան էին մտցրել 39 թուից մինչև 45-ը հալածանքի մէջ  
էր, սակայն շատ հաւատացեալներ կային : Տրդատ վարթով և  
բարիպավարդ Լինելով և կրօնական զգացմունք ունենալով,  
յառաջ՝ որ ջերմեռանդ Որմզդապաշտ էր, յետոյ սուրբ Գը-  
րիկոր Պարթ և ից լուսաւորուելով, բայց երկոր ժամանակ դէմ  
գնելով և հալածելով քրիստոնէութիւնը, վերջապէս ինքն և  
իր բոլոր ընտանիքն էլ 300 թուին քրիստոնեայ դառան :  
Ժամանակ չանցկացաւ, Հայաստան, Աղուանից աշխարհքը, Վը-  
րաստան և Ատրպատականի մի մասը նրա օրինակին հետե-  
ւեցան . քրիստոնէական կրօնը այս կերպով բոլորովին հաստատ-  
ուեցաւ ամբողջ Հայաստանեայց աշխարհին մէջ և պահպան-  
ուեցաւ այն տեղ միշտ մինչև մեր օրերը, ընդդէմ այն ամէն  
հալածանաց, որ իրա դէմ յարուցին Պարսկաստանու մոգպաշ-  
տութիւնը և Արարստանու Խալամութիւնը : Բայց ցաւալի է  
ասեն, որ Տրդատ Հայաստանեայց աշխարհին ամենափառաւոր  
և ամենալաւ թագաւորն իր թագաւորութեան 57 տարին  
շարունակ իր հպատակներուն լուսաւորութեան և երջանկու-  
թեան համար նուիրելուց յետոյ՝ 342 թուին թունաւորուած  
վախճանեցաւ : Իրան յաջորդող թագաւորներու կեանքը մի-  
դար շարունակ ուրիշբան մեր յառաջը չեն հանել բայց մի-  
այն գազանութիւն, անդթութիւն և խայտառակութիւն : Այս  
վայրենի հրէշները Արևելցւոց հասարակ եղած մոլութեանց  
հետ խառնելով և զռովմայ սոսկալի վարքն ու բարքը, իրանց  
կեանքին և քաղաքականու թեան մէջ բարուց կատարեալ ա-  
պականութեան մի ողբալի օրինակ ցոյց կտան . իրանց ցեղը 435  
թուին գահից ընկաւ Արտաշրի օրովը, որ էր վերջին թագաւ-  
որ այս հարսառութեան : Այս ժամանակուայ Հայաստանու  
նախարարներն իրանց փառք համարեցին Պարսկաստանու թա-  
գաւորից իրանց մեծը վերացնելու և իրանց ազատութիւնը  
ջնջելու համար իննդրելը :

Բայց այս անարգ Արշակունեաց մէջ, սկատմութիւնը փա-

աւելում է առաքինի վառամ—շապհւոյ զպրութեանց և զիստութեանց պաշտպանին, որ հասարակաց կրթութեան հոգ առարաւ և իր ազդին երջանկութեան համար աշխատեց։ Մարդկային ազդի բարերար և առաքինի կաթութեաններ<sup>1</sup>, ուուրբ Գրիգոր Լուսաւորչի ցեղից մեզ մոռայնել կտան վերջին Արշակունի թագաւորներուն վառութիւնները։ Հայաստան աշխարհին առաքեալ<sup>2</sup> սրբայն Գրիգորի, (Լուսաւորիչ անուաննեալն Հայքի ու Աղուանք լրւառարելուն և քրիստոնէայնելուն համար) իր օրգւոյն վրթանիսի։ Մեծին Ներսիսի (մահուան գեղով սպանուած), Ապառաժաշնչի թարգմանիչ Մեծին Սահմանակայ անունները յաւիտեան պիտի անջնշելի մնան Հայաստանու պատմութեան մէջ։ Քրիստոնէաւթիւնն ինցիս ամէն տեղը նոյնպէս և Հայաստան մի նոր քաղաքակրթութութեան նոր բարոյականութեան և նոր գաղափարներու բազուծն ու տարերքը բերու ։ Քրիստոնէայ եղաղ Հայոց նոր դրացմանը իր Հանարակաց վեղուով Աստանաժաշնչի թարգմանութիւնն այն հետեւանքն յատջ բերելու շատ նպաստառ եղաւ։ Այսպէս մեզ պատմում է Դաղլար Փարսկեցին, որ հինգերորդ դարու մատենազիր է։ Հայաստանացը եկեղեցւոյն մէջ ասաւածաջային պաշտօնը Ասորի և Յայն լեզուով էր կատարուում մէկ ու կէս գարուց հետէ, հաւատացեալք այս լեզուներն զգիտենալով բարոյական և կրօնական կրթութենից և աւագմիջ զուրկ էին մնաւմ։ Սուրբ Սեպուխ վարդապետը կատարեալ առաքելական մարդ, հաւատավով ազդուած և այս թժամանակուայ դիտուններից մինը 504 թուին Հայոց, Արաւանից և Վրաց լեզուներուն տառերն ստեղծեց։ Անիջապէս ամրազջ Պարսկա-Հայոց մէջ անհամար լորրացներ բացու եյան (Յայնը թույլ չունեցին Հայոց Հայաստանի այն մասին մէջ, որ իրանց ձեռնէր) և շատ երիտ սարդ Հայեր Կոստանդնուպօլսոց, Եղեսիոյ, Անիոյ քամբէրիոյ և Աթենքի բարձր զպրայներում զիկուեցան իրանց։ Հայաստանում սկսած ու սմանեցը կատարելու համար։ Իրանց զարգացման առաջնային համար հայութական պատմութեան առաջնային համար է Անիոյի պատմութեան առաջնային համար։

2 Հայոց տեմին կարդ եկեղեցական աց մէջ մինչեւ հիմունիքարդ զարը  
առևտնաթիւնը կար. մինչեւ այսօր էլ տաղերեցները քահանաներն ու  
սպականագները առևտնացած են .

ձին զիանականաց մի ընկերութիւն կազմուեցաւ սուրբ Ասահակ Պարթևայ գլխաւորութեամբ, որ քաջ և խորն էր իմաստում Յունարեն լիզուն : Այս ընկերութիւնը Աստուածաշունչ զրոյ և ուրիշ անթիւ Յոյն Հռովմայիցի և Ասորի հեղինականերու փիլիսոփայական, բանասաեղծական, ուսումնական, աշխարհագրական, պատմաբանական, վարդապետական և բարոյական գրուածքներու թարգմանութեան ձեռք զարկաւ, այնուպէս որ քրիստոնէութեան հինգերորդ գարը Ճշմարտապէս հայկական գրականութեան ոսկի գարն եզաւ և սրբոյն Սահակայ և սրբոյն Մեսրովայ գործոցը ամենաընտիր մատենագիրներ յառաջ բերաւ այս լեզուին մէջ : Մովսէս Խորենացին, Մամբրէն, իր եղբայրը Դաւիթ անյաղթ փիլիսոփայ անուանեալը, Եղիշէն, Ղազար Փարաբեցին, Եղնիկ Կողբացին, Կորիւն սքանչելի անուանեալը, Յովհաննէս Մանղակունին : Գիւտը . Վեռնդը, Արձանը, Խոսրովիկն ու ուրիշ շատեր : Քոլոր այս մատենագիրները իրանց գրականական աշխատանքներով հայկական գրականութեան հիմաննքները հաստատեցին, որ այն ժամանակից սկսեալ ամէն դարերից անցկացաւ, սակայն առանց ժողովրդային լինելու այս երկրին բնակիչներուն մէջ :

## ԶՈՐՐՈՐԴԻ ՇՐՋԱՆ

(433-ից մինչև 885 Քրիստոսից յետոյ)

ԱՅՍ շրջանս մեր առջևն անիշխանութեան, երկպառակութեան, կրօնական պատերազմներու, Հայաստանից դուրս աեւափառուելու, գերդաստանաց աքսորուելու և ամէն տեսակ թըշւաւառութեանց տրտմելի և աղիողորմ մի տեսարան կհանէ, կարելի է ասել որ բարեր իր էջները քրիստոնէութեան մարտիրոսներու և հայկական անկախութեան համար թափուած արիւնով ներկուած են :

396 Թուից սկսած, Հայաստան Յունաց կայսրութեան և Պարսից թագաւորութեան մէջ բաժանուեցաւ : Արփա-Զայն

Մասեաց շղթան, Վանաց լիճը և Կորդուաց (այսօրուայ քըրտերուն) լեռները, զրեթէ սահմանի տեղ է ին բռնել այս երկու տէրութեանց մէջ : Սակայն այս բաժանումը միշտ անփոփոխ չմնաց, գրեթէ տմէն քսան տարուայ մէջ նոր նոր փոփօխութիւններ կրեց, մանաւանդ Յունաց ձեռ ին եղած Հայաստանի մէջ, որնոր անդադար յարձակումներ էր կըում թէ Պարսիկներից և թէ Արարացիներից :

Յունաց ձեռախն եղած Հայաստանը, որ երբեմն Յոյն զօրավարներու և երբեմն Հայոց միջից ընտրուած, դքսերու, կիւրապաղաքներու և պատրիկներու ձեռքովէր կառավարվում: Մինչև տասներորդ դարուն վերջը Փոքր ինչ խաղաղութիւն վայելեց : Այս ժամանակից յետոյ Յունաց ինքնակալներու բունակալական լու ծըլ օրոնք աւելի անկարգ էին Արարացիներից և Պարսիկներից, քանի դնաց անտանելի եղաւ : Պարսիկաց հայքը, որ յառաջ անբարոյականութեամբ անարգուած մի քանի Արշակունի թագաւորներու ձեռքովէր կառավարուում 433-ին Պարսից մի հասարակ նահանգ դառաւ : Գրիստոնէութիւններ, որ Պարսիկահայքը միւս Հայոց հետ կապումէր և մասնաւանդ Յունաց կայսրութեան մէջ եղած քրիստոնէից հետ կարծիք էր տալի Պարսից Աստանեան թագաւորներ առաջուց, ոսկի և արծաթ վաճանելուց և շատ էլ բանսարիութիւններ բաննեցնելուց յետոյ այս կապը խորատակելու համար, որոշեց որ իր կամքը վինու զօրութեամբ գլուխ տանի, ինչպէս իր պապերն արել էին բուն Պարսիկաստանու, Բարելաստանի և Կաեսիփոնի քրիստոնէայներու հետ եօթն ութ հարիւր մոդ կամքու զօրքերով միասնի, 445 թը ուին Պարսիկահայք զրկուեցան քրիստոնէութեան տեղ Որմղայ աղանդը հաստատելու համար, Վատակ Ալինեաց իշխանը Պարսիկ արքային խորհրդական կատարելուն օգնական էր ըլնում: Մի զօրաւոր բանակ Հայաստանու սահմաններու մօանցաւ Պարսիկաստանու կառավարութեան դործաղբելու հնարքները պահպանելու համար : Հայք տեսնելով, որ իրանց կրօնը վտանգու մն է, Մարկիանոս կայսեր դեւապան յու զարկեցին օգնու թիւն

ինդրելու որնոր մերժեց<sup>1</sup> : Այսոց աշխարհը Հայտառանու հաւը քեան և յառաջուց էլ իր հարկատուն էր, այս միջոցին իրա նիզակակից էր եղել բայց ինքն էլ Պարսից ահիցն ու բացել էր քրիստոնէութիւնն ու ընդունել էր մողութիւնը : Հայտառան ու քրիստոնեաց Ալուտնքը, զրկուելով այսպէս ամէն օդնութենից մինակ մնացին Առասմանաց զօրութեան դէմ, որնոր ահ և սարսափ էր տալի Յունաց կայսեր անգամ :

Հայոց զինաւոր բարձր աստիճան աշխարհականներն ու եկեղեցականները Արաւաշատումն, որ այն ժամանակ զինաւոր քաղաքն էր Հայտառանու, 450 թուին մի ընդհանուր ժողովք արին և վճռեցին որ բարձր ազգն զէնք առնելը կանչեն հաւատքը պաշտպանելու և մի ժամանակաւոր կառավարութիւն կազմելու : Արդան Մամիկոնեանն որ հաւատով մի մարդ էր և մեծ հայրենասիրութեամբ քաջ և հմատ զօրավար, հըրամանատար եղաւ : Հայք որ առ հասարակ հանգարծատրարոյ են, մեծին Վարդանաց առենուխօսութեամբը վարուելով և քաշալերուելով զէնք առնի իրանց ձեռին և զրօշտիսիրու տակ զիմեցին թուով 66,000 : Ազուանք որ այս մի ջոցին Պարսիկաներից մեծ վասնդումն էին ընկեր իրանց օդնութեան կանչեալի վարդանն, որ իր զօրքերու մի բաժնով նրանց օդնելու գիմեց և Կուր գետին եղերքներում Քայքալ քաղաքին մօտերը Սեբուզում Պարսից տուած մի Ճակատամարտում բալորովին յաղթեց նրանց, այս երկրումն եղած ամուր տեղուանիք ամէնքն էլ առնուեցան, Պարսից զօրքերն ու մողերը ամէնքն էլ սրից անցկացան, կրականները կործանուեցան և Աղուանից աշխարհն էլ մաքրուեցաւ պիղծ աղանդից, նոյն չափ էլ Պարսկահայոց մէջ արին : Պարսից մեծ բանակը մինչեւ այն ժամանակ Աստրապատական գաւառուն մեջ անշարժ մնացած սկսաւ Հայոց աշխարհին վրայ զիմել : Մամիկոնեան Վարդանն այս լուրը լսելով շտապեց գնաց իր հայրենիքը վտանգից աղասելու : Երանախից անցկացաւ ու գնաց Աստապատ վորքիկ քաղաքին մօտերը պատերազմելու պատրաստուեցաւ : Ի վերջոյ 451 թը-

1 Այս մերժումն եղաւ զինաւոր պատճառ Յունաց և Հայոց մէջ նոյն ժամանակից եղած թշնամութեան, որու համար Հայք մի փոքր յետոյ քաղկեդոնի ժողովը էլ ընդունեցին :

ւին Տղմաւտ գետին եղերքներում Երասխի մօս, այն մեծ և անմառանիլի Ճակատամարտն եղաւ, ուր տեղ Քրիստոսի Խաչը կրկին անզամ յաղթութիւն տարաւ Որմզդայ զենին զէմե Քրիստոնէութիւնը բոլորովին աղատուեցաւ Հայաստանեայց աշխարհին մէջ: Վարդան Մամիկոնեանը 1.036 զինակից լնկերանի բարձրաւորապէս պատերազմի դաշտի մէջ մեռաւ, Հայաստանեայց եկեղեցին էլնրանց իր սուրբ մարտիրոսաց դասը դրաւ: Վահան Մամիկոնեանն իր քեռւոյն Վարդանին տեղը բռնեց և երկար ժամանակ իր հայրենի երկերը պաշտպանեց, մինչեւ որ սակագեցուց Վաղարշ Պարսից ամբարտաւան թագաւորին 485 թուին Հայաստանին հետ խաղաղութիւն անելու հետեւ պայմանաց վրայ: Ա. Քրիստոնէութիւնը պէտք էր պահպանէր Հայաստանում իր յառաջուայ վայելած ամեն աղատութիւնաւ: Բ. մողութեան մեջեանները, պէտք էր, որ բոլորովին կործանուեին: Գ. թագաւորաց թագաւորը պէտք չէր դաշտավայրել և ոչ մի աղատանի Հայ, մի ու բայցովի կամ մի Պարսիկ վերակացուի ամբաստանութեամբը, մինչեւ որ յանցաւորը յառաջուց իր յանցանիքին համար չգատուեր:

**Ա.** յս երեկու պէտքերից մինչեւ 661 ոչինչ չունիք նշանաւոր այս Ծրագիրը պատմութեան մէջ նշանակելու այս շրջանիս մէջ ժամանակներ եղան, որ Հայաստան խաղաղ մընաց Տարի տալով Պարսից և ուրիշ ժամանակներ էլ որ նրանց զէմ գլուխ վերցուց վերջապէս մահմետականութիւնն երեւցաւ հօթներորդ գարումն Որաբիայում և վերջ դրաւ բոլոր այս կռիւներուն: Պարսկաստան Հայաստանի հետ մէկ աեղ նահանդ գառաւ Խոյի վաներու իշխանութեան: Որմզդայ աշղանդը կորաւ Պարսկաստանում իր մեջեաններու աւերակներու տակ: Քրիստոնէութիւնն արհամարհելով Արարիոյ որդւոց հալածանելները պահպանուեցաւ Հայաստանում: Վեսնդ այս ժամանակուայ պատմիչը, որիոր նորերումն հրատարակեցինք երկարօրէն պատմած է այս գէտքերի, ուստի մենք էլ աւելըրդ կհամարենք այս տեղ նորունց կրկնել:

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԲՁԱՆ

(885-ից մինչև 1079 Քրիստոսից յետոյ)

ԱՅՍ շրջանումը պիտի տեսնանք: Հայոց ազգին իր կործանուած վիճակից վեր կանդնելու և նորունց իրրե անկախքաղքական մարմին կազմելու համար արած մի քանի ջանքերը բայց պիտի տեսնենք էլ որ բոլոր այս ջանքերը մի կործժամանակուայ ընդդիմագործութեան մէջ են կայանում: Հայաստան վեր է կանգնում նորունց աւելի: Խոր անդնդոց մէջ ընկնելու համար:

Աշխարհային յեղափօխութիւնները, կրօնական հերձուածները և քաղաքական պատերազմներն արդէն սաստիկ սարսելու զրգուել էին Մարգարէին (Մուհամէտին) յաջորդներուն պետութիւնը, որոնք իններորդ դարուց հետէ դեպի իրանց անկման էին դիմում: Այնչափ երկար ժամանակ իրանց լուծծին տակ նուածուած ազգերն, այս անկումը տեսնելով իրանց աղատութիւնը ձեռք բերելու ետեից եղան: Այս ժամանակաւայ խալիֆայները իրանց ապարանքներում փակուած և կանանի հեշտութեանց մէջ ընկլմած, էլ ահաւոր չէին երեսում: Անց էր կայել առաքինի էօմէր և Աբու-Բէքիր խալիֆայներուն ժամանակը: Այս ժամանակիներումն հայաստան, իններորդ և տասներորդ դարերում մի քանի մեծահոգի և ազնուասիր մարդիկներ էին գոնուում այս աշխարհիս վերանորոգութեան և զարդացման անձնանուէր լուղութ: Աակայն Հայաստանու վրայ աիրատիւողներուն մօլորութիւններն ու կըրքերը ամբողջ ազդը աղականել էին: Խսականութեան և երկապառակութեան հոգին Հռովմայեցիք, Յոյնք և Պարսիկ այնողիսի վարպետութեամբ տարածել էին ամէն տեղ, որ Հայոց ազգին վասյ բնաւորուել էին: Բաղրատունեաց ցեղը, որոնց սկիզբը

Հրեայ էր և տամուցորս դարուց հետէ Հայաստանին էր պատահանում իրա համեստութեամբը, առատաձեռնութեամբը ու իր քաջագործութեամբը պատերազմի դաշտին վրայ, մեծ համբաւ էր ստոցիլ: Հայկակոննեաց և արշակունիաց ժամանակ, քաղաքական և զինուորական պաշտօններու մեջ ընդունուելով, այս ցեղը մեծ հաւատարմաւթիւն և անձնանուիրութիւն էր ցոյց տուել իր ընդունած Հայրենիացը համար և ամէն բարձր աստիճաններու էր հասել:

Վաղարշակ, Հայկական Արշակունեաց հարստութեան զըւլու խը, Բաղրատունիաց ցեղին Հայաստան աշխարհին թաղաւորներուն թաղակիր լինելու արտօնութիւնն էր տուել: Այս ցեղեց շատերը այլեւայլ ժամանակ՝ Հայաստանու զինուորական զօրութեան հրամանատար էին եղել: Բաղրատունիք, Խորացէլոց շատերու նման խնայող, նախատես, չափաւոր և իւմաստուն լինելով, ահագին հարստութիւն ձեռք բերին և Աւրարատայ և Տայոց երկրին կէս մասիցն աւելի զնեցին, լիքին Հայոց նահանգներից երկուսը: Բացի սրանցից Տուրուբերան, Բարձր Հայոց և Գուգարաց երկրին մէջ մեծ կալուածներ ունին, նոյնպէս, ութերորդ զարումը այս ցեղին կալուածներում էր Գարինք, Բագարան: Մուշ կողք, Կարս, Շիրակաւան: Անի, Արեր, Ախլոյիս: Արդուին, Արդահան, և ուրիշ քաղաքներ կոյին: Խալիֆայներու ժամանակ, այս ցեղը Հայաստանը կառավարեց Ռատիկանի կամ Վեսկեխանի պատուանունով<sup>1</sup>: Աշշոտ Ա. վերջապէս 885 թուին զրեթէ մի անկախ տէրութիւն կազմեց, որոյ մայրաքաղաքն եղաւ մի փոքր յետոյ, Անի, որնոր մինչև իր աւերակներումն անգամ տակաւին փառաւոր է: Բագրատունեաց ցեղը Արարատ նահանգին մէջ իր տիրապետութիւնը հաստակելուն պէս, միւս իշխանազն ցեղերն էլ թագաւորական թաղի ետելից լնկան: Ինչպէս որ հետեւեալ գարուն մէջ էլ տեսնում ենք, որ Հայաստանում հինդ վեց թագաւորութիւն է կազմուում: Արծրունեաց ցեղն առաջինն եղաւ, որ 908 թուին վասպուրական աշխարհին մէջ իր տէրութիւնը հաստատեց<sup>2</sup>: Մի փոքր յետոյ, Կարս, 968-ին,

1 Վետ կամ Բեսդ, արքունական աստիճան, Խան, Պիտ հրամանական

2 Այսօր Վանակ փաշայութիւնը.

Վիւնիք 970-ին, Լորի 988-ին : Ոշտունիք, Անձեացիք անկախ կացուցին իրանց և ստորին ազնուական իշխաններն ամէնքն էլ իրանց զլութոր թագ դնելու պատիւն կամեցան ունենալ :

Հայաստանու նման մի սահմանաւոր երկրի մէջ այս չափ բաժանում և պատերազմ զլիաւոր պատճառ եղան բոլոր իր քաշած թշուառութեանց, սրա հեականքն այն եղաւ, որ մետասաններորդ և երկուաստաններորդ դարերուն վերջերում բոլոր այս թագաւորութիւններն իրանց անկախութիւնը կորցրին և Հայաստան նորունց օստարներու լուծին առակ ընկաւ : Բայց ինչպէս, որ Հայք այս բոլոր թագաւորութեանց մէջ օքրինաւորը միայն Բաղրատունեաց ցեղին հաստատածը կը համարեն, նրա վրայ և ես մի հարեւանցի հայեցուածք կիրարձնեմ :

Աշոտ Ա. 859-ից մինչև 885-ը Հայաստան կառավարեց իրեւ մեծ զուքս : Աշոտ աէր լինելով մի ահազին ժաւանգութեան, որոյ մասին մի փոքր յառաջմի գալութար տունիք, և կարել լինելով պատրաստի ունենալ 40,000 մարդով մի բաշնակ բուն իրա յատուկ երկիրներից ժողովուած, բնականարար պէտքէր, որ մի մեծ նշանակութիւն, ունենար Արաբացի ձիավիէր թագաւորին մօտ : Յա էլ չկարողանալով Աշոտին մի հաշտարակ հպատակի տեղ զնել նրան թագաւորական թագ զըշկեց, որնոր Աշոտ չհամարձակեցաւ մերժել : Վասիլ Մակեդոնացի հաւատին էլ նոյնը արաւ : Այսպէս Աշոտ, թագաւոր պատկանելով, էլ աւելի քրութեամբ իր աէրութեան վրայ գարձրուց իր մատակրութիւնը : Մի քանի քաղաք մի քանի հարիւր աւանով, և զիւզով բնակութեան, տեղի հաստատեց ըիւրաւոր գալիք թականներու, որ իր հայրաբարոյ տիրապետութիւնը քաշում էր իր տէրութեան մէջ : Վաճառականնութիւնն էլ հշտացնելու համար, ճանապարհներ, կամուրջներ, իջեաններ շինել տուաւ : Երկրագործութիւնը, արուեստագիտութիւնը, ենինդանաբառնութիւնը յառաջ տանելու հոգ, տարաւ, մի քանի տարի յետոյ ելաւ, գնաց կոստանդնուպոլիս, ուր տեղ աւտով կայսեր հետ մի գաշնակցութիւն հաստատեց, շնմանապէս և վաճառականութեան համար էլ մի գաշնագրութիւնը 889 թուին մեռնելիս իր որդւյն Սմբատին թողուց թէե մի նորածաղիկ տէրութիւնուակայն բաւականին զօրաւոր :

Այսաւ Ա. իր սիրոկան հօր Աշոտի մահուան համար երեք տարի ամբողջ սուգ անելուց յետոյ, թաղաւոր օծուեցաւ 892 թուին : Իր տէրութեան միայրուց դուին քաղաքը, որն արաբացի Էմիրներուն բնակուած տեղն՝ էր, երկար ժամանակ խոյս տալուց յետոյ պատերազմ անելու Ատրպատականի Էմիր Օշինին դէմ. Դոցի մօտ մի արիւնաչեղ պատերազմի մէջ բոլորավին յաղթեց նրան : Մի փոքր յետոյ էլի զէնք առաւ ձեռին Միջազեաքի Էմիր-Ահմետի դէմ. բայց յետ քաշուեցաւ իր զինուորներից մեծ մասը կորցնելուց յետոյ, ոմանց մասնողութեամբ : Յետոյ Այսաւ անձամբ Վրաստան գնաց և այն տեղ իր ձեռքով իր մտերիմ բազեկամն ու հաւատարիմ գաշնակից Ատրներսէհը թաղաւոր պատկեց : 894-ին զոհ մեռաւ Վատապուրականի թաղաւոր Գաղկայ և իր հպատակ իշխաններու մի քանիսին նախանձութեամբը : Ատրպատականի Էմիրը նուսուփի. իր նախորդ Օշինի յաղթուելուն վրէժն առանելու համար, մի մեծ բանակի դլուին անցկացաւ և Հայաստան մտաւ, Գաղկայ և Հայ իշխաններու առաջնորդութեամբ :

Պիտի շարանակուի:

Գաղղիքականին թաղգմանուած :

1 Արադած կամ Ալակիազ լիուան ստորոտը Մասիսի դէմու դէմ.

Առ յարդոյ խմբագիր .

Ես անցեալ օրը մեր հին գրքերը կարդալիս ինձ պատահեց մէկ հնուի ծեռագիր զիրք մի, չորս հարիւր տարուաց, որի մէջ կան մինչեւ երկու հարիւրից աւելի աշխարհաբառ և գրաբառ տաղեր, որիցը երեկուը ահաւամսիկ արտագրելով յուզարկումիւմ զեր Յալզոթեան մօտ և կիսուանում ամենայն ամիս շարունակ արտագրել և յուզարկել այս տագերը և ուրիշ ուշագրուելինան արժանի բաներ, կինզում զեր պատուական լրագրումը արժան վարկանիք տագելու, մանուանդ այս արքեցութեան տաղը, որ շատ պատշաճ է զեր քաղաքին, զայտ չառ-աները կարդալով այս տաղը խրատուին:

8. U. Զիմիշիանց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՄԻ

Ի ՅՈՎ ՀԱՆՆԵՍԻ ԱՍԱՑԵԱԾ

Գուշակ հոգեւոր խրատ մի է,  
Անպիտան անձն իմ, լսէ՛.  
Զերդ պողաբեր ծառ ՚ի յարմատ,  
Ա՛ռ ՚ի քո սիրտ պատուաստէ :

Թէս սէր ունիս հետ Աստուծոյ,  
Դու զի ինին ու . . . . առել.  
Կինին է մայր ամեն մեղաց՝  
Զոր ամենայն գիրք վկայէ :

**Գինին շնութեան է օդնական-  
Սովորմական ախտն շարժէ.  
Գինին սպանումն զռդրէ,  
Թողթ թէ հոգւոյն քանի՞ չար է :**

Գիինին ախուցն է մաղվկաթ,  
Քան զդիւահար ու այլ չար է.  
Դասուց մի գլուխ ՚ի վայր բերէ,  
Զեւս մի ցաւօք վերաւորէ :

Ու հետ վնչայ քան զգայլ գաղան :  
Զկշտանալու զչափն չդիտէ .

Պիղծու մարմինն սերմանէ ,

Զաղքն ու զչարիքն շատցնէ :

Փսխէ, զերեսն ՚ի վերայ զնէ,  
Շունն դայ, զբերանն լիզէ .

Նա հանց գիտէ թէ զեր կինն է,

Նկետ զբերանն կու որդէ :

Անդ ճամբու լանիքն քալէ,  
Գէշ հեծկըլայ և ծռկատէ .

Զրազուկն աստի—անտի ձդէ ,

Ո՛վ հանդիպի, նա հարկանէ :

Բարձր պատեր ՚ի վեր հանէ,  
Յառ ջեն կանանչ դաշտ ցուցանէ .

Յանկից ՚ի վայր զլսիվարէ ,

Ի յարեւուն շուտ մի հանէ :

Պողոս առ մեզ կու հրամայէ,  
Հարբեցութիւնն խիստ չար է .

Ո՛վ զարբենայն հալալ է ասէ ,

Զերդ շունն ՚ի տէրն կու հաչէ :

Գիինին մարդոյ ամօթ բերէ,  
Եւ ՚ի լեզու չար արկանէ .

Քան զդինին յետեւ հային ,

Խրկու երեք այն անշահ է :

Խել Յովկաննէս կարծաբան է,  
Ով որ լսէ, նա շատ շահէ .

Ով որ խրատիս համն ճաշէ ,

Զարբայութիւնն ժառանգէ :

## ՏԱՐԱՎՈՒՄ ԱԽՐԱՅ

Ծավալ աչք, ամ քանի նայիս խոլորով,  
գաս, նստիս զավերդ ածես խնձերով  
Նրբ որ գաս անցնիս ճեմիս նազելով:  
Տանիս շունչս խելքս ու հողիս ճորով:

Ծով աչք, զետ ճրագի անց եկեալեմ,  
Քո սաստիկ սիրուդ հիւանդացեալեմ.  
Հաքիմ ու բժիշկ զքեզ լոեր եմ.  
Քո գալըդ ինձ մօտ խիստ կարօտեր եմ:

Ծով աչք, զետ սիրով գու զիս կու կամիս.  
Կամ ուզես երթայ հասրաթն սրտիս.  
Ա՛ռ քո թեկին տակն սպինդ պահէ զիս.  
Մազերովդ սրբէ զքրտունքն ճակտիս:

Լուսին արեգակն առ քեզ եկեալեն,  
Սիրովդ ՚ի մազերն ՚ի վազլր կախեալեն,  
Աստեղք ՚ի քո ճակատն բոլորեալեն,  
Զետ հարբած ՚ի քո սիրուդ վառեալեն:

Երեսդ է պայծառ, ճակատդ է զետ սար,  
Ակռադ մարդարիս, շրթունքդ է շարպաթ.  
Տուր սլաքմ երեսէդ, քէմ չէ ղիյամաթ.  
Թէ չէ կու մեռնիմ կու մնամ հասրաթ:

Երեսդ է կարմիր քան զիսայտ խնձոր,  
Բերանդ է փոքրիկ, դնչեկդ է բոլոր.  
Դերձան մազերդ արեր քո վզեդ ոլոր,  
Քո սէրդ արեր զիս շոլոր մօլոր:

Երեսդ է վառի քան զկայծ կարմիր,  
Ինձ քո ծառային քիչ մի մօտ կեցիր.  
Առնում ու պաքնեմ դու ՚ի սուս կեցիր.  
Մրատվ կու սիրեմ դու զքեզ խմացիր:

Երեսդ է կարմիր քան զնոնենի,  
Ունքերդ է կամար աչուիդ մուղալի,  
Քո տէրտ է բռներ, սրաիկս կու էրի.  
Հարբած ու մէջլուն քան զհայտարի:

9 Կայիմ, գեղաղէշ արմաւենի ծառ,  
Նոնենի, դրախտ ու սէլվի չինար.  
Ակամբ զարդարեալ ես ոսկի խանչար,  
Զիս մի սասանիր մէտէդ չե նիհար :

10 Եթին է լեզուդ, որ կու բարբառէ,  
Նիշտար գուն երեսդ զիս կ'խոցէ,  
Մէկ խօսքդ բոլոր քաղաք կու աժէ,  
Զերայ քեզ նման խակի ծնեալ չէ :

11 Մաղերդ է փայլուն զետ ծիծուան թէ,  
Ունքերդ է քաշած զետ խայալի թէ,  
Աչքերդ է պայծառ զետ ոսկի կանթեղլ  
Երթունքդ է բարակ զետ աղեղան թէ :

12 Հայ իմ աննման խիստ աննման ես,  
Ոտից մինչի զլուխ հաւասար ես :  
Զինչ որ կու հաղնիս նէ կու վայլես,  
Կարօտ մի պահեր քո ծառայն եմ ես :

13 Հայ իմ աննման չկայ քեզ նման,  
Ո՛չ 'ի Խորասան ո՛չ 'ի Հունաստան,  
Ո՛չ 'ի Ֆռանկստան, ո՛չ 'ի Պարսկաստան,  
Ո՛չ 'ի Եամաստան ո՛չ 'ի Հայաստան :

14 Քեզ նման չկայ 'ի յորդիս՝ մարդկան,  
Դով ծով ես պահըրին աչքերդ է միստան.  
Բոլորեալ լուսին .... արեգական,  
Երբ զքեզ տեսնամ աչքերս լոյս տան :

15 Լուսին քո ծծերդ է ըխասյ խաչեր,  
Խունկ ու մոմ առեր քեզ ուխտ եմ եկեր,  
Զեռքս 'ի վեր տարեր աղօթք եմ արեր  
Ենորհդ է հասեր ցաւս է փարատեր :

Խորասան ու Հինտ, Պաղտատ ու Ֆարսին  
Մարաց Արապնին, Հառվլը լուչին.  
Կոստանդին մեծին ու Թէոդոսին,  
Թէ միաբանին չին քո տեսուդ զին :

17 Կամ Եւայ ես Դուն կամ Հարսն Ասյի,  
կամ Եսթեր ես դու և կամ Բերսարի, Ճայ  
կամ Օլօպիայ Հռութ նազելի;  
Քեզ նման չկայ յազգս հողածնի :

18 Ես խե եմ դարձեր 'ի քո շատ սիրուն,  
Համեր ու մաշեր 'ի քո կարօտուն.  
Ինձ ճարակ մ' արա քո խաս արեուն,  
Թէ չէ կու մեռնիմ կրակ է քու հոգուն :

19 Քո անուշ լեզուեգ ես խե եմ դարձեր,  
Միտքս է մոլորեր ու խելքս է կորեր.  
Իմ սէջտան ու քունս է հատեր,  
Վախեմ թէ լեռներ ընկնեմ ու սարեր :

20 Բարակ նայելուգ այլ չեմ գիմանար,  
Աիրոս կու ճղբեմ արիւնս քել հալալ.  
Կամ կիրթամ կրնեկնիմ ես ծովերն 'ի վայր,  
Ինձ ճարակ մ' արա քո հոգւոյն համար :

21 Աչերս է կարօտ 'ի քո շատ սիրուգ,  
Սիրոս է ասորեկուս քովանց նատելուգ.  
Մէկ ափդ երեսիդ զազտուկ նայելուգ,  
Լոյս երեսդ բաց սղորմէ գերւոցդ :

22 Մեր Տէրն է բազմեր 'ի բարձր աթօռանին,  
Աջողն է օքհներ զզատկեր քոյին:  
Զայնիդ հաւասար չէ տուտի զումընին,  
Ճերմակն 'ի ներքոյ կարմիր վթանին :

23 Ամ քանի՞ կանչես ողորմու լալի,  
Երբ ճարակ չկայ ոչ ողորմունի.  
Անկրակ բռներ լերտիկս ու կայրին,  
Քո բանն 'ի յԱստուած մնաց այ զերի :

24 Քանի՞ ախ ասես այ խեղճիկ Վաղար,  
Քանի որ հասար իսկի չհանդար,  
Գիշեր ու ցերեկ սիրով վառեցար,  
Տէր մեղայ ասա զնա ոտն 'ի վայր :

Ճ Ա Ն Գ Ե Ս

ԱԶԳԱՅԻՆ ԱՅՃՄԵԱՆ ԱՆՑՔԵՐՈՒ

ԶԵՅԹՈՒՄԻ ԳՈՐԾԸ



ԿՈՍԴԱՆԴԱԽՊՈԼՍԻՑ ԿԿՈՂ Ճանապարհորդները ԶԵՅԹՈՒՆԻ մասին հետեւեալ տեղեկութիւններն են հաղորդում մեզ։ Ներսէս վարդապետն, որ Ատանայի Ազգայնոց մէջ երկարաւակութիւնը դադարեցնելու և Մարաշումը լինելուք անձնամուլինն ներկայ գտնուելու համար իրկուել էր, բ. զբան հրամանագրով։ Ատանայի Ազգայնոց երկարաւակութիւնը դադարեց յետոյ Սիսէ է գնում և այն տեղ Եպիսկոպոս է ճեռանագրուում զանց առնելով իրա ազգային վարչութեան կողմէն յանձնուած ծանր պաշտօնը կատարելու պատճառ բերելով թէ չէ համարձակուել Մարաշ զնալու մի քանի բանաւոր պատճառներու համար։ Ներսէս վարդապետն (այժմ եպիսկոպոս սին) բանաւոր պատճառներուն տռաջինն է եղել յանձնաժողովին ԶԵՅԹՈՒՆԻ գործը վերջացնելը և երկու Հայերու և մի Տաճի մահուան դատապարանը և չորս ուրիշ Հայերու էլ տուգանքի տակ զցելը։ Երկրորդն՝ իր այն տեղ երթաղին ոչ միտյն վատանգաւոր է եղել, այլ նոև անդարդիւն, այն պատճառով, որ պիտի ստիպուի եղել ստորագրելու յանձնաժողովին տեղեկագիրն, որնոր անիրաւ քննութեանց վրայ է եղել շնուրած։ Վերջապէս վարդապետն վախաքն էլ է եղել, որ յանձնաժողովը կ. Պօլիս փոխադրուի։ Ազգային վարչութիւնը Ներսէս վարդապետին բանաւոր պատճառներից չհամոզուելով մանաւանդ, որ նրա գլխաւոր ջանքն այն է եղել որ շուտով Պօլիս դառնայ, պատուէր է գրել նրան, որ Ատանա մնայ մինչև, որ նոր հրահանգներ ստանայ ու ինքն էլ անմիջապէս թ.

զրան մի բողոքագիր է տուել Մարաշու յանձնաժողովին բըռ-  
նած բռնական և ապօրինաւոր ընթացքի մասին. Հայերը բան-  
տարդելու և տանջելու և նրանց պարտական հանելու խոր-  
հրդին դէմ: Իսկ Ներսէս վարդապետին առաջին և վերջին  
գործնէ ընում: Սայ կաթուղիկոսի ձեռամբ դադանի և շտա-  
պով եպիսկոպոս ձեռնաղբուիլը, մի դէն թողելով ազդին կող-  
մէն իրա յանձնուած սուրբ պաշտօնը կատարելու և ընդդէմ  
ազգային վարչութեան կամացը վեր կենալ փութալ կ. Պօլիս  
դառնալը:

**Այսպէս մեր Պօլսոյ ազգայինք իրար անցած այս ցաւալի**  
դէպքերուն մի յաջող ելք կամ վերջ տալու եռանդովն ու-  
ջանքովը, ամէն հնարք և ամէն կերպ գործ են ածում: մինչեւ  
Հռովմայական աղղայնոց նոտիսագահ գերապայծառ Հասունեանն  
անգամ այս պարտագայում ամէն հարկաւոր խորհուրդ և օդ-  
նութիւն հասցնելու հետամուտ է եղել մեր Զէյթունի դըժ-  
բաղդ գործին :

**Զէյթունի դէպքերի պատահած օրերից Պօլսոյ ազգա-**  
յին վարչութիւնը մի շփոթ և տարտամ վիճակումն է  
ընկել: յառաջաց էլ տկար լինելով, փամ զի իր պաշտօնն  
ազգից չէր առած, այժմէլ բոլորովին երկշոտ է եղել և միշտ  
ահուդողի մէջ Բ. զրան ընտրութեամբ պաշտօն վարելուն:  
Այս հանգամանքը կարի ծանր և գժար գալուն հարկաւ,  
ինչպէս ամէն քրիստոնեայներու ևս առաւել համազգի քրիս-  
տոնեաներու օգնութեան կարօտ եղաւ ազգը, ուսաի իրեն  
համազգային և քրիստոնէական գործք Հայաստանեայց և Հը-  
ռովմէական եկեղեցւոյ Հայք իրարու մօտեցել են իրար օգնելու  
յանուն քրիստոնէութեան և ազգայնութեան: բայց սրանից  
յայտնի է, որ Մարաշի մէջ Աիբանանու Հռովմէական կաթո-  
ղիկոսից կախում ունեցող մի առաջնորդ կայ Պետրոս անուն՝  
որ անգ բաւ ականին Գաթուլիկ ժողովուրդ էլ կդանուի, որտեղ  
իրատ վտանգաւոր վիճակումը կընկնին, եթէ Զէյթունի շուքը  
նրանց վըսցից պեկսի և շրջակայ աւաղտիները համարձակ  
զըսւի վերցնեն և նրան վրայ թափուին: Հարկաւ գերապայ-  
ծառ Հասունեանը թէ հայկական ազգայնութեան անունի  
պահանջումից թէ Աիբանանու կաթուղիկոսից վերին մի ազ-

դեցութիւն ցոյց տալու և թէ Բ. զրան առջև կարեորութիւն ստանալու գիտմամբ. Զէյթունի գործը երկու ձեռքով է բռնել, ինչպէս որ Բ. զրան դէմ էլ է բողոքել, որ անպատճառ հինգ մաննաւոր յանձնաժողովի ձեռքով Զէյթունի կոտորածին պատճառները քննուին երկիողմանի անդամներու ներկայութեամբ և Զէյթունի պաշտումը վերցուի : Այս այլեւայլ մասնաւոր և պաշտօնական միջամտութեանց և ջանացողութեանց վրայ Բ. գուռը սկսելէ մի փոքր մտածելքանին վրայ. թէն շատ ուրախ էր, որ բոլոր Զէյթունի սարերը կործանուէին և բնակիչքն էլ արից անցկենածլով բնաշխնջլինէին :

Իսկ Ներսէս վարդապետը եպիսկոպոս գտած Պօլիս է գալի, իր հետը բերելով նաև մի Զէյթունցի բանիբուն, վաստաբան և անվիշեր եկեղեցական Տէր Մովսէս անուն, երկու էլ իշխանք, որոնց միոյն անունն է եղել Աստուածատուր Աշղայ Եէնի Տիւնեանց և միւսին անունը Երով Յզլու Ղազարուս Մրանց յանկարծակի Պօլիս գալը զարմանք է բարածառել Ազգային վարչութեան, թէն Ներսէս վարդապետը աբդարացրել է իրան ետ դառնալը, ասելով. թէ ինքը չէ կարող եղել անդամ լինել մի այնպիսի յանձնաժողովի Մարաշի մէջ, ուր տեղի թու ըք բնակիչքը, որոնք Հայոց արիւնն են համենաւմեղելիսել, ժամանակով Անգղիպեացւոց հիւպատոսն իր ընտանիքովը միատեղ այլմելն ողջ ողջ և հիմայ էլ նոյն յանձնաժողովին անդամեն դառել. մանաւանդ տեսնելով, որ Աշըր փաշան յաճախ մարդ զբկումէ եղել Զէյթունցւոց երկու իշխանները ուղելու. ուստի սրահամար յարմար են դատել վեր կենալ և Պօլիս գալու իրանց աղէտքներուն դարման Բ. դրան պաշտպանութեան դիմելով խնդրել զանց առնելով Մարաշ գնալը միայն մի բողոքագիր գրելով Աշըր փաշային յանձնաժողովոյն դէմ :

Այս իրին վասայ Պօլսոյ Ազգային վարչութիւնն երկար խորհուրդ անելուց յիտոյ, արժան դատելէ Տէր Մովսէսը և երկու իշխանները Տեղապահի և Ներսէս վարդապետին առաջնորդութեամբը արտաքին գործոց պաշտօնեայ Աալի փաշային Ներկայացնել յատուկ յայտագրով : Աալի փաշան նախալը վապահին ընդունելով իր ներկայութեամբ, Նրան իր սրտմք

տութիւնը յայխնելէ ԶԵՅԹՈՒՆցոց ոմանց Փարիզ գնալն ու  
Նաբոյլէն կայսեր յառաջ ներկայանալը Բ. զբան դեմ բողոք-  
քելու նոյնպէս և Աւոն իշխանի վրայ էլ խօսք է արել : Տե-  
ղապահն այդ բաները ափօրինուոր և անընդունելի են ազգային  
վարչութեան պաելով պատասխանելէ փաշային : Յետոյ իշխանը  
եղ յերս մատել փաշան նրանց սուրջ և խաչվէ մեծարկեցնե-  
լուց յետոյ Տեր Մովսէս քահանային խօնեցնելէ առեկլ բա-  
նիրուն և անվեհէր քահանան բանին եղելութիւնը մի առ մի  
պատմելուց յետոյ փաշային պատասխան է արել : Թէ Մարտ-  
շու յանձնաժողովին բնուութիւնները վերաբնիւլու Տամար  
թէ Բ. զբան և Հայոց կողմէն նոր պաշտօնեայներ պիտի զօր-  
կուին իֆ Մարտշ և թէ պաէն բան արդարութեամբ և անառ-  
չութեամբ պիտի դատուի :

Երկրորդ օրն էլ առաջնու պատշտօնեայ Ֆռւատ փաշան Ներ-  
սէս վարդապետին է ու պել իրան ներկայանալու : Ներսէս վար-  
դապետն էլ գնալով մեծ պաշտօնէին յառաջը մասնաւորա-  
պէս ԶԵՅԹՈՒՆի և ընդհանրապէս բոլոր Հայոց չափեաց և  
աղետից վրայ նկարագրութիւն անելուց յետոյ մի գարման է  
խնդրել օրնոր մեծ փաշան խոսացելէ անպարհառ անելու :  
Այս մինձակումն է եղել գանուում այսօր ԶԵՅԹՈՒՆի գործը-  
երը յանկարծ պաշտօնէից փոփոխութիւնն է պատահել Ֆռւ-  
ատ փաշան պաշտօնից ընկելէ և նրա տեղն է անցկացել Քիառ-  
միլ փաշան Ապէ փաշան իր տեղն է եղել բայց տակաւին իր  
խապամունքը չէ փապարել : Թէ և Մարտշումն Աշըր փաշան,  
որ ԶԵՅԹՈՒՆի վրայ ծանր ծանր պահանջմունքներ է եղել ա-  
ւելացնում է և ԶԵՅԹՈՒՆ պատապամաւ որներ խրիելով իշխան-  
ներն իրանց բնուանիքներով պահանջում է եղել իրա ձեռին ըն-  
կած ԶԵՅԹՈՒՆցիներն էլ բանսերումն է եղել սպանումիւ տան-  
ջում : Այս բաներն իմանալով՝ վարչութիւնը նորունց Բ. զբան  
բօղքել Աշըր փաշային ընթացքին զեմ : Ասդի փաշան էլ պա-  
տասխանելէ թէ Տեռագրով իմաց է արել Մարտշ յանձնա-  
ժողովին որ գործողութիւնը զագարեցնէ և խօսք է առել  
նորունց Տեղապահին և ԶԵՅԹՈՒՆի իշխաններուն : Թէ նոր  
պաշտօնակալներ պիտի կը կետ շուալ յանձնաժողովին գործը  
վերջացներւ Տամար :

Պօքնոյ աղջոցին վարչութիւնն այս զբութեամ մօջնէ եղել մինչև այսօր, որ գանուռու մէ շատ ժամանակից հետէ, Սահմանադրութիւնը դեռ չէ հաստատուել կառավարութեան կողմանէ, և կարծուումէ եղել առ հասարակ թէ երբէք չէ հաստատուիլ քանի որ Աալի փաշան իր արագին գործոց տեսչութեան մէջ կմայ եղել ուստի Ազգային վարչութիւնն թէւ եղած ազգային գործքերը նայումէ եղել, սակայն անկարող և անդօք է եղել Հիմնաւեհը նորոգութիւններ անելու և կարգադրութիւններ սնօրինելու Բ. գրան գործիքը Ընելուն և նրա ընտրութեամբ ընտրուելուն և աղջին անընդունելի համարուերուն համար : Աւստի պատրիարքարանին իշխանութիւնն ամէն կողմէն ջիզերը թուլացած ամէն վիճակներու առաջնորդութիւնը մի մի ինքնապլուխ և ինքնակայ, բլունակալներ են գառել և բոլորովին կենդիսնական վարչութեան հետ յարագերութիւններն ու, հազորդակցութիւնները գագարեցին են, իրանց կամքին վարելով և սնօրինելով ամէն ազգային գործ : Բողոք, գանդատ, ողբ ամէն վիճակից լսուումեն եղել, պատրիարքարանն էլ բոլորովին նիւթական և բարյագան օկնութենից զուրկ մնալով, ոչ մի օգնութիւն չէ կարող եղել հասնել մեր ողջրմելի ազգայնոց : Այս ցաւալի վիճակն օրէցօր զգալի լինելով Պօլոյ մեր ազգայնոց, կամենումեն և զեղել Սահմանադրութեան հասատուելուն չնականելով պատրիարքի ընտրութիւնն անեն, ումանք էլ կամենումեղել որ մինչև Սահմանադրութիւնը չհաստատուի, ոչ պատրիարք լինի և ոչ ազգային վարչութիւնն ակայն այս մօներս կարծուումէ, որ մի քանի հին մեծերու զըգմամբ տեղապահը մի լնդհանուր ժողով գումարէ և վերջապէս ազգային վարչութիւնը մի բանի նմանեցնեն :

**Հեակեազ սպաղեր նամակը:** որ Պօլսոյ ՇԱՀԻՌ՝ անուն ընալիք օրագիքը առ ժամանակեայ վարչութեան գիտողութեան էներկայացնում յիշեցնելու համար միանդամայն Հայոց ազգին թէ ինչ պիսո՞հի իր հայրենեացը Հայութանի մասին և մենք

նրանից քաղելով յառաջ կբերենք մեր «Կռնկան» մէջ Դուսաստանեայց Հայերուն նոյն և մի պաշտօնը կատարելու՝ մեր մայր հայրենեաց տարաբաղդ վիճակին նկատմամբ :

## Ո Զ Մ Ի

Այս գիւղաքաղաք՝ որ Ախթամարու վիճակի գլխաւոր գիւղն է և շատ անգամ նոյն աթոռը մեծամեծ վտանգներէ ազատած է, միմիայն նոյն Ոզմեցոց շնորհիւ : Այս միջոցիս իրենց դրացի Քիւրտերէն սաստկապէս նեղուելով՝ Սղէրտու փաշային կդիմեն, փաշան էլ գործը միւտիւրին կձգէ : Ապստամբ Քիւրտերն՝ Ոզմեցոց արարմանցը դժկամնակելով՝ զօրաժողով եղած զիւղին վրայ կուգան, և կատիպին որ արքունիք բոլոր տուրքերը իրենց վճարուի, նաև քանի հատ ևս անկիւնաւոր հրացան, Հայերը կպատասխանեն թէ մենք Բարձագոյն զրան հպատակ լինելով՝ պարտաւորուած ենք, ինչպէս հիմա ասկէց ետև ալ մեր տուրքը նորին տալ : Ապստամբները կը պնդեն թէ՝ գուք մեր հպատակն էք հին ժամանակներ է, մեր նախնիք ձեղմէ խարճ ու խարոժ առած են, կպարտաւորիք մեզ ևս տալ, մենք ոչ թէմզիմէթ կճանաշեմք, և ոչ թագաւոր : Բանակուիւն զինակուիւ կդառնայ, որով երկու կողմանէ մարդասպանութիւն լինելէն ետև, ապստամբ Քիւրտերն կըստիպուին ետ քաշուիլ : Գաւառին՝ միւտիրը Ճիշտ եղելութեանց տեղեկութիւն շառնելով, փոխանակ ապստամբ շարածձիկ Քիւրտերն պատժելու՝ (թերեւս անկարող) ապստամբութեան գործն Հայերու դարձնելով՝ զօրաժողով կլինի. անկարդ հրոսակներով Հայոց վրայ գալ և բնաջինջ ընել ըստ ասից թէ՝ (զօռ էշէյէ կիթ մէզ փալանայ եափրշը) : Խղճալի Հայեր՝ առաջիկայ մեծ վտանգէն զարհուրած, և որովհետև ոչ իրաւունք փնտռող կայ և ոչ արդարութիւն, ոչ հպատակի ձայնին լուզ՝ և ոչ օրինապահութիւն. անոր համար իրենց բոլոր հայրենական ստացուածք, տուն և ընտանիքը միայն առած փախառեամբ իրենց հաւատքը ապրեցնելու ճար կը փնտռեն. այսպէս մէկ մասը գէպ 'ի Երեան, մէկ մասն դէպ 'ի

Վան, Ախթամար, Նարեկ և Վանայ միւս գիւղօրէք, յիր ու յան եղած են, իրենց մնացեալ կարտսիք և արտորէք հրոյ լուցկի թողլով:

Վեց հարիւր անուոօր Հայաբնակ դիւղ մի այսպէս անկար-  
գութեան զոհ եղած իւր տարերքներէն քայլայեալ և բա-  
ժանեալ ողորմելի ախսարանի մը ներքեւ կը հեծէ : Դէպ ՚ի  
Ռուսաստան գաղթող մասէն . . . . .

Ալսթամարու աթռու՝ որ կենօք չափ պարտաւոր էր իւր  
հարազատ և անձնադիր որդւոց իրաւունքը պաշտպանել,  
բաց ՚ի քանի մի երևելեաց՝ միւսներուն ամենեին երեսը չը-  
նայեցաւ և ասպնջականութիւն ցոյց չտուաւ. վասն զի այս  
անգամ եկող Ոզմիցիները առ ջի անգամներու նման Ս. Աթռ-  
ոին ընծայ ոչ (չերսի) հինգնոց բերած են հետերնին հա-  
րիւրներով՝ ոչ ամիկերով մեղք, ոչ թուզ, ոչ իւզ, և ոչ ալ Ա-  
թռուն հիմայ իրենց օպնականութեան և պաշտպանութեան  
կարօտութիւն ունի : Ահա քեզ հովիւք որք զանչինս իւրեանց  
վարժեայ են պահել . . . :

Հայոց և Հայաստանի այժմեայ քանակութեանը նայելով  
այս հարուածը հաւասար է Երուսաղեմի և Մոկուայի հար-  
ուածոց վասն գե Ոզմի գիւղի հրկիղութեան և աւերման  
ծուխն դեռ բռնած և պատած է բոլոր Քիւրտիստանի երեսն  
և նոյն ապստամբ Քիւրտերու կտտաղութեան ալեքսներն ՚ի վեր  
՚ի վեր բարձրացած մինչև Վանայ քաղաքիս սահմաններն ան-  
գամ կծեծեն . . . . :

Յաւալի անցք, եթէ այս գաղթականութեան առաջքն չառնուի, և բարեխնամ կառավարութեան ուշադրութիւնն ասոր վրայ չդառնայ, անշուշտ բոլոր Քիւրտիստան իւր մերձաւոր սահմաններով՝ այն անցքն պիտի կրէ՝ ինչոր կրեց Հայաստանի Առապատական նահանգն 1827-ին մեծապէս . . . . .

## ՏԳԻՒԾՈՒ ՀԱՅՈՅ ՔԱՏԵՐԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

----- 100 -----

ԱՅՐԿԱՑ 1863 թու ին սկիզբը ՏԳԻՒԾՈՒ աղջայնոց մեջ  
թատերական խաղերով բացուեցաւ մի խռմբ աշխոյժ և ե-  
ռանդուն երիտասարդներ ամսոյա 3-ին քաղաքիս քաղաքական  
թատրոնու մը գ. Խօրէն վարդապետին Արշակ Բ. ողբերգութիւնը  
ներկայացրին Հայաստանու արձակ լեզով թարգմանուած և  
մի քանի նոր երգեր աւելացրած է երիտասարդներուն ներ-  
կայացրումը հանդիսատեսներու սպասածից շատ աւելի լինե-  
լուն թատրոնի աեսարաններու շքելութիւնն և երգերուն ա-  
խորժալի եղանակները ընդհանրապէս հանդիսատեսները գոհ և  
բաւական արին բայց ընդդեմ մեր կարծեաց Գեր. Խոր. վար-  
դապետին այս Արշակ Բ. ողբերգութիւնն ամէն մասամբ ան-  
հաւանելի եղաւ հանդիսականաց թէ եւ ԵՄ ասեաց Ազատնին այս  
ողբերգութեան հրատարակման ժամանակ նրա ամէն մի մասն  
առանձին առանձին գովելէր և մեզ իրեւ մի հատընտիր գործ  
էր ներկայացրել գովեթէ հաւասարելով այն Եւրոպից առա-  
ջել կարգի բանաստեղծներու թատրոներու հետ :

ՏԳԻՒԾՈՒ Հայ հասարակութեան այն մասն որ չէր կա-  
րող եղել այս թատերական խաղը տեսնելու թատրոնին փոք-  
րութեանը համար մի քանի օր յետոյ խնդրեց նոյն երիտա-  
սարդներից օր նորունց ներկայացնեն իրանց խաղն և իրանք  
պատրաստ են ախորժանոր աեսնելու և յիրաւի ութ օր յետոյ  
ամսոյս 7-ին երիտասարդ թատերգակները համարձակեցան նո-  
րունց երեխէ քաղաքական թատրոնի բեմի վրայ բայց իրանց  
համարձակութիւնը պահուեցաւ վատն զե զրեթէ լիովին  
բաւականացրին հան լիսականներն և կրկին կրկին անզամճա-

փահարութեան արժանի եղան : Մինչդիս Արշակ Բ. ողբերգութեան տպաւորութեամբը, Տփխիսու Հայ հասարակութեան երեակայութիւնն զեազնւած էր, զեզարուեստներ սիրող երիտասարդներու մի ուրիշ խռումք, քիչ ժամանակուայ միջուցում քաղաքական թափրոնումը Յարգոյ Պարոն Պատկանեանցի Շու շամիկ ողբերգութիւնը երեք արարուածով ներկայացրին նոյն ամսոցին 28. ին ողբերգութիւնն արձակ էր զրուած և մի քանի երկեր և առանաւորներ արարուածներումը միացրած էր : Բայց գժիազդաբար հատուածը կարի տշնարօրէն լեզուով դրուած լինելուն կամ թէ ներկայացնով երխասաարգներուն քիչ ժամանակուայ միջոցում մի քաղաքական թարոնի բեմի վըսայ, առաջն անդամուայ համար փոքանելքն, կամ թէ գրլ խաւորապէս, ողբերգութեան կանանց մասն էլ երխասաարգները ներկայացնելու համար, հանդիսավորնաց ոչ այն չափ ախորժելի եղաւ, որչափ, որ կապասուէր Յարգոյ Պատկանեանցի թատերական խաղերու համար ունեցած ջանքիցն ու եռանդիցը :

Պ. Մ. ՏԵՐ ՄԻՔԱՅԻԼԵԱՆՅ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

## ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՆ ՈՒ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ

ՏՓԽԻՍՈՒ Հայ հասարակութիւնն ազգային մտաւոր լուսաւորութեան միջ յառաջ գնալու համար նորերումն մի նոր միջոց էլ ունեցաւ : Յարգոյ Պարոն Միստք Տէր Միքայէլեանց և Ընկերութիւնը - Տփխիսու Հայ հասարակութեան և մանաւանդ ամբողջ հիւսիսային Հայաստանցոց հայերէն գրեանք, օրագրեր և ուսման վերաբեալ բաներ մատակարարելու համար, մի գրավաճառանոց և մի ընթերցարան բաց արև այս օրերում : Գրավաճառանոցում, պիտի գըտնուին ամեն տեսակ Հայկական գրքեր, որ անդ որ տպուած են, ընթերցարանումն էլ ամեն տեսակ օքագրներ ամեն տեղից բերուած բացի սրբնից, յիշեալ ընկերութիւնը յանձնառու

Կ լ պիտի լինի ամբողջ Հայաստանում և Արաստանում գըտ-  
նուող հայկական գագրոցներու համար որ և է հարկ եղած  
թէ հայոց թէ Ռուսաց և թէ այլ լեզուներով զբքերը  
բերել տալու թեթև գնով նոյնպէս և յանձնառուն է լինում  
րոլոր Հայոց օրագիրները Հայաստան ցրուելու հեշտ ճամբով ;  
Յիրաւի այս ընկերութեան գործն ու նպատակը շատ նպաստա-  
ւոր է մեր ազգայնոց համար և շատ էլ կարեոր այս ժամա-  
նակներում, որ մեր մէջ զրեթէ զբքերու մեծ թանգութիւ-  
նից ամենահարկաւորիցն էլ զրկուել ենք , ուստի յաջօղու  
թիւն կմաղթենք այս ընկերութեան և հիրաւիրենք բոլոր  
ազգայնոց , որայս ընկերութեան իր գործը շինելուն և իր նը-  
պատակին . հասնելու նպաստաւոր լինին , բանալով նրան հեա-  
մի բանուկ առուտառը զբքերու , օրագիրներու և ուսման կե-  
րաբերեալ ամէն բաներու համար :

---

ԽՄԲԱԳԻԹ ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԵԳԵԱՆ.

---

ՀՐԱՏԱՐԱԿԻՑ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՆՖԻԱԼԵԱՆՑ

ОДОБРЕНО ЦЕНСУРОЮ. Тифлисъ 30 Января, 1863 г.